

# ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ՆԵՂԱՅՈՂ ՏԱՐԱԾՔԻՑ ԴԵՊԻ  
ՀԵՏՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՏԱՐԱԾՔ.  
ՎԵՐԱՊԱՏԿԵՐԱՅՆԵԼՈՎ  
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ  
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ՈՒ  
ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ





ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ՆԵՂԱՅՈՂ ՏԱՐԱԾՔԻՑ ԴԵՊԻ  
ՀԵՏՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՏԱՐԱԾՔ.  
ՎԵՐԱՊԱՏԿԵՐԱՅՆԵԼՈՎ  
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ  
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ՈՒ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Ջեկույցը հիմնված է** «Հետազոտություն և կրթություն՝ հանուն Հայաստանում քաղաքացիական հասարակության կարողությունների զարգացման» ծրագրի շրջանակներում «Սոցիոսկոպ» հասարակական ուսումնասիրությունների և խորհրդատվության կենտրոնի իրականացրած հետազոտության վրա:

**Ջեկույցը հեղինակեցին** Ժաննա Անդրեասյանը, Աննա Ժամակոչյանը, Արմինե Իշխանյանը, Արփի Մանուսյանը և Սոնա Մանուսյանը:

**Հետազոտական աշխատանքին մասնակցեցին** Էդուարդ Դանիելյանը և Մարիամ Խալաթյանը:

**Հետազոտությունն իրականացվել է** Հայնրիխ Բյոլ հիմնադրամի Հարավային Կովկասի տարածաշրջանային գրասենյակի ֆինանսական աջակցությամբ: Ջեկույցի բովանդակությունը կարող է չհամընկնել հիմնադրամի տեսակետների հետ:

**Շապիկի պատկերը՝** Նարեկ Ալեքսանյանի  
**Շարվածքը և ձևավորումը՝** Նորա Գալֆայանի

*«Սոցիոսկոպի» հետազոտական թիմով շնորհակալություն ենք հայտնում բոլոր անհատներին ու կազմակերպություններին, որոնք աջակցել են մեզ այս աշխատանքի իրականացման ընթացքում: Խորապես շնորհակալ ենք մեր հարցազրույցների բոլոր մասնակիցներին՝ ակտիվիստներին, հասարակական կազմակերպություններին, ինչպես նաև դոնոր կառույցների ներկայացուցիչներին, որոնք սիրով համաձայնեցին կիսել իրենց խորքային պատկերացումները, մտահոգություններն ու տեսակետները հետազոտության թե՛ նախահեղափոխական, թե՛ հետհեղափոխական փուլերում: Հուսով ենք, որ այդ քննարկումներում համատեղ ձևավորված և այս զեկույցում արտացոլված գիտելիքը կծառայի որպես օգտակար ռեսուրս քաղաքացիական հասարակության խմբերի հետագա գործողությունների համար՝ ուղղված Հայաստանում ժողովրդավարության, մարդու իրավունքների և լավ կառավարման ամրապնդմանը քաղաքական ու սոցիալական փոփոխությունների այս կարևոր փուլում:*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումների ցանկ

Ներածություն	8
<b>1. Հայաստանի քաղաքացիական հասարակությունը հեղափոխությունից առաջ</b>	<b>16</b>
1.1. Քաղաքացիական հասարակության և ակտիվիզմի գլոբալ համատեքստը. համառոտ ակնարկ	17
1.2. Քաղաքացիական հասարակությունը նախահեղափոխական Հայաստանում. մտահոգություններ, կարողություններ, փոփոխության հեռանկարներ	19
<b>2. Հայաստանյան քաղաքացիական հասարակությունը հեղափոխական անկյան տակ</b>	<b>32</b>
2.1 Մոբիլիզացում և շրջանակում	33
2.2. (Ինքն)անդրադարձներ հեղափոխությունից հետո. քննարկելով նոր իրավիճակը ՔՀ ներկայացուցիչների հետ	42
2.3. Քաղաքացիական հասարակության մտահոգություններն ու ժամանակավոր կառավարության ծրագիրը. երկխոսության և տարամիտման տեղեր	61
2.4. Հայաստանի շարունակվող հեղափոխության մարտահրավերները. էմբլեմատիկ կոնֆլիկտներ	76
<b>3. Հայկական հեղափոխությունից հետո. քաղաքացիական հասարակության փոփոխվող տարածքը</b>	<b>88</b>
<b>4. Ամփոփում. առաջարկներ և հետագա անելիքներ</b>	<b>100</b>
Գրականություն	106

# ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

- ԱԺ – Ազգային ժողով
- ԼԳԲՏԻՔ (LGBTIQ) – լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսեքսուալ, ինտերսեքս և քվիր
- ՀԿ – հասարակական կազմակերպություն
- ՀՌՀ – Երևան – Հյուսիսային Ռայթս Հաուս – Երևան
- ՄԻ – մարդու իրավունքներ
- ՔՀ – քաղաքացիական հասարակություն
- ՔՀԿ – քաղաքացիական հասարակության կազմակերպություն
- BONGO (Business Organized NGO) – բիզնեսի կազմակերպած հասարակական կազմակերպություն
- GONGO (Government-organized NGO) – կառավարության կազմակերպած հասարակական կազմակերպություն
- RONGO (Russia-organized NGO) – Ռուսաստանի կազմակերպած հասարակական կազմակերպություն

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1991 թ. անկախացումից հետո Հայաստանում քաղաքացիական հասարակությունը սկսեց զարգանալ և ընդլայնվել՝ ոչ առանց արևմտյան դոնորական աջակցության: Սակայն միայն վերջին հինգ-վեց տարին է, ինչ քաղաքացիական գործողության բնույթն ու նպատակը դարձել են նաև (ինքն) անդրադարձի<sup>1</sup> կարևոր առարկա ԲՀԿ-ական և ակտիվիստական համայնքներում (Սոցիոսկոպ 2016, Ishkanian 2015): Սրանք նաև տարբեր խնդիրներ հասցեագրող փոքրաքանակ և լայնամասշտաբ փողոցային բողոքների տարիներ էին: Այս ընթացքում Սոցիոսկոպի անդամներն իրակա-

1. Մասնավորապես, այսպիսի (ինքն)անդրադարձը հաջորդել է Մաշտոցի պուրակի (#SaveMashtotsPark) շարժման հակասական արդյունքին: Ընդվզումը սկիզբ էր առել 2012 թ. փետրվարին՝ իբրև «Քաղաքը մերն է» նախաձեռնության անդամների նստացույց ընդդեմ Երևանի կենտրոնի լքված հանրային պուրակներից մեկում բուսիկների տեղադրմանը և շատ չանցած վերաճել էր լայնամասշտաբ շարժման: Թեպետ պայքարն արժևորվել է հորիզոնականության և ապակենտրոնության սկզբունքների ներմուծման համար, այն, այդուհանդերձ, ակտիվիստների շրջանում նաև խնդրականացվել է հիասթափեցնող հանգուցալուծման և այլ պատճառներով: Մասնավորապես, նույն տարվա մայիսին, ժամանակի նախագահ Սերժ Սարգսյանն այցելեց պուրակ և դիմելով քաղաքապետին՝ հրահանգեց հեռացնել բուսիկները «գեղեցիկ չլինելու» (և ոչ թե՛ հակաօրինական լինելու) պատճառաբանությամբ: Սա ստիպեց ակտիվիստական համայնքին լրջորեն մտածել իրենց գործի ոչ բավարար քաղաքականացման և կոոպտացիայի դեմ (հակա)գործողության եղանակների բարելավման անհրաժեշտության շուրջ:

նացրել են մի շարք հետազոտություններ՝ հետևելու քաղաքացիական հասարակության գործընթացների, մարդու իրավունքների վիճակի և երկրում ժողովրդավարության հեռանկարների դինամիկային: Այս ժամանակահատվածում սկսեցին փոխվել քաղաքացիական հասարակության անդամների պատկերացումներն ու ընկալումներն իրենց գործունեության, ինչպես նաև կառավարության հետ հարաբերություններում սեփական դերի և դիրքի շուրջ: 2017 թ. վերջ - 2018 թ. սկզբում՝ անսպասելի հայկական հեղափոխությանն անմիջապես նախորդող շրջանում, այս ընկալումներում արդեն նկատելի էին տագնապներ ու շփոթմունք: Այն ժամանակվա նախագահ Սերժ Սարգսյանի և Հայաստանի հանրապետական կուսակցության (ՀՀԿ) իշխանության կենտրոնացման աճով և ռեժիմի կողմից քաղաքացիական հասարակության նկատմամբ ուժգնացող և հետզհետե ավելի բացահայտ դարձող ճնշմամբ պայմանավորված՝ քաղաքացիական հասարակության ապագայի հետ կապված մտահոգությունները սաստկանում էին: Ինչպես «Հյուսիսային ռայթս հաուս Երևանի» վերջին տարեկան զեկույցն է փաստագրում, այդպիսի ճնշումը ներառում էր մարդու իրավունքներով զբաղվող ակտիվիստների և ԲՀԿ-ների վերաբերյալ աննպաստ մեդիա դիսկուրս ստեղծելու համակարգային փորձեր՝ նկարագրելով նրանց իբրև «գրանտակերներ» և դրսի շահի սպասարկուներ, ոտնձգություններ իրավապաշտպանների, մասնավորապես՝ գենդերային/ԼԳԲՏԻՔ իրավունքներով զբաղվողների և բնապահպան ակտիվիստների նկատմամբ, խոչընդոտներ հանրային լայն հնչեղություն ունեցող գործերում ներգրավված փաստաբանների հանդեպ և այլն (ՀՆԿ Երևան, 2017): 2018 թ. լարված փետրվար-մարտ ամիսների շրջանում էր, երբ «Սոցիոսկոպը» և Ա. Իշխանյանը (LSE) նախաձեռնեցին համատեղ հետազոտություն՝ քննելու քաղաքացիական հասարակության մտահոգությունները և «*հայաստանյան քաղաքացիական հասարակության նեղացող տարածքի խնդիրն*

*արծազանքները*»: Նախքան հեղափոխությունը, շատ իրավապաշտպան ՔՀԿ անդամներ, մարդու իրավունքների ջատագույններ և ակտիվիստներ հաճախ իրավիճակը նկարագրում էին իբրև նեղացող կամ սեղմվող: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և այլ առանցքային տեղեկատուների հետ հեղափոխությունից և այս նախագծի մեկնարկից առաջ իրականացրած մեր հարցազրույցները դուրս էին բերում վախեր, մտահոգություններ, ինչպես նաև վերլուծական փորձեր, որոնցում իշխանության փոփոխության հնարավորության մասին որևէ ենթադրություն տեղ չուներ: Սակայն երկու ամսից էլ պակաս ժամանակահատվածում Հայաստանի քաղաքական կյանքը կտրուկ և բուռն շրջադարձ կատարեց, որ սկսեց ապրիլին այն ժամանակվա ընդդիմության առաջնորդ Նիկոլ Փաշինյանի նախաձեռնած համաժողովրդական բողոքի գործողություններով և ավարտվեց մայիսյան հեղափոխությամբ՝ Փաշինյանին բերելով նոր, ժամանակավոր կառավարության ղեկավարի պաշտոնին: Քաղաքացիական հասարակության խմբերը՝ իրավապաշտպան ՀԿ-ները և ոչ ֆորմալ խմբերը/ակտիվիստները, հեղափոխությունում առանցքային դեր խաղացին իրենց նախաձեռնող մասնակցությամբ, ինչն ավելի մանրամասն կքննարկենք զեկույցի հաջորդ բաժիններում:

Փոփոխության հնարավորության գիտակցումն ինքնին էական սոցիալական փոփոխություն էր. դրա հանդեպ թերահավատությամբ էր ներծծված հանրային դիսկուրսը:

Հեղափոխությունից հետո վերափոխված պայմանները ենթադրում են նաև պետություն-քաղաքացիական հասարակություն հարաբերություններին նորովի անդրադարձ: Այս կտրուկ փոխված քաղաքական համատեքստում կարևոր է վերամտածել քաղաքացիական հասարակության դերը Հայաստանում: Քաղաքացիական հասարակություն (ՔՀ) ասելով՝ մենք նկատի ունենք ինչպես ֆորմալ և պրոֆեսիոնալ ՀԿ-ները, այնպես էլ ներքևից եկող (grassroots) խմբերը,

քաղաքացիական նախաձեռնություններն ու շարժումները: Հենվելով Լոնդոնի տնտեսագիտության համալսարանի Քաղաքացիական հասարակության կենտրոնի (LSE Centre for Civil Society) գիտնականների սահմանման վրա՝ մենք լայն իմաստով քաղաքացիական հասարակությունը սահմանում ենք իբրև «...ընդհանուր հետաքրքրությունների, նպատակների և արժեքների շուրջ կազմակերպված, անհարկադիր հավաքական գործողության հարթակ, որը սովորաբար ներառում է ֆորմալության, ինքնավարության և իշխանության տարբեր աստիճաններ ունեցող տարածքների, սուբյեկտների և ինստիտուցիոնալ ձևերի բազմազանություն» (LSE Centre for Civil Society 2006: ii)<sup>2</sup>: Ի հավելումն, մեր հետազոտության շրջանակներում քննարկել ենք առանձնապես *դիմադրական* կամ *առաջադիմական* քաղաքացիական հասարակության հատվածի դերը: Մենք սահմանում ենք *դիմադրական* կամ *առաջադիմական* քաղաքացիական *հասարակությունը* որպես խմբեր, որոնք ունեն քաղաքական-ընդվզող դիրք և վիճարկում են պահպանողական ստատուս-քվոն՝ գործելով խոցելի խմբերի՝ լայնորեն ճնշվածների, հետապնդվածների, աննկատների (անտեսվածների) և անլսվածների (ձայնազուրկների) անունից և պաշտպանելով նրանց իրավունքներն ու շահերը: Առաջադիմական քաղաքացիական հասարակության սուբյեկտները միտված են խոցելի խմբերի պաշտպանությունն առաջ մղելու և համախըմբվելու՝ հանուն սոցիալական փոփոխության:

Հեղափոխությունից և հայաստանյան քաղաքական կյանքի կտրուկ շրջադարձերից հետո մենք շարունակեցինք հետազոտությունը՝ ձգտելով որսալ քաղաքացիական հասարակություն-պետություն հարաբերություններում առաջացող փոփոխությունները: Մեր նպատակն էր քննել և վերլուծել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և ակտիվիստների դերը հայկական հեղափոխության մեջ

2. Տե՛ս [http://eprints.lse.ac.uk/29398/1/CCSReport05\\_06.pdf](http://eprints.lse.ac.uk/29398/1/CCSReport05_06.pdf):

և նոր իրավիճակում որոշարկել քաղաքացիական հասարակության հնարավորություններն ու մարտահրավերները:

Մեթոդաբանությունը և մեր հետազոտական դիրքը

Զեկույցի տարբեր մասերից օգտվելիս կարևոր է իմանալ ընտրված հետազոտական դիրքը: Այս ուսումնասիրությունում «Սոցիոսկոպի» թիմը հանդես է գալիս մտահոգ և առնչակից դիրքից: Այս առնչակցությունը քողարկելու փոխարեն, որ սովորական պրակտիկա է օբյեկտիվիստական սոցիոլոգիայի համար, մենք սահմանում, ձևակերպում և ընդգրկում ենք այն իբրև մեթոդաբանական դիրք: Կիրառվել է մասնակցային գործողության հետազոտությունը (participatory action research)<sup>3</sup> այդ կերպ ուսումնասիրության մեջ ազդակիր մարդկանց և խմբերին ներառելով իբրև հետազոտության մասնակիցների (և ոչ պարզապես տեղեկատուների), որոնք կիսվում են հետազոտվող խնդիրների լուծմանն ուղղված գործողությունների իրենց փորձով: Այսպիսի ուսումնասիրության մեջ մենք ևս սեփական փորձառություններով մասնակցում ենք երկխոսությանը՝ հետազոտող-հարցվող հարաբերությունները դարձնելով հոսուն և շրջելի:

Ուսումնասիրությունը հիմնված է նախքան հեղափոխությունը ՔՀ ներկայացուցիչների հետ արված հարցազրույցների հետահայաց վերլուծության<sup>3</sup>, ՔՀ և դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հեղափոխությունից հետո արված 3 ֆոկուս-խմբային քննարկումների վրա, երկրորդային հետազոտության և մեդիա մոնիթորինգի վրա՝ համատեքստի վերլուծության համար, ինչպես նաև քաղա-

3. Այս հարցազրույցները (ընդհանուր թվով 24) անցկացվել են հեղափոխությունից մի քանի ամիս առաջ նախաձեռնած հետազոտության շրջանակներում: Վերջինիս իրականացմանը աջակցել է Պրահայի քաղաքացիական հասարակության կենտրոնը (PCSC):

քացիական հասարակության պահանջների և ժամանակավոր կառավարության քաղաքական ծրագրի ու հայտարարությունների համեմատական քննության վրա՝ տարամիտման և երկխոսության կետերի տեսանկյունից:

Սկզբում մենք ներկայացնում ենք քաղաքացիական հասարակության և ակտիվիզմի համաշխարհային համատեքստը և տեղական փորձը հեղափոխությանը նախորդող շրջանում<sup>4</sup>, ապա քննարկում ենք հեղափոխական գործընթացը՝ քաղաքացիական հասարակության կողմից ազդվելու և իր հերթին դրա վրա ազդելու տեսանկյունից: Այստեղ մենք քննում ենք, թե ինչպես քաղաքացիական հասարակության նեղացող տարածքի իրավիճակը և դրա ընկալումը ազդեցին մայիսյան հեղափոխության մոբիլիզացման վրա՝ օգտագործելով *քննարկության, հիմնարար մարդու իրավունքների և գենդերային/ԼԳԲՏԻ-Ք իրավունքների* ոլորտներում աշխատող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և ակտիվիստների հետ արված 3 ֆոկուս խմբային քննարկումների արդյունքները: Այս վերլուծությունում մենք նաև քննում ենք նշված 3 ուղղություններում ՔՀ ներկայացուցիչների հարաբերությունները քաղաքական գործիչների հետ: Այս նպատակով ժամանակավոր կառավարության ծրագիրը, առնչվող փաստաթղթերը և պաշտոնական ելույթները վերլուծվել են առաջադիմական ՔՀ արձագանքելու տեսանկյունից: Եվ վերջապես, մենք հաշվի ենք առնում ՔՀ *հեղափոխական ժամանակահատվածի* մարտահրավերները և դրա վերափոխված հարաբերությունները պետության, հանրության և միջազգային դոնորների հետ: Այս նպատակով մենք անդրադարձել ենք ինչպես վերը նշված հարցազրույցներին՝ լսելով ՔՀ ներկայացուցիչ-

4. Այս նպատակով մենք օգտագործել ենք նախքան այս նախագիծն արված (24) ֆոկուսավորված հարցազրույցները նույն ՔՀ ներկայացուցիչների և միջազգային դոնորների հետ, որոնց հետ կրկին հանդիպել ենք ֆոկուս-խմբային հարցազրույցների նպատակով հեղափոխությունից հետո արդեն այս նախագծի շրջանակներում:

ների պատկերացումներն ու ակնկալիքները, այնպես էլ այլ երկրների հետհեղափոխական համատեքստերի փորձին:

Վերլուծությունն ամփոփվում է քաղաքացիական հասարակության դերի և հարաբերության վերաբերյալ քաղաքականություններին առնչվող առաջարկներով և հետագա անելիքների նախանշմամբ:

Զեկույցը կառուցված է ժամանակագրական տրամաբանությամբ՝ առանձին, սակայն փոխկապված հոդվածների ձևով:

Մեր հետազոտությունը ի հայտ է բերում, թե ինչպես առաջադիմական քաղաքացիական հասարակության խմբերը դարձան հայկական հեղափոխության ավանգարդը՝ հանդես գալով իբրև ներշնչանք և օրինակ առավել լայն հանրային խմբերի համար՝ ժողովրդականացնելով դիմադրության տարբեր մեխանիզմներ և մեթոդներ: Հեղափոխությունից անմիջապես հետո այս խմբերից որոշ անհատներ դարձան ժամանակավոր կառավարության կամ տեղական ինքնակառավարման մարմինների մաս և վերջերս՝ դեկտեմբերի 9-ի խորհրդարանական ընտրություններով անցան Ազգային ժողով<sup>5</sup>, մյուսները նախընտրեցին մնալ կառավարությունից դուրս և շարունակել իրենց աշխատանքն իբրև մարդու իրավունքների ջատագույններ ՔՀ հատվածում: Այսպիսով՝ փոխակերպվել է ու ամենայն հավանականությամբ դեռ կշարունակի փոխվել ոչ միայն քաղաքական, այլև քաղաքացիական քարտեզը:

5. Վերլուծության ավարտական փուլում դեկտեմբերի 9-ի խորհրդարանական ընտրություններում Փաշինյանի՝ լայն աջակցություն վայելող «Իմ քայլը» դաշինքը ստացավ բացարձակ մեծամասնություն:



# 1. Հայաստանյան քաղաքացիական հասարակությունը հեղափոխությունից առաջ

## 1.1. Քաղաքացիական հասարակության և ակտիվիզմի գլոբալ համատեքստը. համառոտ ակնարկ

2010 թվականին՝ 2008 թ.-ի համաշխարհային տնտեսական ճգնաժամից երկու տարի անց, ականատես եղանք աշխարհով մեկ տեղի ունեցող դիմադրական շարժումների բուռն աճի: Խստամբերության (austerity) դեմ (ինչպես օրինակ՝ «Օքյուփայ Ուոլ Սթրիթը», «*Ինդիգենալոս*») Իսպանիայում և այլն) և ժողովրդավարությանը միտված (Արաբական գարունը) գլոբալ շարժումներին զուգընթաց քաղաքացիական ակտիվիզմի բարձրացման ալիք կար նաև որոշ նախկին ԽՍՀՄ երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, Վրաստանում, Ռուսաստանում և Ուկրաինայում (Lutsevych 2013, Ishkanian 2015):

Հայաստանում կոռուպցիայի, ժողովրդավարության և օրենքի գերակայության բացակայության դեմ փոքրածավալ, ինչպես նաև բողոքի լայնամասշտաբ գործողություններն արդեն սովորական էին դարձել հեղափոխությանը նախորդող վերջին տարիներին: 2018-ի գարնանը տեղի ունեցած հեղափոխությունը հանգեցրեց երկիրը երկու տասնամյակ կառավարած Հայաստանի հանրապետական կուսակցության անկմանը: Թեև շատերն ընդունում են, որ վարչապետի ներկայիս պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը քաղաքացիական ակտիվիզմի առաջնորդ է, որ կարողացավ մոբիլիզացնել ու մոտիվացնել մարդկանց՝ բերելով հեղափոխությունն իր հաջող ավարտին, սակայն հազիվ թե հեղափոխությունը հաջող էր, եթե արդեն գոյություն չունենար քաղաքականապես ակտիվ գանգված, որ պատրաստ էր դուրս գալ փողոցներ հեղա-

փոխական գործընթացի սկզբնական օրերին: Եվ չնայած մենք այս հեղափոխությունը կարող ենք դիտարկել որպես Հայաստանի ժողովրդավարացման հուսադրող նշան, կարևոր է նաև չմոռանալ, որ դեռ շատ անելիքներ կան այդ ճանապարհին:

Երբ սկսում էինք այս հետազոտական ձեռնարկը հեղափոխությանը նախորդող՝ փետրվար-մարտ ամիսներին, կենտրոնացած էինք Հայաստանում քաղաքացիական հասարակության գործունեության նեղացող տարածքի պատճառներն ու հետևանքները հասկանալու և վերլուծելու վրա: Նեղացող տարածքի ֆենոմենը, ինչպես այն հիմա անվանում են, ողջ աշխարհում աճի միտում ունի և առանձնապես ինտենսիվացել է վերջին տարիներին: Համաձայն ԵՄ վերջին զեկույցներից մեկի (2017)՝ աշխարհի ավելի քան հարյուր կառավարություններ՝ ըստ որում և՛ ժողովրդավարական, և՛ ոչ ժողովրդավարական, ներմուծել են «քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գործունեությունը սահմանափակող օրենքներ» (Youngs, Echague 2017: 5): Մի մասը համարում է, որ քաղաքացիական հասարակության նեղացող տարածքի երևույթը պարտական է ժողովրդավարության ընդհանուր նվազմանն աշխարհով մեկ (Keane 2009, Flinders 2016), սակայն սա հազիվ թե միակ բացատրությունը լինի՝ հաշվի առնելով, որ երևույթը տեղ է գտնում նաև ժողովրդավար երկրներում:

Մինչդեռ հեղափոխությունից հետո քաղաքացիական հասարակության գործողության տարածքն այլևս չի նեղանում, ինչպես ՀՀ ու ռեժիմի օրոք, այն, անշուշտ, նշանակալի փոխակերպումներ է անցնում: Ստորև կքննարկենք Հայաստանի քաղաքացիական հասարակության հետագա զարգացման հեռանկարները:

## 1.2 Քաղաքացիական հասարակությունը նախահեղափոխական Հայաստանում. մտահոգություններ, կարողություններ, փոփոխության հեռանկարներ

Այստեղ կուրվագծենք, թե ինչ էր նեղացող տարածքի երևույթը հայաստանյան ՔՀ դեպքում, և թե ինչու է անգամ հեղափոխության կայացումից հետո հետհեղափոխությունը հասկանալու ու ձևավորելու նպատակով արդիական մնում դիտարկել նախահեղափոխական խնդիրները, որոնք որպես ժառանգություն ստացել են ինչպես պետական, այնպես էլ հանրային ոլորտները:

Մինչ հեղափոխությունն արած հարցազրույցները հետահայաց վերընթերցելով՝ նախևառաջ դիտարկում ենք, թե որ սոցիալ-քաղաքական պայմաններն էին և դրանց ինչպիսի ըմբռնումներն էին, որ ՀԿ գործիչներին և ակտիվիստներին դրդեցին մոբիլիզացվել այդ պահին ցածր վստահություն ունեցող քաղաքական ուժի նախաձեռնած գործընթացի շուրջ:

Սոցիալ-քաղաքական պայմանները կարող ենք դիտարկել մի քանի փոխառնչվող հարթություններում՝ *ներքաղաքական միջավայր. իշխանության կառուցվածք, քաղաքացիական հասարակության ներքին միջավայր. լարումներ և խզումներ, քաղաքացիական հասարակություն և միջազգային/դոնոր կազմակերպություններ հարաբերություններ:*

Որպես ընդհանուր միտում՝ կարող ենք արձանագրել, որ նախահեղափոխական ներքաղաքական միջավայրը հետազոտության մասնակիցները բնութագրում էին ժամանակի իշխանությունների, ընդդիմության (այդ թվում՝ Փաշինյանի «Քաղաքացիական պայմանագրի»), ինչպես նաև սեփական ուժերի հանդեպ համընդհանուր անվստահությանը, կասկածի ու հուսալքության աճող զգացումներով:

### Ներքին քաղաքական միջավայրը

Որպես նախագահ իր պաշտոնավարման երկրորդ շրջափուլի ավարտից, այսինքն՝ մոտալուտ պաշտոնաթողությունից առաջ, 2015 թ. Սերժ Սարգսյանը նախաձեռնեց սահմանադրական փոփոխություններ, որով երկրում նախագահականից խորհրդարանական կառավարման համակարգի անցում կատարվեց: Հետազոտության մասնակիցների կողմից կառավարման ձևի փոփոխությունն առավելապես ընկալվում էր իբրև ժամանակի իշխանությունների պահպանողական գաղափարախոսության ամրապնդման, տնտեսական և մշակութային կապիտալի, ավտորիտար լծակների առավել կենտրոնացման և այս տեսանկյունից՝ քաղաքացիական հասարակության գործունեության դաշտի նեղացման հեռանկար: 2017-2018 թթ. արագորեն ընթացող օրենսդրական փոփոխությունները հարցազրույցի մասնակիցների համար հենց այս դրության իրավական կողմի ամրագրումն էին: ՔՀ տարբեր խմբեր հասցնում էին միայն հոռետեսական գնահատականներով արձագանքել մեկը մյուսից բացասական հետևանքներ ենթադրող նորամուծություններին, ինչպիսիք էին հատկապես փաստաբանների անկախությունը խոցելի դարձնող փոփոխությունները տարբեր օրենսգրքերում<sup>1</sup>, կառավարության գոր-

1. 2018 թ. փետրվարի 7-ին մի խումբ փաստաբաններ գործադուլ են հայտարարել՝ հրաժարվելով ՀՀ պետական մարմիններում, դատարաններում, նախաքննության մարմիններում պաշտպանություն կամ ներկայացուցչություն իրականացնել: Փաստաբանների բողոքն ուղղված էր Արդարադատության նախարարության ներկայացրած նախագծով սահմանված՝ դատարանի կողմից փաստաբանի և դատախազի նկատմամբ տուգանքի կիրառում նախատեսող իրավակարգավորման դեմ: Համաձայն նախագծի՝ փաստաբանների ու դատախազների նկատմամբ կարող է կիրառվել նաև սանկցիա մինչև 100,000 դրամի չափով: «Դատական տուգանքը կարող է վտանգել փաստաբանի անկախությունը. փաստաբանների հայտարարությունը». *Tert.am*. սեպտեմբեր 27, 2018-ի դրությամբ հասանելի է՝ <https://www.tert.am/am/news/2018/02/08/advocates/2609122>:

ծունեության թափանցիկությունը խիստ սահմանափակող փոփոխությունները<sup>2</sup>, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների մասին օրենքի 2017 թ. փոփոխությունը, որի հետևանքով, օրինակ, գործնականում սահմանափակվեց բնապահպանական ՀԿ-ների կողմից հանրային շահի պաշտպանությունը Հայաստանի դատարաններում:

Ինչպես ցույց տվեց հետազոտությունը, ՔՀ գործունեության նեղացող դաշտի վրա ազդում և ներքաղաքական բարդ իրադրությունը պայմանավորում էին նաև աճող ռազմականացումը («ազգ-բանակ» կոնցեպտի շուրջ հանրային կյանքի կառուցակցումը) և ռազմահայրենասիրական դիսկուրսի ակտիվ քարոզչությունը ՁԼՄ-ով, կրթության և եկեղեցու ինստիտուտների միջոցով՝ շաղախված քաղաքացիական խմբերի մասին բացասական դիրքորոշումներ ձևավորելու նպատակադրությամբ:

Քաղաքացիական հասարակության տարածքի նեղացումը տեղի ունեցող ընդհանուր առմամբ ֆորմալ ժողովրդավարության և հարաբերական ազատ խոսքի պայմաններում, ինչը քաղաքացիական հասարակությանը թույլ էր տալիս քննադատել (թեև քաղաքական ու սոցիալական փոքր ազդեցություն ունեցող նեղ հանրային դաշտում) գործող համակարգը՝ ինչ-որ առումով պարպելով դիմադրական պայքարի

2. 2018 թ. փետրվարի 1-ին ժամանակի կառավարությունը հաստատել է «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի նախագիծը, որով նախատեսվում էր, որ Կառավարության նիստերը հիմնականում դռնփակ կլինեն, իսկ որոշ հատվածներ կարող են բաց լինել լրագրողների համար՝ միայն վարչապետի որոշմամբ: Ավելին, համաձայն օրենքի կառավարության անդամները իրավունք չունեին մանրամասներ ներկայացնել նիստից՝ առանց վարչապետի թույլտվության: Օրենքի հեղինակներից մեկը Արդարադատության նախարարությունն էր, որի գործող ղեկավարը՝ Դավիթ Հարությունյանը պնդում էր, որ օրենքը չի հակասում և չի հարվածում ժողովրդավարությանը: Աղբյուր՝ «Օրենքի նոր նախագծով առաջարկվում է Կառավարության նիստերը դարձնել դռնփակ». *Azattyun.am* սեպտեմբեր 27, 2018-ի դրությամբ հասանելի է՝ <https://www.azattyun.am/a/29011602.html>:

սոցիալական էներգիան և սահմանափակելով իրական համակարգային փոփոխությունների հնարավորությունը կոնկրետ գործողությունների մակարդակում:

Սակայն քաղաքացիական հասարակության քննադատությունները, խոսակցությունները, դիմադրական թեկուզ ցաքուցրիվ գործողությունները, դրանց ձեռքբերումները և ձախողումները կարևոր ենք համարում դիտարկել իբրև պայքարի փորձի կուտակման և այդ իմաստով [հեղա]փոփոխության տարածքի ընդարձակման քաղաքական պայմաններ:

Այդ պայմանները հատկապես նշանակալի են դառնում, երբ ժամանակի (իշխող վարչախմբի քաղաքականության հետևանքով թուլացած) ընդդիմությունը քաղաքացիական հասարակության կողմից չի դիտարկվում իբրև իրական քաղաքական փոփոխությունների սուբյեկտ՝ համարվելով նոմինալ կամ գոյություն չունեցող: Ուստի հենց քաղաքացիական հասարակության դաշտում էր հնարավոր դառնում դիմադրական քաղաքականության և քաղաքական կառուցվածքային փոփոխության դիսկուրսի ձևավորումը: Բայց սա նաև փոկ էր, երբ քաղաքացիական հասարակությունը քրննադատվում էր չափազանց քաղաքականացված և ոչ կառուցողական լինելու համար, ինչպես ներսում՝ ապաքաղաքական (սոցիալական ծառայությունների տրամադրմանը ուղղված) ՀԿ ներկայացուցիչների կամ առանձին անհատների կողմից, այնպես էլ դոնոր կազմակերպությունների շրջանում: Վերջիններս ՔՀԿ-ներից ակնկալում էին գործող կառավարության հետ առավել համագործակցային մոտեցում՝ քննարկման սեղանի շուրջ նստելով և բարեփոխումներին աջակցելով:

Ներքին իրադրության համատեքստում կարևոր է դիտարկել նաև Ռուսաստանի, տեղի և միջազգային խոշոր բիզնես ներկայացուցիչների, ինչպես նաև պետական ֆինանսական հոսքերի ազդեցությունը՝ այլընտրանքային, վերահսկելի կամ ժամանակի իշխանություններին լոյալ, պահ-

պանողական օրակարգերի ջատագով ՔՀ ձևավորելու առումով: Այս քաղաքականությունները իրականացվում են RONGO, BONGO, GONGO (ռուսական, բիզնեսի, կառավարության կազմակերպած ՀԿ) տիպի ՔՀԿ-ներ ձևավորելու և ուժեղացնելու միջոցով, որոնք միտված էին հանրության լայն շերտերում պահպանողական գաղափարախոսության և արժեքների, պատերնալիստական բարոյականության, հակաժողովրդավարության և վերահսկող ռուսական քաղաքականության վերարտադրությանը, ինչպես նաև որոշ խոշոր բիզնես շահերի հովանավորչությանը:

Այս խնդիրներից շատերը դեռևս ներկայիս իրադրության մաս են կազմում, որոնց հետ նոր իշխանությունները ստիպված են գործ ունենալ:

***Քաղաքացիական հասարակության ներքին միջավայրը. լարումներ, դոնոր համայնք***

ՔՀ ներքին միջավայրը ու դրանում առկա լարումները հիմնականում կքննարկվեն ՔՀԿ-ներ - ակտիվիստներ և ՔՀԿ-ներ - միջազգային դոնորներ ոչ դյուրին հարաբերությունների դիտանկյունից:

Արևմտյան դոնորական աջակցությունը հայաստանյան քաղաքացիական հասարակություն մուտք գործեց 1990-ականների սկզբին: Անկախության վաղ շրջանի արևմտյան ֆինանսական աջակցության հիմնական նպատակը ժողովրդավարության և ՄԻ առաջխաղացումն էր հետխորհրդային Հայաստանում ՔՀԿ-ներին այդ ազատական գաղափարաբանությունների կրող և խթանող դարձնելը (Ishkanian 2008): Ժողովրդավարացման և մարդու իրավունքների զարգացման համատեքստում 1990-ականների կեսերից արևմտյան ֆինանսական աջակցությունն ավելի աճեց, բազմազան դարձան նաև աջակցվող թեմաներն ու խնդիրները՝ աղքատության հաղթահարումից մինչև կրթություն՝ սատարելով

ընդհանուր առմամբ ապաքաղաքական և հումանիտար օգնության ուղղվածությունը: Դոնորների կողմից այսպիսի պրակտիկաները կարելի է դիտարկել նաև այլ անցումային և զարգացող երկրներում (Howell, Pearce 2002): Սա մեծապես պայմանավորված է արևմտյան դոնորների նախընտրությամբ՝ օգնությունը ներկայացնել տեխնիկական օժանդակության ձևով, որպեսզի վերջինս ընդունող կառավարության կողմից չդիտվի որպես քաղաքական միջամտություն (Ferguson 1994): Այս շրջանում հայաստանյան ՔՀ-ը բռնեց ինստիտուցիոնալիզացման և ՀԿ-ացման ճանապարհը, և ավելի պրոֆեսիոնալ դարձավ միջոցների հայթայթման և սեփական տեղը ձևավորելու առումներով (Ishkanian 2008):

Այս սկզբնական շրջանից հետո Հայաստանի ՔՀ սկսեց զարգանալ իր ուրույն ճանապարհով՝ արձագանքելով միաժամանակ տեղի և գլոբալ (արևմտյան) քաղաքական ու տնտեսական գործընթացների ալիքների ազդեցություններին: 2007-08 թթ. միջազգային տնտեսական ճգնաժամից հետո այդ գործընթացները նոր փոփոխություն կրեցին՝ արևմտյան ժողովրդավար երկրներում ծնելով ներքնաշերտերից եկող (grassroots) հակահամակարգային պայքարի ինչպես ձախական, այնպես էլ ծայրահեղ աջ շարժումներ: Այսօր էլ արևմտյան ժողովրդավարության ճգնաժամի հետևանքով քաղաքացիական հասարակության ոլորտը տարբեր երկրներում առերեսվում է բազմաթիվ մարտահրավերների, ինչպես օրինակ՝ ծայրահեղ աջական, ազգայնական քաղաքականությունների ազդեցության և կառավարությունների կողմից վերահսկման աճի: Ինչպես ուսումնասիրություններն են ցույց տալիս, նեղացող տարածքի երևույթը տեղ է գտնում նաև զարգացած ժողովրդավարություններում (Youngs 2017):

Հայաստանի առումով այս գլոբալ ալիքներն ունեցան իրենց անդրադարձները՝ համադրվելով այդ փուլում տեղական քաղաքական կյանքի առանձնահատկությունների (այդ

թվում՝ 2008 թ. մարտի 1-ի և դրա հետևանքների) հետ: Այսպես, արևմտյան՝ ներքևից եկող շարժումները զգալի խթան էին Հայաստանում նույնպիսի շարժումների զորեղացման համար, որոնք իրենց ասելիքը մասամբ նույնացնում էին այնպիսի խմբերի բարձրացրած հարցերի հետ, ինչպիսին է Occupy-ը: Մի կողմից արևմտյան այդ քաղաքացիական միտումների ազդեցությունը, մյուս կողմից երկրում կուսակցական ընդդիմության սահմանափակումները մեծ ազդակ հանդիսացան Հայաստանում քաղաքացիական դիմադրական շարժումների հետզհետե զարգացման, համակարգայնացման ու հզորացման համար: Երիտասարդական նախաձեռնությունները արդեն 2010-2012-ից սկսեցին հանրորեն տեսանելի գործողություններ իրականացնել մայրաքաղաքային միջավայրերում:

ՔՀ զարգացման վերջին տասնամյակն առանձնապես կարևոր է ակտիվիստական խմբերի, դիմադրական նախաձեռնությունների ինքնազորացնող գործունեության առումով և աչքի է ընկնում ՔՀԿ-ներ - ակտիվիզմ, քաղաքական կուսակցություններ - ՔՀԿ-ներ, կուսակցություններ - ակտիվիզմ փոխադարձ հոսքերով: Հետխորհրդային երկրների (ինչպես օրինակ՝ Վրաստանի և Ուկրաինայի) փորձը ցույց է տալիս, որ քաղաք(ացի)ական հասարակության և քաղաքական խմբերի ներքին փոխհոսունությունը թույլ է տալիս ակտիվիստներին և ՔՀԿ-ներին դառնալ քաղաքական պայքարներում մոբիլիզացման և գաղափարների շրջանակման առաջնահերթ օղակներից մեկը: Հենց դա էլ գործնականում տեղի ունեցավ Հայաստանում 2018-ի գարնանը:

Գլոբալ տնտեսական քաղաքականությունների բացասական հետևանքները և տեղական կոռումպացված իշխանությանն արևմտյան երկրների կամ միջազգային կառույցների կողմից աջակցող դիրքորոշումները վերջին մի քանի տարիներին հանգեցրին նրան, որ ակտիվիստական խմբերը և որոշ ՔՀԿ-ներ հարցադրում և քննադատում էին ստեղծված

դրությունը: Շատերը մատնանշում էին, թե ինչպես է դոնորներից ֆինանսական կախվածությունը հաճախ պայմանավորում տեղական քաղաքացիական հասարակության գործունեության օրակարգը, որի արդյունքում սահմանափակվում կամ քննադատվում էին դիմադրական խմբերի անզիջումային մոտեցումները: ՔՀԿ-ներին, ինչպես նաև ակտիվիստներին, վրդովեցնում էր նկատելի դարձած այն միտումը, որ խոշոր արևմտյան դոնորները չեն խորշում ոչ միայն համագործակցել կառավարության հետ, այլև ֆինանսավորել GONGO-ներին՝ փաստարկելով դա իբրև հավասարակշռման քաղաքականություն, ինչը, սակայն, տեղական քաղաքացիական հասարակությունը դիտարկում էր իբրև ֆինանսավորման միջոցով կառավարության վրա ազդեցության և վերահսկողության հաստատման քաղաքականություն: Դոնորների այսպիսի դիրքորոշման համաձայն՝ փոփոխությունը հնարավոր էր սեղանի շուրջ ընթացող բանակցություններով և ոչ փողոցում՝ ուղիղ գործողությամբ: Ի հավելումն, շատ արևմտյան դոնոր կազմակերպություններ հետզհետե ավելի էին կրճատում որոշ ՔՀԿ-ների ֆինանսավորումը (օրինակ՝ մի քանի անգամ կրճատելով ներկայացված հայտում հայցվող գումարի չափը): Զուգահեռաբար խոշոր դոնորները վերջին շրջանում խրախուսում էին կոալիցիաներով գործելու ձևաչափերը՝ ֆինանսավորելով այդպիսի ծրագրեր և պահանջ տարամետ, հաճախ հակադիր ՔՀԿ-ների ներգրավումը դրանցում, ինչը ևս դժգոհություն էր առաջացնում, քանի որ պարտադրված գործընկերությունը ոչ միշտ էր հաջողվում: Բացի այդ՝ տեղական քաղաքացիական դաշտը հաճախ ծանրաբեռնվում էր բարդ բյուրոկրատական ընթացակարգերով, որոնք, ըստ որոշ նկատառումների, էապես նվազեցնում են քաղհասարակության բովանդակային գործունեության արդյունավետությունը և նրանց առաքելությունը՝ նպաստելու հանրային բարիքին և մասնակցել օրակարգ սահմանելուն:

ՔՀ դաշտի վրա ազդեց նաև այն հանգամանքը, որ դեռևս 2013-ին Հայաստանի՝ Մաքսային միության անդամ դառնալուց հետո արևմտյան դոնոր կազմակերպությունների առաջնահերթությունները Հայաստանի և հայաստանյան ՔՀ հանդեպ էականորեն փոխվեցին՝ բերելով նաև ֆինանսական աջակցության մոտեցումների և կառուցվածքի փոփոխություններ (չնայած դրանք հետագայում սկսեցին վերանայվել ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի նախաձեռնմանը և կնքմանը զուգահեռ):

Այսպիսով՝ ՔՀ – դոնոր համայնք առնչությունները նախահեղափոխական շրջանում հեռու էին հարթ լինելուց:

Հատկապես վերջին երկու տարիներին մեծանում էր քաղաքացիական հասարակության ազատ գործունեության հնարավորության հանդեպ հիասթափությունը: Դրությունը երբեմն (հատկապես ակտիվիստների կողմից) բնութագրվում էր իբրև «մեռած ակտիվիզմի» և «կոնֆորմիստ ՀԿ-ների» շրջան: Փոքր քայլերով փոփոխություններին ընդառաջ գնալուն և այդ սահմաններում կառավարության հետ գործակցելուն պատրաստ ՀԿ ներկայացուցիչներն իրենց հերթին իրենց չգնահատված և ավելորդ քննադատված էին զգում բարձր նշածող սահմանած ակտիվիստների կողմից, որոնք ելնում էին միայն սեփական դիմադրական և անզիջումային դիրքերից: Այս շրջանը քաղաքացիական հասարակության ակտիվիստական և փողոցային պայքարի հետ կապեր պահպանող ՀԿ սեկտորի ներկայացուցիչների տեսանկյունից ինչ-որ իմաստով լքվածության կամ մեկուսացվածության, քաղաքական ապաթիայի, հոգնության, պայքարի այլևս չաշխատող ձևաչափերի, նոր ձևաչափերի փնտրտուքի և դրանց անհրաժեշտության գիտակցման բարդ փուլ էր՝ աճող ազգայնականության ֆոնին:

Կոնֆլիկտայնությամբ հանդերձ, սակայն, ՔՀԿ-ակտիվիստներ հաղորդակցության ոլորտը դառնում է այն տարածքը,

որում ՔՀԿ-ներն ավելի արմատական և դինամիկ գործելու, իսկ ակտիվիստները՝ ՔՀԿ-ների առավել ինստիտուցիոնալացված ռեսուրսներից օգտվելու հնարավորություն են ստանում: Սա բնորոշվել է որպես ՔՀԿ-ների և ակտիվիստների միջև արգասաբեր փոխգործողությունների հնարավորություն ընձեռող սիմբիոտիկ փոխհարաբերություն (Glasius, Ishkanian 2015):

Մինչև հեղափոխությունն առկա համընդհանուր անկայուն ֆինանսական և վատթարացող քաղաքական միջավայրում քաղաքացիական դիմադրական խմբերը սեփական գործունեությունը գնահատում էին իբրև անորոշ, հատվածական, իսկ ազդեցությունը՝ ոչ համատարած, ինչն էլ մղում էր նոր ուղիներ փնտրելու: Այնուհանդերձ, քաղաքացիական հասարակության ոլորտը մշտապես շարունակել է (ինքն)ընկալվել կարևոր՝ իբրև քաղաքական դիսկուրսի և հեռանկարի ձևակերպման ոլորտ, իբրև ապագայի փոփոխության համար տեղեր և մարդիկ ձևավորող տարածք:

Այսպիսով՝ մայիսյան հեղափոխությանը նախորդող շրջանում քաղաքացիական գործողությունը դիմադրական խմբերի համար փաստացի դարձել էր արժեքներից բխող ինքնանպատակ բան, որն ուներ իմաստ՝ անկախ անմիջական արդյունքներից: Գործել շարունակելը դիտվում էր որպես այլընտրանք անգործունեությանը աճող ճնշման և նեղացող տարածքի պայմաններում: Հետահայաց դիտարկմամբ՝ սա թերևս արդյունավետ մոտեցում էր այն իմաստով, որ հետըզիտե բերեց «ընդվզման գործում վարպետություն»՝ լատենտ կերպով կուտակված կապիտալ, որը գործածվեց ու անգամներ բազմապատկվեց հեղափոխության ժամանակ:

**Ճնշումներ, կոոպտացիայի փորձեր. հակազդման ռեպերտուարների փնտրություն**

Պայքարի ռեպերտուարը ռազմավարությունների, հմտու-

թյունների ու ձևերի ամբողջություն է, որ դիմադրական շարժումներն օգտագործում են քաղաքական փոփոխության հասնելու համար՝ հակազդելով իշխանական ճնշումներին ու կոոպտացիայի փորձերին (Tarrow 2011): Իշխանական ճնշումներին հակազդելու ռեպերտուարը ներառում է ոչ միայն դիմադրության և պայքարի ժամանակ մարդկանց իրականացրած գործողությունները, այլև այն գիտելիքն ու փորձառությունը, որ նրանց հուշում է, թե ինչպես գործել կոնկրետ իրավիճակում:

Հայաստանյան ՔՀ նախահեղափոխական դրությունը կոոպտացիայի փորձերին արձագանքելու տեսանկյունից կարող ենք բնորոշել իբրև դրանց էության գիտակցման, սակայն հակազդման մեխանիզմների դեռևս փնտրության շրջան, իսկ կոոպտացիան ինքին կարող ենք բնորոշել իբրև դիմադրական-քաղաքական ՔՀ մարզինալացմանը և իշխանությունների համար վերահսկելի ՔՀ ձևավորմանն ուղղված փորձեր (չդիմադրող, բարեկամ, բարեփոխումների ձգտող GONGO, BONGO, RONGO-ներ): Նախահեղափոխական կոոպտացիայի փորձերին արձագանքելու ռազմավարությունների տեսանկյունից քաղաքացիական հասարակության դիմադրական խմբերն, ըստ էության, մշակել էին տարբեր մոտեցումներ: Առավել արմատական խմբերի ներկայացուցիչները կամ առավել «հուսահատները» իբրև իրենց գործունեության հնարավոր հեռանկար տեսնում էին ակտիվ, տեսանելի (փողոցային) գործողությունների դադարեցումն ու ընդհանուր առմամբ պայքարի հին ձևերի վերաիմաստավորումն ու նորերի մտածումը, ինքնակրթումը Հայաստանի ներսում և դրանից դուրս, գիտելիք կուտակող շարունակական կրթական նախագծերի իրականացումը: Այս խմբերի ներկայացուցիչների գնահատականները Հայաստանում դրական քաղաքական փոփոխությունների հարցում հոռետեսական լինելուց զատ, ընդգծում էին սեփական ներուժի և կոնսոլիդացիոն փորձերի

թուլության, անարդյունավետության հանգամանքները:

ՔՀ շրջանում պայմանական երկրորդ խումբը կարևորում էր պայքարի՝ թեկուզև հաճախ ձախողվող, անարդյունավետ, հոգնեցուցիչ շարունակականության պահպանումն իբրև ժամանակի իշխանությանը, ներքին և արտաքին (հիմնականում ռուսաստանյան) կոոպտացիոն քաղաքականություններին դիմադրելու թույլ հնարավորություն: Այս հեռանկարում համախոհների հետ ուժերի կոնսոլիդացիան և ամենօրյա աշխատանքը տեղում և միջազգային (հիմնականում արևմտյան) հարթակներում դրական փոփոխությունների և քաղաքացիական հասարակության ձայնը լսելի դարձնելու ռազմավարություններից էին: Աճող ճնշումների և խոչընդոտների պայմաններում, ինչպիսիք էին իշխանության կենտրոնացումը, սոցիալ-տնտեսական դրության վատթարացումը, համաշխարհային կապիտալի և տեղական օլիգարխիայի ու խոշոր բիզնեսի չվերահսկվող գործունեությունը, ռուսական ազդեցության մեծացումը, արևմտյան ֆինանսական աջակցության նվազումը, հրատապ քայլեր էին դառնում սեփական (քաղաքական) օրակարգի ձևակերպումը և գործընկերային, վստահության ցանցեր ձևավորելու փորձերը (այդ թվում՝ միջազգային), որոնք, ինչպես նշում էին հետազոտության մասնակիցները, հնարավորություն կտային վերագնահատել սեփական ուժերը և վերադիրքավորվել՝ նեղացող ՔՀ դաշտում:

Այսպիսով՝ հեղափոխությանը նախորդող շրջանում ՔՀ դաշտը լի էր կոոպտացիայի և ճնշման քաղաքականությունների շուրջ մտահոգություններով, մինչդեռ հեղափոխական գործընթացը ցույց տվեց, որ քաղաքական իրավիճակի իրադարձային, անկանխատեսելի փոփոխությունը կարող է հանգեցնել համագործակցության դեռևս չարձանագրված եղանակների և արդյունքում՝ քաղաքական փոփոխության հեռանկարի ընդարձակման: Ինչպե՞ս դա տեղի ունեցավ, և ինչպե՞ս են այդ հեռանկարներն իմաստավորվում փոփոխ-

վող ՔՀ դաշտի տարբեր դերակատարների կողմից մի իրավիճակում, որը շարունակ փոփոխվում է:



## 2. Հայաստանի քաղաքացիական հասարակությունը հեղափոխական անկյան տակ

### 2.1. Մոբիլիզացում և շրջանակում

Նախորդ հատվածի քննարկման մեջ արդեն անդրադարձանք քաղաքացիական հասարակության նախահեղափոխական դրությանն ու այն ռազմավարություններին ու ռեպերտուարներին, որով այն արձագանքում էր նեղացող տարածքի միտմանը: Նաև նշեցինք, որ Հայաստանի այդ ժամանակվա քաղաքական դրության ներքո քաղաքացիական հասարակությունն այն հանրային ոլորտն էր դարձել, որտեղ իր ներհակ լարումներով հանդերձ և հենց դրանց շնորհիվ հնարավոր էր քննարկել, վիճարկել և նախագծել մրցապայքարի քաղաքականություններ և գործողություններ: Վերջին տասնամյակում մրցապայքարի տարբեր էպիզոդների ժամանակ քաղաքացիական հասարակության դիմադրական խմբերը կարողացել էին, հաջողությամբ կամ անհաջողության մատնվելով, փորձառել և ձևակերպել գործողություններ, իշխանության վիճարկման պրակտիկաներ՝ հիմնված *կամավորականության, ապակենտրոնացման, համակարգված ինքնակազմակերպման, ներառականության, հորիզոնական սոլիդարության, ամեն անհատի հանձնառության ու կոլեկտիվ գործողության* սկզբունքների վրա:

Այս սկզբունքները ներթափանցեցին հեղափոխություն. Նիկոլ Փաշինյանը, որ գլխավորում էր «Իմ քայլը» շարժումը, համագործակցությամբ քաղաքացիական «Մերժիր Սերժին», ուսանողական «Ռեստարտ» նախաձեռնությունների, հանրային շահերի պաշտպան և ձախական ակտիվիստ խմբերի անդամների, իրավապաշտպանների, հաջողեց այդ սկզբունքները լայնորեն գործադրել հեղափոխական օրերին: Դրանցով ապահովվեցին ցանցային մոբիլի-

զացման՝ Հայաստանում մինչ այս չգրանցված մասշտաբի հաջողություն:

Գործընթացի կարևոր կողմ էր ՔՀ գործակցությունը քաղաքական ուժի հետ և դրանով իսկ համատեղ օրակարգի համար պատասխանատվություն վերցնելը, ինչը հայաստանյան ՔՀ փորձառության մեջ նախադեպ չի ունեցել և իրավամբ նորարար տարր էր: Այստեղ տեղին է վերհիշել, որ նման ցանցային պրակտիկաներով լայն հանրային աջակցություն առաջ բերած ամենատպալորիչ նախադեպը «100 դրամ» շարժումն էր քաղաքային տրանսպորտի վարձավճարի թանկացման դեմ<sup>1</sup>, որի համակարգող խմբում էին այսօրվա «փորձառու» կամ «պրոֆեսիոնալ» ակտիվիստները (այն է՝ ակտիվիստներ, որոնք կուտակել են փողոցային պայքարի տարիների փորձ՝ սկսելով բնապահպանական և հանրային տարածքի համար պայքարներից), ինչպես նաև «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հիմնադիր անդամները, այդ շարքում՝ պատգամավոր և «Իմ քայլը» դաշինքի անդամ և 2018 ԱԺ ընտրություններում առաջադրված թեկնածու Լենա Նազարյանը:

Այդպիսով՝ հայկական հեղափոխության օրերին հանրային տարբեր շերտերի մոբիլիզացիայի և կոգնիտիվ ու հուզական ներգրավման հարցում մեծ նշանակություն ունեցան քաղաքացիական հասարակության տարբեր կողմերի (նորելուկ երիտասարդական նախաձեռնություններ, հնաբնակ ակտիվիստներ, ՔՀԿ անդամներ, ազատ օնլայն մեդիա հարթակներ, որոշ ռադիոալիքներ) միջև արդեն իսկ գոր-

1. Բողոքի ալիքը սկսվեց 2013 թ. հուլիսի 19-ին Երևանի քաղաքապետարանի առջևի աստիճաններին տասնյակ ցուցարարների նստացույցով՝ ի հակազդում 50%-ով տրանսպորտի գինը ավելացնելու քաղաքային իշխանության որոշմանը: Բողոքի մասշտաբը հաջորդող օրերին զգալիորեն մեծացավ և վերաճեց քաղաքացիական անհնազանդության՝ ընդգրկելով ինչպես շարքային քաղաքացիների, այնպես էլ մի շարք հանրայնորեն հայտնի մարդկանց: Հանրային ճնշման ներքո քաղաքապետը հուլիսի 25-ին հանդես եկավ նոր ուղեվարձը չեղարկող հայտարարությամբ:

ծող ֆորմալ և ոչ ֆորմալ ցանցերը: Ֆեյսբուքի<sup>2</sup> և Տելեգրամի միջոցով նրանք կարողացան ոչ միայն ինքնակազմակերպվել, այլև ներգործել հանրության լայն հատվածների վրա: Այս զանգվածային մոբիլիզացման մեջ աննախադեպ էր նաև երիտասարդների մասնակցության աստիճանը. ի տարբերություն փողոցային պայքարին միանալու նախորդ դրվագների՝ այս անգամ ուսանողների մասնակցությունը շատ ավելի կոնսոլիդացված ու բարձրաձայն էր՝ «Ազատ, անկախ ուսանող» առանձին կարգախոսով:

Հայաստանում քաղաքացիական նախաձեռնություններն ունեն տարիների փորձ՝ օգտագործելու կամավորության, ապակենտրոնության, ոչ բռնի բնույթի, համատեղ ջանքի և այլ վերոնշյալ սկզբունքները՝ հաջողության այս կամ այն աստիճանով: Այս փորձառությունների շնորհիվ բողոքի պրակտիկաները հղկվել, հարցադրվել, իմաստավորվել ու վերանայվել են: Այս ժամանակահատվածում հանրային տարածքների օգտագործման, հանրային շահերի պաշտպանության և սոցիալական արդարության վերաբերյալ (ծախական) գաղափարներն առաջ եկան ու որոշակիորեն զարգացան Հայաստանում, իսկ արդեն իսկ ձևավորված՝ իրավունքների ջատագովության առաջադիմական դիսկուրսները վերականգնվեցին ու ավելի ժողովրդականացվեցին:

Մոբիլիզացման ռազմավարության մեջ կարևոր դեր ունեցավ այնպիսի զանցառական ռեպերտուարների (որոշ ֆորմալ օրինակարգերի խախտումներ թույլ տվող) նորամուծությունները, ինչպիսիք էին արագաչափերի խափանումը և հանրային նշանակության շենքերի ժամանակավոր գրավումները (հատկապես Երևանի պետական համալսարանի և Հանրային ռադիոյի), շենքերի շրջափակումները, անգամ

2. Հետսոցիալիստական (կիսա)ավտորիտար շատ հասարակություններում, այդ թվում Հայաստանում Twitter-ի փոխարեն Facebook-ն է դարձել «թեժ փողոցի» պայքարի համակարգման հիմնական միջոցը:

կենցաղային կոմունալ վարձավճարներից հրաժարվելու, բանկային միջոցները կանխիկացնելու կոչերը: Կարևոր էր օգտագործել ուղիղ գործողության մարտավարությունների բազմազանեցված գործիքակազմ, որպեսզի հնարավոր լինեին սոցիալական դժգոհության՝ լայնորեն տարածված թեմաները թարգմանել տարբեր խմբերի համար հասկանալի մասնակցային գործողության, ինչպես նաև խախտել պետական մարմինների, այդ թվում՝ ոստիկանության արձագանքման մշտական սխեմաները: Մինչ այս սովորական՝ փողոցներ փակելու, երթերի պրակտիկաները ևս թարմացվեցին՝ դրանցում դինամիկություն, ապակենտրոնություն ներմուծելով: Մայրաքաղաքի ցուցարարները փակում էին ոչ թե մեկ հիմնական փողոց, այլ զուգահեռաբար բազմաթիվ փողոցներ և դրանք փակ պահում քանի դեռ ոստիկանական ուժերը չէին գերազանցում ցուցարարների ուժին՝ վտանգի դեպքում աշխատելով ցրվել և մեկ այլ վայրում փողոցը փակել:

Այսպիսի «անկազմակերպ» կազմակերպված մրցավազքը և անհասցե երթերը իսկական մարտահրավեր էին ծանրաշարժ ոստիկանական հատուկ մեքենաների և ստատիկ պայմանների և հստակ հրահանգների սովոր ծանրամարմին ոստիկանների համար: Այսպիսի մեթոդները, որոնք հիմնվում էին սկզբունքների (ազատ ինքնարտահայտման, ժողովրդի պահանջատիրության, խաղաղ անհնազանդության և այլն) և ոչ թե ռիտուալի անխախտության վրա, ստեղծագործման և նույնիսկ զվարճանքի մեծ հնարավորություն էին ընձեռում ցուցարարների (հատկապես երիտասարդների և այլ դինամիկ) խմբերին անգամ այդպիսի գերլարված իրադրության մեջ: Յուրաքանչյուր սոցիալական խումբ իր արժեքներն ընդգծող կրկնվող ռեպերտուարներով միանում էր և համերաշխություն հայտնում հեղափոխությունն իբրև նպատակ հռչակած շարժմանը: Այս նորամուծությունները ոչ միայն պերֆորմատիվ, այլև թերևս գաղափարական նո-

րամուծություններ էին և մանիֆեստացնում էին քաղաքական-տնտեսական վերնախավի իշխանությունը հարցադրելու և վերնախավից դուրս գտնվող խմբերի՝ «ժողովրդի» իշխանությունը տեսանելի դարձնելու ձգտումը: Հետևաբար մինչ այս հանրությանը հայտնի ընդդիմադիր ազգային ազատական դիսկուրսին զուգահեռ ինտենսիվ ներկայություն ունեցան իշխանության հարցադրման և արդարության ու հավասարության հաստատման՝ ծախսական տեսանկյունները: Ժողովրդավարության հաստատման, կոռուպցիայի դեմ պայքարի, օրինական ընտրությունների անհրաժեշտությանը զուգահեռ հարթակից հնչեցին առանձին խմբերի՝ կանանց ու հաշմանդամների, այլ լուսանցքային խմբերի (ակնարկն առնչվում էր ԼԳԲՏԻՔ մարդկանց) զորացման և նրանց հանդեպ անխտրական վերաբերմունքի դիրքորոշումներ, ակցիաների ընթացքում իրականացվեցին հայրիշխանությունը հարցադրող և օլիգարխիային մերժող գործողություններ:

Լայն հանրային ներգրավմամբ մոբիլիզացման համար նշանակալի պահ էր նաև իրականության ճեղքումը և դրա հակոտնյա բնույթի ցուցադրումը: 2010-ականների սկզբին «Մեկ ազգ-մեկ մշակույթ» միասնականացնող գաղափարախոսությունն ակտիվորեն օգտագործվում էր իշխանությունների կողմից՝ փորձ անելով լռեցնել հանրային խմբերի հակասությունները և ընդդիմադիր ձայները (Ժամակոչյան 2016): Տարիների ընթացքում այս միտումն ուժեղանում էր՝ դրվելով «անվտանգայնացման քաղաքականության» համատեքստում, որի կենտրոնում էր թշնամու դեմ միավորված լինելու անհրաժեշտությունը: Լեռնային Ղարաբաղում 2016-ի ապրիլյան էսկալացիայի հետևանքով կրած մարդկային զոհերի և անգամ վերահսկվող սահմանի որոշակի նահանջի (հողային կորստի) արդյունքում վարչակարգը լայն հանրության աչքերում կորցրել էր «ազգային միասնության» դիսկուրսի շահարկման մեծաշնորհը («Սասնա ծռե-

րին»<sup>3</sup> հանրային աջակցությունը դրա վառ դրսևորումն էր) և նույն դիսկուրսի ծիրում նույնիսկ վերաձևակերպվել որպես ազգային միասնության սպառնալիք՝ ներքին թշնամի: Վարչակարգի մեկ այլ, իսկ ինչպես հետո պարզվեց՝ վերջին փորձը ազգային միասնության վերաձևակերպումն էր «Ազգ-բանակ» կոնցեպտի (սկսած 2017-ից) ներքո, որը պահանջում էր, որ բոլոր հայերը միավորվեն իշխանությունների՝ արտաքին թշնամու դեմ օրակարգի շուրջ: Մինչև նույն ժամանակ տնտեսական ու սոցիալական ծախսողումները քողարկվում էին փոփոխությունների գնալու պատրաստակամության ծխածածկույթով (Ռուսաստանից վերադարձած տեխնոկրատ վարչապետ Կարեն Կարապետյանի ֆենոմենը, իբր պառլամենտարիզմի մշակույթի ներմուծումը և այլն):

Հետևաբար, հեղափոխության շրջանում դիմադրական նա-րատիվների վերաներկայացման միջոցով ընդգծելով վարչակարգի հետ հակադրությունը և նրանց հեշտորեն դուրս թողնելով «համերաշխության» շրջանակից՝ հնարավոր դարձավ հասնել քաղաքացիների կամ «ժողովրդական միասնության» ձևակերպմանը և մոբիլիզացմանը՝ շարժման տարբեր մասնակիցների տեսանելիությունն ապահովող ռեպերտուարներով և գործիքներով:

Ապակենտրոն ցանցայնության սկզբունքն ինքնին բազմապատկում էր մեկ միևնույն նպատակի համար Հայաստանի տարբեր բնակավայրերում գործադրվող ակցիաները (երթերը, դասադուլները, գործադուլները, շրջափակումները) և դրանց մասին պատումներն ու դրանց վերաներկայացումները: Սոցիալական ցանցերով նույն պահին տասնյակ տարբեր գործողությունների մասին տեղեկատվության ու

3. 2016 թ. հուլիսի 17-ին զինված մարդկանց մի խումբ, որ իրենց անվանում էին *Սասնա ծռեր* գրոհով վերցրեց Երևանի ոստիկանության ՊՊԾ գնդերից մեկը՝ վերցնելով ինը պատանդ: Նրանց պահանջների շարքում էր ընդդիմադիր առաջնորդ, կալանավորված ժիրայր Սեֆիլյանի ազատումը և նախագահ Սարգսյանի հրաժարականը:

դրանց պատկերների շրջանառությունը մոբիլիզացման շնչառությունն ապահովող կողմերից էր: Դա ապահովում էր մինչ այս կոծկված, ճնշված ընդվզման տեսանելիությունը և վերաներկայացումը՝ միաժամանակ ակնհայտ էր դարձնում ռեպրեսիվ ռեժիմի կողմից ճնշման փորձերն ու պրակտիկաները: Այս նույն՝ հակամարտության և ընդվզողների զանգվածայնության տեսանելիության նպատակին էին ծառայում նաև դրոշների, պաստառների ներկայությունը բնակավայրերի տարբեր շենքերի, ծառերի, խանութների վրա, Երևանում կարգախոսների գրաֆիտիները, այլ վիզուալ, ինչպես նաև ձայնային ներկայությունները: Տեսանելիության և մոբիլիզացման հաջողված քայլերից էր «Իսլանդական ծափողջույնների» փոխառումը, ուշ երեկոյին կաթսա-շերեփներ խփելու ակցիայի փոխառումը, ինչպես նաև քաղաքացիների կողմից շատ տեղական, սակայն արդեն քաղաքական նշանակություն ձեռք բերած՝ «մեքենայի շչակների» զանգվածային արձակումը, երգուպարը, պատանեկան խաղերը: Հասարակական կազմակերպությունների դիտորդական, իրավապաշտպանական գործունեությամբ և առցանց մեդիայով ապահովվող տեսանելիության ձևերին այս անգամ ավելացավ բարձունքից դրոնով երեկոյան ամփոփիչ հանրահավաքների տեսալուսանկարահանումը: Վերջինս ցուցարարների բազմության հիմնական ցուցիչներից դարձավ, որով ոչ միայն իրականությունն էր ցուցադրում, այլև պարտավորեցնում էր շարժման աջակիցներին, և ուրեմն բազմամարդ ներկայությունը մոբիլիզացնող նշանակություն ուներ:

Այսպիսով՝ մոբիլիզացիոն ձևերը, բողոքի գաղափարական շրջանակումը, շարժմանը մասնակցելու հանձնառության (հեղափոխական ինքնության) կառուցակցման ներուժը բավարարեցին հեղափոխության կայացմանը: Եվ սա հնարավոր էր երեք տարբեր՝ մրցակցող և միաժամանակ փոխլրացնող դիսկուրսների ու պրակտիկաների գործա-

դըրմամբ՝ ազգային-տեղական, լիբերալ և ծախական, որոն-  
ցից վերջին երկուսը՝ առաջադիմական քաղաք(ացի)ական  
հասարակության կուտակած, մշակած և վերամշակած գի-  
տելիքի պաշարներից: Այսպես, դեռ ընթացիկ օրերից հե-  
ղափոխությունը սկսեց անվանվել «սիրո և համերաշխու-  
թյան հեղափոխություն»՝ հղելով մի պաստառի, որ երևացել  
էր Հանրապետության հրապարակում ապրիլի 25-ին: Այն  
բավարար նկատելի էր, և բեմից ելույթ ունեցողներից մեկը  
արտասանել էր պաստառի գրառումը՝ ի լիակատար ընդու-  
նում հեղափոխության այս բնութագրի: Այն հետո բազմիցս  
կրկնվեց՝ հատկապես հեղափոխության առաջնորդ Փաշի-  
նյանի կողմից (եղան նաև վերածնակերպումներ): Այս պաս-  
տառը, սակայն, ուներ կոնկրետ հեղինակ և ձևավորման  
միջավայր. մտահղացվել էր իրավապաշտպան գործիչների  
հետ ակտիվիստ արվեստագետների շփումների ու քննար-  
կումների ընթացքում (վերջիններս ակտիվորեն ներգրավ-  
ված էին հեղափոխական գործընթացում՝ հիմնականում  
ծախական գաղափարների «արվեստայնացմամբ»): Մեկ  
այլ՝ «դուխով» պաստառը ևս պատրաստվել էր ակտիվիստ  
արտիստի կողմից, և այն շուտով փոխակերպվեց հեղափո-  
խության ժողովրդականացման հիմնական ռեսուրսի՝ դառ-  
նալով դրա և կարգախոսը, և պատկերանշանը: Ոչ միայն  
այս օրինակում, այլև բազմաթիվ այլ դեպքերում շարժման  
քաղաքական հարթակը բավարար բաց էր՝ վերցնելու և  
ներքնայնացնելու սեփական ուղեգծին համահունչ շրջանա-  
կավորումները՝ հընթացս ծագող կամ նախապես մշակված:

Որպես աննախադեպ արդյունք՝ իշխանության վերարտադ-  
րության դեմ պայքարը վերափոխվեց միակուռ հանրության  
ճեղքման և իշխանության կառուցվածքի դեմ պայքարի, որ-  
տեղ դրսևորվեց սոցիալական արդարության հաստատման  
հանրային, թեև ոչ հստակ ձևակերպված պահանջ: Դրա  
օրինակներ էին սուպերմարկետները բոյկոտող ակցիանե-  
րը (որոնց սեփականատերերը ՀՀԿ անդամ և այդ ժամա-

նակ Սարգսյանին լոյալ օլիգարխներն են), աշխատողների  
իրավունքների հարցի բարձրացումը և այլն:

## 2.2. (Ինքն)անդրադարձներ հեղափոխությունից հետո. քննարկելով նոր իրավիճակը քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ

Վերլուծության այս հատվածը նվիրված է հեղափոխության ֆոնին՝ դրա ընթացքում և դրանից հետո, ՔՀ-պետություն հարաբերությունների վերաբերյալ ՔՀ ներկայացուցիչների վերանայված մտահոգությունների և հեռանկարների առավել նրբերանգային քննարկմանը՝ հիմնված 3 ֆոկուս-խըմբային քննարկումների վրա: Վերջիններս իրականացվել են հետևյալ երեք ոլորտներում գործող ՔՀ գործիչների հետ. մարդու հիմնարար իրավունքներ/դատարան, գենդերային հավասարություն/կանանց/ԼԳԲՏԻՔ իրավունքներ և բնապահպանական ակտիվիզմ: Թեմատիկ վերլուծության արդյունքում առանձնացրել ենք մի շարք ընդգծված թեմաներ, որոնք ստորև կքննարկենք: Տեքստում բոլոր մեջբերումներն այս ֆոկուս-խմբային քննարկումներից են, և դրանք հնչեցնող մասնակիցների ոլորտը/տվյալները ներկայացված չեն, քանի որ հաճախ էին շեշտադրումների և անգամ ձևակերպումների էական համընկնումները ՔՀ տարբեր ներկայացուցիչների մոտ:

### **Բոլոր հոյգերի հանրագումարը. հոյս, հուսահատություն և սպասում**

Հուզական լիցքի առումով հեղափոխությունը, կարծես թե, սնվել է և՛ հոյսից, և՛ հուսահատությունից՝ չնայած ոմանք՝ որպես շարժմանը սեփական մասնակցության մղող ուժ, առավելապես ընդգծում են առաջինը, մյուսները՝ երկրորդը: Հավանական է, որ ո՛չ աղոտ հոյսը՝ ընդհանուր հուսալքության ֆոնին, և ո՛չ էլ վերջնական հուսահատությունը, այլ

այդ երկու՝ հակոտնյա թվացող հոգեվիճակների միաժամանակյա և անգամ՝ սիներգիկ ներկայությունն էր շատ քաղաքացիական հասարակության գործիչների (և նաև հանրության) շրջանում, որ դարձավ դրդող ուժ: Հարցազրույցի շատ մասնակիցներ նշում են խառը՝ երկու ապրումներն էլ պարունակող ընկալումների մասին: Հուսալքության դրդող ներուժը կապված էր այն հանգամանքի հետ, որ առաջացել էր արդեն վերջնագծին հասած լինելու ընկալում, որտեղ կորցնելու բան չունենալու գիտակցումը բերում էր վերջին ճիգով և բոլոր ուժերով ռեժիմի դեմ պայքարելու իմաստավորմանը: Այսպիսով՝ անելանելիության «այլ կերպ չի լինի»-ն դուրս եկավ դատապարտվածության մասին պասիվ դատողության ուղեծրից՝ վերաձևակերպվելով «այսպես նույնպես չի լինի» ակտիվ դիրքորոշման: Միայն քաղաքական օպտիմիզմը (եթե անգամ պահպանվել էր փոքրաթիվ գործիչների շրջանում) կամ միայն պեսիմիզմը բավարար չէին լինի հեղափոխական ալիքի այդպիսի մասշտաբ բերելու համար, և դրա մասին են վկայում նախորդ բողոքի շարժումները, որոնք թեքված են եղել միայն մեկ կամ մյուս նժարին:

Ի հավելումն, շատերը կիսում էին ինչ-որ ակնկալումի զգացում, որ ինչ-որ բան «այս անգամ ուրիշ է» (նախորդ շարժումների համեմատ), ինչ-որ ավելի մեծ բանի զգացում, որը վերազանցում էր սոցիալական սահմաններն ու դրդում մաս կազմել համընդհանուր պրոցեսի կամ առնվազն ինչ-որ բան, որ պահանջում էր գործելու հրատապություն՝ վերապահումներ թույլ չտալով: Ուշագրավ է նաև, որ մի կողմից վերապատմումներից տպավորություն է, որ հեղափոխական ներգրավվածությունը ինքնանպատակ գործողություն էր («մենք պետք է պայքարենք՝ անկախ ամեն ինչից»-ը կարելի է համարել շատերի աշխատանքային կարգախոսը), մյուս կողմից՝ մասնակցության պատմություններում նըշմարվում է արտահայտված ինտենցիոնալություն շարժման բոլոր փուլերում, և այդ ինտենցիոնալությունն ուղղված էր

վարչակարգի վերարտադրությունը կասեցնելուն՝ որպես այդպիսին անզիջումային պահ հանդիսանալով:

*Հեղափոխությանը մասնակցությունն անելանելիության զգացումից էր. կամ հիմա ես մասնակցում, ու ինչ լինում է՝ լինի, կամ թողնում ես, որ «սերժը» վերարտադրվի:*

*Չես կարող չմասնակցել. վախենում ես պրոցեսներից դուրս մնալ:*

*Մյուս կողմից էլ՝ ինքուիտիվ զգում ես, որ հասունացող ինչ-որ բան կա, փոփոխության սպասում կա: Ակնթարթ էր, որ հասունացել էր, և կարող է տարբեր կողմերի հանրույթները գային ու միաձուլվեին, ու սկսվեր ինչ-որ պրոցես...*

Գործընթացը հուզականորեն խթանող էր: Առհասարակ, հուզականությունը հեղափոխության կարևոր չափում էր. սերը, կապվածությունը և ոգևորությունը ոչ միայն հայտարարված սկզբունքներ կամ արտաբերված բառեր էին, այլև շատերի կողմից ապրված հոգեվիճակներ, որոնցով կիսվում էին նաև հարցազրույցի մասնակիցները:

Տրամադրությունների և դրանց դերի առումով առաջիկա մարտահրավերներից մեկն այն է, որ քաղաքական օպտիմիզմը, որն այդքան անհրաժեշտ է ՔՀ գործիչների՝ պետության, ինչպես նաև հանրության հետ աշխատանքի շարունակականության համար, կարող է աղոտանալ նոր քաղաքական կազմավորման մեջ, որում տեղ են գտել ՔՀ տեսանկյունից մի շարք «կոմպրոմիսային» նշանակումներ: Բացի այդ՝ հուզական ասպեկտը արժանի կլինի ուշադրության նաև պետություն-հանրություն հարաբերությունների հետհեղափոխական փուլում: Այն կարևոր կմնա քաղաքացու՝ քաղաքական ներգրավվածության նույն մակարդակը պահպանելու, բայց ձևերը փոփոխելու կարիքի տեսան-

կյունից: Արդյոք տրամադրությունները կշրջվեն հակառակ նշանով (ինչպես հաճախ տեղի է ունենում ոգևորություններից հետո), թե կկապիտալացվեն՝ ավելանալով սոլիդարության զգացումին՝ հարց է, որն ազդեցություն կունենա ինչպես ակտիվիստական խմբերի, այնպես էլ ավելի լայն հանրության քաղաքական մասնակցության, դրանց ձևերի ընտրության վրա:

**Քաղաքացիությունը՝ որպես հավասարություն. հորիզոնականություն, ապակենտրոնություն, «տարբերությունների հեղաձուլում»**

Փողոցների բազմամարդ դառնալուն զուգընթաց, որտեղ բողոքի մասնակիցներ էին սովորական քաղաքացիներ ամենատարբեր հիմքերից՝ «փորձառու» ակտիվիստներից մինչև նախկինում որևէ բողոքի չմասնակցած միջին տարիքի կանայք, ընդհանրությունները հետզհետե դառնում էին ավելի կարևոր, իսկ տարբերություններն ու անհամաձայնությունները «հետաձգվում» էին հանուն ընդհանուր նպատակի: Այս համատեքստում միևնույն քաղաքացիություն ունենալը դառնում էր ֆունկցիոնալ միավորող մենք-ինքնություն տարբեր սոցիալական խմբերի համար, որոնք այլ իրավիճակում անգամ միմյանց հակադրվող ու չհանդուրժող են: Բացի այդ՝ հեղափոխական տարածքը նաև ընկերներին, համախոհներին, ծանոթներին հանդիպելու ու նրանց հետ մտերմության ընդգծված զգացում ապրելու վայր էր: Գործընթացը բնութագրվում էր որպես «հետաքրքիր», «հուզական», «ծանոթներ տեսնելու» հնարավորություն տվող: Այսպիսով՝ հեղափոխական տարածը խիստ մարդկայնացված և «հավասարեցված» էր՝ թե՛ ծանոթների միջև միջանձնային շփումների, թե՛ անծանոթների հետ կրճատված սոցիալական դիստանցիայի զգացումի և ընդհանուր սպասումների՝ «նույն բանն ուզելու» առումներով:

Նույնություններն ու ընդհանրություններն ավելի կարևոր էին, քան տարբերությունները: Իհարկե, տարբերություններն էլ էին երևում, բայց հանդուրժողականություն էր՝ հանուն նրա, որ Սերժը չլինի:

(...)Հազար ու մի բան կուզենայիր ասեիր, բայց գիտես, որ նպատակն այդ պահին նույնն է...:

Մասնակցում ես, որովհետև տեսնում ես, որ դպրոցականներն են մասնակցում, ուսանողները, չկան կոնկրետ խաղացողներ, դիտորդներ, արձանագրողներ, չկան կոնկրետ տարածքներ՝ ի տարբերություն մյուս՝ մինչ այդ տեղի ունեցած շարժումների:

Հարցազրույցների մասնակիցները նշում էին քաղաքացիության՝ որպես ներգրավման առաջնային հիմքի և հավասարության ունիվերսալ չափանիշի մասին, որ կիսում էին գործընթացի բոլոր մասնակիցները՝ դպրոցականներից մինչև ՄԻ ակտիվիստներ: Ի հավելումն, այլ՝ մասնագիտական կարգավիճակ ունենալը (օրինակ՝ լրագրող կամ ՄԻ պաշտպան լինելը) այս դեպքում ոչ թե մի կողմ էր դրվում՝ «կամ քաղաքացի/ակտիվիստ, կամ պրոֆեսիոնալ պարտականություն կատարող» երկընտրանքի տրամաբանությամբ, այլ օգտագործվում էր դերային փոխարկմամբ՝ լրացուցիչ ճկունություն հաղորդելով ներգրավմանը և դրա շարունակականությանը նպաստելով:

Մասնակցում ես առաջին հերթին որպես քաղաքացի: Պետք է՝ ընթացքում հանդես ես գալիս որպես իրավապաշտպան. հանդես ես գալիս տեսախցիկի առաջ և տեսախցիկից այն կողմ:

Հարգանքի զգացողությունը սեփական անձի, սեփական երկրի, քաղաքացիների նկատմամբ իրականում ահավոր կարևոր էր:

Մենքի զգացումն էր, չկար լիդերային վիճակը, իհարկե հարց է առաջանում, թե ինչպես այդ հորիզոնականը նորից վերածվեց ուղղահայացի:

Հետհեղափոխական մարտահրավերն այստեղ այն է, որ նկարագրված «ֆունկցիոնալ սոլիդարությունը» դեռ պետք է վերամտածվի՝ ձև ու բովանդակություն ձեռք բերելու համար՝ դրա ինքնըստինքյան հասկանալի ձևից դեպի հետհեղափոխական սոցիալական և քաղաքական հարաբերություններ անցում կատարելիս, որոնք կրկին լի են բնորոշ տարբերություններով: Թե ինչպես ՔՀԿ-ները, բայց նաև իշխանությունները կխոսեն ու կգործեն՝ աշխատեցնելու համար սոլիդարության այս զգացումը ընտրություններից հետո, տեղին հարց է առաջիկա փուլի համար: Ասվածի հետ առնչվող հարց է նաև այն, թե ինչպես պահպանել հորիզոնականության փխրուն ձեռքբերումը, որ ոմանց կարծիքով նորից կարող է հետ վերածվել ուղղահայացության՝ վերջինիս ինստիտուցիոնալ և ավանդույթային ուժով:

**Քաղաքացիների գործորդությունը՝ որպես կարևոր, բայց ոչ բավարար ձեռքբերում**

Ձորեղացած քաղաքացին հարցազրույցի մասնակցած ակտիվիստների և ՄԻ պաշտպանների մեծ մասի ուշադրության կենտրոնում է: Այս կամ այն ձևակերպմամբ՝ ՔՀ ներկայացուցիչները հավատ էին հայտնում, որ նոր իշխանություններն արդեն գործ են ունենալու և հաշվետու են լինելու ավելի զորեղացած և ձայն ունեցող քաղաքացիության հետ,



քան նախկինում էր: Մեծ մասի մոտ առկա է համոզմունք, որ տեղի է ունեցել ներքին, իրական սոցիալական փոփոխություն, որը «հաշվարկվում է ապրիլի 23-ից»: Թեև առջևում խնդիրներ են մատնանշվում՝ ոմանց գնահատականներով բավականին մտահոգիչ, մյուսների համար՝ միանգամայն վերահսկելի, ընդհանուր դատողությունն այն է, որ տեղի ունեցած սոցիալական փոփոխության առնվազն մի մասը, ինչպես տիրոջ զգացումն է, անշրջելի է:

*Արդեն ով էլ գա, պիտի հաշվի նսրի մեզ հետ, ու էլ հետ հաշվարկ չկա: Արդեն ամեն ինչ հաշվարկվում է ապրիլի 23-ից սկսած...*

*(...) Մարդիկ արդեն մինչև վերջ գնացող են: Արդեն ձևավորվում է պահանջարեք, ինքնագիտակից քաղաքացի: Սա հեղափոխության ամենամեծ ձեռքբերումներից մեկն է:*

*Մարտահրավերներ առջևում.* այս նույն հարցում հարկ է հաշվի առնել նաև հնչած հոռետեսական գնահատումները, որոնց համաձայն այդ ձեռքբերումները շրջելի են ու կարող են ձեռքից սայթաքել, եթե քաղաքական և սոցիալական հարաբերություններում դեռևս գերիշխող հայրիշխանական պատերնները չառերեսվեն ու չհարցադրվեն: Բացի այդ, հարկ է մտքում ունենալ, որ քաղաքացիները զորեղացան (հեղա)փոփոխության լայնամասշտաբ, ոչ սովորական գործընթացին սեփական գործողություններով մասնակցությամբ, որոնք ունենում էին տեսանելի և կոլեկտիվ ազդեցություն: Այժմ՝ հետհեղափոխական փուլում, դեռևս պարզ չէ, թե որոնք կլինեն այն տարածքներն ու գործողությունները, որոնք մարդկանց ներգրավված կպահեն որպես քաղաքացիների՝ իրենց առօրյայով ապրելիս ու աշխատելիս:

***Չներգրավվելը՝ գործողության այլ ձև. պահպանելով եռանդը նորազարականության դեմ սպասվող առավել ծանր պայքարում***

Կան դեպքեր, երբ հեղափոխական գործողություններում չներգրավվելը՝ արմատական քննադատական դիրքավորմամբ, կարող է համարվել հավասարապես մասնակցային: Հեղափոխության ընթացքում կիրառվող շարժման պրակտիկաները զգալիորեն ավելացնում էին ինքնատիպության, ոգևորվածության և ուժի զգացումները լայն հանրության շրջանում: Գործընթացը օրգանական համարելը կարևոր, լայնորեն տարածված փորձառություն էր՝ հաշվի առնելով հանդերձ, որ այդ պրակտիկաներից շատերն իրականում հայտնի, նախկինում գործածված և ուսուցանելի մեթոդաբանության շրջանակներում են: Ու թեև դա որպես այդպիսին խնդիր չէ, և առկա միջազգային փորձը օրգանական կերպով տեղական գործընթացներում ներկառուցելու կարողությունը նույնիսկ արժանիք կարելի է համարել, այդուհանդերձ խնդիրն այն է, որ հետհեղափոխական իրականությունն արդեն կարող է չարտացոլել նույնքան ժողովրդական ցանկություններ և նույնքան ներքին օրակարգ: Այս համատեքստում զուգահեռներ են անցկացվում վրացական օրինակի հետ, որտեղ Վարդերի հեղափոխությունից հետո ռեժիմի փոփոխությանը հետևեց նորազատական քաղաքականությունների արմատավորումը: Ոմանք նման դատողությունները հնչեցնում էին որպես իրական հավանականություն ունեցող կանխատեսումներ, մինչդեռ մյուսները՝ առավելապես որպես սթափեցնող հիշեցում մի հնարավոր տարբերակի, որը պետք է թույլ չտալ սեփական հետևողականությամբ:

Կա նաև մյուս կողմը, երբ չես մասնակցում: (...) Չես կարողանում մասնակցել, որովհետև հեղափոխական գործողություններն ակնհայտ էին սկզբից (...) պահում ես էներգիադ, որպեսզի պայքարես ռեժիմի փոփոխությունից հետո:

Ես զգում էի, որ մենք հնարավոր է՝ հայտնվենք Վրաստանի պես մի դրության մեջ, երբ իսկապես ժողովրդական աշխատանքի, ժողովրդի գործունեության միջոցով տեղի է ունենում վարչակարգի փոփոխություն, բայց բովանդակության իմաստով տեղի է ունենում շատ ավելի նորազարթնական կարգերի հաստատում:

Ավելի ուժեղ ՔՀ ունենալու տեսակետից մարտահրավեր է այն, թե արդյոք այս արմատական ձայներն ու վիճարկումները ևս կգտնեն իրենց արտահայտման տարածքները և կլսվեն նոր կառավարության կողմից:

**Չհաղթահարված հայրիշխանություն**

Քննադատության ռադիկալ կողմում գտնվող հիմնականում ֆեմինիստական տեսակետները հեղափոխությունը խնդրականացնում են նաև իր «չլուծված» հայրիշխանության համար: Մինչդեռ հարաբերությունների՝ հեղափոխության օրերին ծագած և ծավալված նոր ձևերը, ինչպես օրինակ՝ փողոցներում անձանոթ մարդկանց միջև ջերմությունը, իսկական սոլիդարության և հավասարության զգացումը ընդունվում են, սակայն քաղաքական ոլորտում գերակայող հայրիշխանական արժեքների փոփոխություն դրանց հետևում չեն տեսնում, ինչը քննադատողներին անգամ դրդում է տեղի ունեցածը հեղափոխություն անվանել վերապահումով:

Տեսնում ես փողոցում ձևավորվող հետաքրքիր պրակտիկաներ, որ անձանոթ մարդիկ իրար հետ մտերիմ էին, և մի տեսակ ժողովրդավարական համերաշխությունը հենց ժողովրդական էր: Եվ ցավում ես, որ հիմա այդ համերաշխություն բառն այդ ձևով նենգափոխվել է: Բայց այդ պրակտիկաները, եթե չեն դառնում քաղաքական արժեքներ, կորչում են: Հերևաբար հեղափոխությունը հեղափոխություն չէր, որովհետև արժեքներ՝ հայրիշխանական արժեքներ չեն փոխվել:

Ընդհանուր առմամբ, չնայած հեղափոխությանը կանանց նշանակալի և անգամ՝ ստեղծարար մասնակցությանը՝ ակտիվիստների մի մասը որպես մտահոգություն և սպասվող մարտահրավեր կիսում են հայրիշխանությունը և կանացի ձայների պակասը նոր քաղաքական ասպարեզում՝ դիտարկելով դա որպես պոտենցիալ սահմանափակող գործոն գենդերային-զգայուն և այլ լուսանցքային թեմաներն օրակարգ բերելու հեռանկարի համար: Մեկ այլ հարց է այն, թե արդյոք նոր առաջացած հարաբերության ձևերն ու պրակտիկաները կպահպանվեն ինստիտուցիոնալացման գործընթացում՝ հաշվի առնելով, որ դրանք պիտի «շերտադրվեն» գործող ինստիտուտների վրա, որտեղ դեռևս քիչ չեն ավագ սերնդի և նախորդ ռեժիմից պաշտոնավարող գործիչներ, աշխատանքային ավանդույթներ:

**Ինստիտուցիոնալացում՝ վստահության ցանցերի փոխարեն**

Վստահության ցանցերի մասին շատերը նշում են որպես կարևոր, սակայն վտանգավոր ռեսուրս և որպես ընդամենը ժամանակավոր լուծում՝ հիմնականում մինչև ընտրությունները (որոնք զեկույցն ավարտելու ժամանակ արդեն կայացել էին): ՄԻ ակտիվիստները/ՔՀԿ-ները նոր կառա-

վարության մարմինների հետ հիմնականում առնչվում են այդ վստահության ցանցերով, այդ թվում՝ անձնական կապերով: Մինչդեռ կարճաժամկետ առումով սա արդյունավետ է, հարցվողները լավ էին գիտակցում, որ կարիք կլինի նոր իրավիճակում հետզհետե հրաժարվել այս պրակտիկայից, ու երկարաժամկետ հեռանկարում ընդառաջ գնալ հարաբերությունների ինստիտուցիոնալացմանը: Վերջինս ենթադրում է վճռականություն և շարունակական ինքնավերլուծություն, քանի որ հակառակ դեպքում ընկերության իներցիան և առաջացող առանձին խնդիրները լուծելու հեշտությունը կարող են հաղթել: Բացի այդ՝ ընկերական հարաբերությունները կարող են կոտրել անհրաժեշտ բաց և սուր քննադատությունը «իհարկե, հասկանում ենք» նախաբանով սկսվող մեղմասացություններով: Դա նախկին ակտիվիստ, այժմ կառավարության անդամ ընկերներին կարող է հետզհետե դարձնել ավելի (ինքնա)պաշտպանողական և փակ իրապես տարբերվող տեսակետների հանդեպ:

*Հիմա մեր ֆունկցիան այն է, որ պետք է որոշենք, որ չպետք է օգտագործենք որևէ անձնական կապ: Հատկապես, եթե ինստիտուցիոնալ ինչ-որ բաներ ենք անում: Եթե մարդու կյանք է՝ ուրիշ բան: Ինձ թվում է՝ նախորդ իշխանության փրկածությունը սկսվեց հենց դրանից:*

*Քաղաքականությունների կամ ծրագրային առումով հիմա շատ դժվար է ինչ-որ բան առաջ բրդել, էդ մակարդակով անհնար է, բայց մենք նկատել ենք, որ կոնկրետ քեյսերի մակարդակով կարողանում ենք ազդեցություն ունենալ դրանց ընթացքի վրա, որովհետև ընկերներ ունենք կառավարությունում:*

*Հիմա հնարավոր է նրանց անձնապես դիմել և խնդիրներ լուծել: Բայց սրանից պետք է արդեն խուսափել: Մենք ունենք հարաբերություններն ինստիտուցիոնալացնելու հարց:*

**Նոր քաղաքական հյուսվածքը՝ «խնամքով վարվեցողության» ենթակա**

Հեղափոխությանն անմիջապես հաջորդող շրջանը բնորոշվում է ՔՀ խմբերի՝ կառավարության հետ գործ ունենալիս դրսևորվող նկատելի հավասարակշռմամբ, ծանրութեթև անելով և զգուշավորությամբ: Այսպիսի «ժամանակավոր» խնայող մոտեցումը երկու հիմնական նկատառումներից է բխում: Նախ, այն «նոր ծնված, խոցելի մարմինը» (հարցված ՄԻ պաշտպաններից մեկի ձևակերպմամբ), որին կյանք է տրվել համատեղ ջանքով, դեռ ժամանակ է պահանջում՝ ամրանալու և «հակահեղափոխության» հանդեպ դիմադրողականություն ձևավորելու համար: Համարվում է, որ չչափավորված, ռեակտիվ քննադատությունը, որը տեղ ուներ և հնարավոր է՝ արդարացված էր («գոնե մի բան ստանալու» տրամաբանությամբ) նախկին ռեժիմի հետ հարաբերությունների դեպքում, այժմ վնասաբեր կարող է լինել, այդ թվում՝ մեդիա մանիպուլացման հավանական նյութ դառնալու պատճառով: Ասվածի հետ կապված է մեկ այլ մտավախություն, որ սուր քննադատությունը կարող է նոր թիմին դրդել «ինքնապաշտպանական» հակազդումների և կոշտացնել նրանց դիրքը: Այսպիսի լարումն անցանկալի է այս փխրուն փուլում մարդու իրավունքների զգայուն թեմաներ առաջ տանելու հնարավորություն բացելու տեսանկյունից: Բանն այն է, որ ՔՀ հետ անհարմարություններ զգալով՝ նոր իշխանությունը կարող է հետզհետե ավելի շատ հենվել իր հիմնական ռեսուրսի՝ հանրային մեծամասնության վրա, որը ցածր ընկալունակություն և ընդունում ունի ՄԻ մի շարք թեմաների, այդ թվում՝ գենդերային հարցերի և բնապահպանական մտահոգությունների հանդեպ:

*Իհարկե մենք շար ինայում ենք էս կառավարությանը, կարծես էն փխրուն մարմինը, որ միասին ձևավորել ենք, դեռևս չի կայունացել, որ իմանանք՝ ինչն ենք քննադատում կամ ինչն ենք պաշտպանում: Էնպիսի հարց չտաս, որ իր ինքնությունը վիրավորվի, էնպիսի բան չանես, որ պատկերացումների մեջ բեկում մտցնես, հեյոռ ավելի կոշտ դիրքավորում ունենա:*

*Մարդու իրավունքների գիտակցություն և բազմազանության պատկերացում ունեցող մարդիկ իսկապես Հայաստանում քիչ են: (...) Մրավախություն կա, որ իշխանությունը, լինելով ոչ այնքան ամուր, կողմնորոշվելու է մեծամասնության վրա, համեմայն դեպս՝ մարդու իրավունքների հանդեպ ոչ զգայուն մեծամասնության վրա:*

Այսպիսով՝ ՔՀ շրջանում բավականին գիտակցված ու վերլուծված հետ-հեղափոխական մարտահրավերներից մեկն այն է, որ զգուշավորության և վտանգավոր գերխնամքի միջև սահմանը բարակ է, և որ թե՛ քաղաքացիական հասարակությանը, թե՛ քաղաքական իշխանությանը լճացում է սպառնում, եթե շուտով չվերսկսվի լիարժեք ու լիաձավալ քննադատությունը: Վերջինիս նոր ձևեր և հարթակներ մտածելն, անշուշտ, իր հերթին առաջադրանք է:

**«Առկախված նորազարականությունը» և բնապահպանական խնդիրները՝ որպես առաջնագիծ**

Հավասարակշռման վերոհիշյալ խաղը հատկապես նրբին է բնապահպանական խնդիրների ոլորտում և առանձնապես՝ Ամուլսարի<sup>4</sup> ոսկու հանքի դեպքում, որում պայքարողների՝

4. Ամուլսարը Հայաստանի հարավային և կենտրոնական հատվածները մատակարարող ջրահավաք ավազանի հանգույցներից է, որը թունելով կապված

կառավարության հետ անտագոնիզմի և ուղիղ առճակատման նախկին ձևերը փոխարինվել են բանակցության որոշակի տարրերով և բողոքի պակաս կոշտ ձևերով՝ նաև նկատի ունենալով գործում միջազգային կապիտալի առկայության խնդրական կողմը: Մյուս կողմից, մտավախություններ կան, որ այս համբերատար գործակցային մոտեցումը ըսկսում է թյուր մեկնաբանվել ու չարաշահվել նոր թիմի կողմից:

Հեղափոխությունը գերազանցապես հիմնված էր նախկին ռեժիմից օր առաջ ազատվելու և հակաժողովրդավարությունը կասեցնելու հրատապության ընդհանուր համոզմունքի վրա, բայց պատասխան չունեցող «իսկ հետո՞» հարցին: Հեղափոխության անբավարար գաղափարական հիմքը այսօրվա հետհեղափոխական իրավիճակում դառնում է լուրջ բացթողում, որը հասցեագրել է պետք: Այս համատեքստում ձախակալական ակտիվիստները խնդրականացնում են Փաշինյանի հայտարարությունը «իզմ»-երի ժամանակաշրջանի ավարտի մասին՝ որպես վտանգավոր խուսափում գաղափարաբանական դիրքավորումից: Եթե անգամ նրա ասելիքը այլ (հարա)նշանակություն ունեցի, մրկնույն է՝ ակնհայտ է, որ վարչապետի շուրջն այսօր շատ չեն կառավարության կամ ԱԺ անդամներ, որոնք հստակորեն արտիկուլացնում են ձախակալական դիրքավորում (կամ ունեն նեոլիբերալ օրակարգի և դրա առաջխաղացման ռիսկերի քննադատական ըմբռնում) կամ գոնե հստակ արտահայտում են այլ գաղափարաբանական լոյալություն, ինչը բանավեճի դաշտ կբա-

է նաև տարածաշրջանի քաղցրահամ ջրի ամենամեծ պաշար Սևանա լճի ավազանի հետ: «Լիդիան Արմենիա» ընկերության կողմից առաջարկված ոսկու բաց հանքում ցիանիտային եղանակով արդյունահանման նախագիծը, ըստ բնապահպանների, շրջակա համայնքների բնակիչների և միջազգային անկախ փորձագետների՝ իրական բարձր ռիսկեր է պարունակում բնական միջավայրի վրա ազդեցության (ջրերի և հողերի աղտոտման) առումով ինչպես շահագործման, այնպես էլ՝ դրա դադարումից հետո հարյուրամյակների կտրվածքով: Այս և այլ ռիսկերի պայմաններում «Լիդիան Արմենիայի» իրավախախտողներին հաջողվել է ստանալ իրավական անհրաժեշտ լիցենզիաները ՀՀ նախկին կոռուպացված իշխանության օրոք՝ առանց հանրային լուսմների պատշաճ իրականացման և հանրային բողոքը հաշվի առնելու:

ցեր: Այսպիսի դիրքավորումն ու ըմբռնումը խիստ անհրաժեշտ են՝ դիմակայելու համար այնպիսի ոլորտներում նորազատական քաղաքականությունների ազդեցությանը, ինչպիսիք են հանքարդյունաբերությունը և միջ- կամ անդր-ազգային հետաքրքրություն ներկայացնող այլ տնտեսությունները: ՔՀ համար մարտահրավերն է այժմ, թե արդյոք և ինչպես հնարավոր կլինի ներգործել երկրի տնտեսական քաղաքականությանը վերաբերող որոշումների վրա:

*Նույն Ամուլսարի հարցում հիմա մենք կաշկանդված ենք, որովհետև նախորդ կառավարության ժամանակ եթե այսօրվան ձգձգվեր, մենք կարող էինք միջպետական ճանապարհի փակել, լուրջ ցույցեր անել, իսկ հիմա չենք ուզում նոր կառավարությանը դեմ դուրս գալ, ուզում ենք շանս տալ: Բայց տեսնում ենք, որ կառավարությունն էլ առիթից օգտվում է ու ձգձգում:*

*Նիկոլն ինչ-որ ինտուիտիվ բաներ ունի՝ որպես ուղղակի մարդ կամ լրագրող, որը հետաքննող է և «քթի ծակ» ունի ու կարող է զգալ՝ ինչ-որ բանի հետևում մարդիկ կշահեն, թե՛ վնաս կստանան, բայց իր կառավարությունում շատ են մարդիկ, որոնք կամ հնից մնացած են, կամ էլի ժամանակակից նորազատական արժեքների կրողն են, այդ թվում նաև այսպես կոչված ՔՀ դաշտից եկած:*

*Ես գիտակցել եմ, որ իշխանափոխությունից հետո անձամբ ինձ անհրաժեշտ է մեծ, ահռելի ռեսուրս անձնական ֆիզիկական էներգիայի և հոգեկան պատրաստվածության, որովհետև ռեժիմի փոփոխությունից հետո նորազատականացման դեմ պայքարելու մեծ անհրաժեշտություն եմ տեսնելու, և պիտի անեմ դա:*

**Օրակարգ ձևավորող և ոչ կառավարությանը կադրեր մարակարարող ՔՀ**

Քաղաքացիական հասարակության՝ քաղաքականության

մեջ ներգրավվելու աստիճանի և ձևի վերաբերյալ երկու հիմնական տեսանկյուն կա: ՔՀ ներկայացուցիչների մի մասը կատարել են քաղաքականություն մտնելու ոչ դյուրին ընտրություն՝ կառավարական մարմիններում աշխատանքի հրավիրվելով կամ ԱԺ ընտրություններին որպես թեկնածու առաջադրվելով, և այդպիսով ակնկալում են իրականացնել «փոփոխություն ներսից»: Մյուսներն ավելի հակված են կարծել, որ կառավարության հետ այժմ պետք է ավելի շատ աշխատել, ինչն անպայմանորեն չի նշանակում համագործակցել կամ ձուլվել: Տեղին է թվում այն տեսակետը, որ այս աշխատանքը՝ լինի գործակցության, թե վերահսկողության ձևով, պետք է տեղի ունենա սեփական գիտակցված դիրքավորմամբ և հարաբերական սահմանագծի վրա, և որ օրակարգերի վրա ազդելու փորձերը չեն կարող հանգեցվել կառավարությանը ոլորտն իմացող կադրեր մատակարարելուն: Հարցված ՔՀ ներկայացուցիչները կիսում են այն ըմբռնումը, որ ՔՀ-ները հետզհետե պետք է դառնան օրակարգ սահմանողներ իրենց համապատասխան ոլորտներում՝ ճարելով ձևեր հանրային քաղաքականությունը ձևակերպելուն մասնակցելու համար:

*Մեղիան շատ լավ հարթակ է, որտեղ կարելի է միանգամից ցույց տալ [կառավարությանը], որ այ սա քննադատվում է, իսկ սա՝ այսքան համախոհ է ապահովում: Մեխանիզմներից մեկը դա է՝ պարբերաբար հիշեցնելը, որ երբ օրակարգում նաև այս հարցն է դնում, որքան մարդ է պատրաստ համագործակցել:*

**Օրենսդիրի և դրա հետ առնչության ուժեղացումը՝ որպես ազդեցության անցուղի**

Օրենսդիր իշխանության ուժեղացումը և դրա հետ ՔՀ առնչության ակտիվացումը կարևոր մեխանիզմ է, որ կապ ունի պետություն-ՔՀ վերաձևավորվող հարաբերությունների հետ: ՔՀ ներկայացուցիչների մի մասի մատնանշմամբ՝ Հայաստանում մարդիկ, այդ թվում նաև քաղաքացիական հասարակությունը, որոշակիորեն սովորել են չափազանց շատ ապավինելու գործադիր իշխանությանն ու դրանից եկող որոշումներին, և նոր քաղաքական դասավորության մեջ դա հաղթահարելու կարիք կա: Օրենսդիր ոլորտը կարող է դիտվել որպես միջնորդավորող օղակ, որի միջոցով ՔՀ-ները ազդեցություն կգործադրեն քաղաքականությունների վրա, մասնավորապես՝ ԱԺ պատգամավորների հետ ակտիվորեն աշխատելու միջոցով հասնելով այնպիսի օրինազօծի առաջ քաշմանն ու ընդունմանը, որոնք բխում են առաջադիմական ՔՀ տեսլականներից:

Ուշագրավ է, որ ՔՀ նեղացող տարածքի մասին խոսելը դեռ արդիական է մնում նոր իրավիճակում այն իմաստով, որ որպես նոր իրավիճակում ազդեցություն ունենալու հիմնական ուղի շատ ՔՀ գործիչներ տեսնում են ինստիտուցիոնալ քաղաքականություն մուտք գործելը: Ընթացում է ակտիվ հոսք քաղաքացիական սեկտորից դեպի ինստիտուցիոնալ քաղաքականություն՝ կառավարություն, ԱԺ կամ արտախորհրդարանական կուսակցություններ,

ինչը ոմանց դրդում է մտահոգվել «ամայացող» ՔՀ դաշտի համար: ՔՀ-ում մնալով հանդերձ օրենսդիր իշխանության հետ առավել ինտենսիվ և անմիջական աշխատանքը ՔՀ օրակարգերն առաջ տանելու մյուս կարևոր ճանապարհն է թվում, որը դեռ նույնքան փորձարկված չէ:

*Անհրաժեշտ է ուժեղացնել օրենսդիրի նշանակությունը, ավելացնել վերջինիս հետ համագործակցության մեխանիզմները: Աշխատելը պատգամավորների հետ, իրենց ցույց տալը՝ փոփոխություններից ինչն է կարևոր, ինչն է ընդունելի, ինչը չէ, շատ կարևոր է: Բայց մենք փաստացի այդ մասը բաց ենք թողնում, որովհետև բոլորս սովոր ենք, որ որոշում կայացնողը կառավարությունն է, ու ինչ բերի Ազգային ժողով, ընդունվում է:*

**Մրայնություններից անդին. դժվարությունները՝ որպես հնարավորություններ**

Վերը քննարկված բոլոր դժվարությունների հետ մեկտեղ ՔՀ փոփոխվող տարածքին նայելու մեկ այլ ձև է ներկայիս անորոշ պահն օգտագործելը՝ հարաբերությունների նոր ձևեր փորձարկելու համար: Դրանց ճիշտ ժամանակն է թվում: ՔՀ ներկայացուցիչների շրջանում գիտակցում և ընդունում են ինքնավարության ավելի մեծ աստիճանի և ինքնակատարելագործման անհրաժեշտությունը, ինչպես նաև կարիքը՝ վերաձևակերպելու ոչ միայն պետության, այլև դոնորների և իհարկե նաև լայն հանրության հետ հարաբերությունները: ՔՀ ներկայացուցիչները մատնանշում էին դոնորներից կախման փոքրացման և սեփական պրոակտիվության ավելացման, կարիքներից բխող ծրագրային ուղղություններ ձևակերպելու կարևորությունը: Թեպետ ոլորտը, հասկանալիորեն, չի կարող ամբողջովին դոնորներից անկախ և ինքնաբավ լինել, որոշ ՔՀ ներկայացուցիչներ համոզմունք են հայտնում, որ ներկան կարող է լավ

պահ լինել ինչպես դոնորների, այնպես էլ լայն հանրության հետ հարաբերությունները վերբեռնելու համար, օրինակ՝ դիտարկելով առանցքային ֆինանսավորման (core funding), ֆինանսական աղբյուրների դիվերսիֆիկացման հնարավորություններ, հանրության հետ հարաբերությունների վերակառուցման մեջ օգտագործելով ՔՀ ներկայացուցիչների, այդ թվում ՄԻ ջատագովների բարելավված հանրային իմիջը հեղափոխության արդյունքում, ինչպես նաև քաղաքացիական կրթությանն ու ինքնակրթությանը տեղ տալով:

*Քաղաքացիական դաշտը երկու բան ունի անելու՝ ինքնագարգանալու-չամայանալու և դուրս գալու դոնորների դաշտից. ուրիշ հարց է՝ ուզո՞ւմ է, պատրաստ է, կարո՞ղ է:*

Տարբերվող մտահոգությունների, ընկալումների ու ՔՀ ապագայի վերաբերյալ տեսլականների արանքում ՔՀ ներկայացուցիչները կիսում են միանգամայն գործնական այն մոտեցումը, որ հնչում է մոտավորապես այսպես. «Շարունակում ենք աշխատել»:

### 2.3. Քաղաքացիական հասարակության մտահոգություններն ու ժամանակավոր կառավարության ծրագիրը. երկխոսության ու անհամաձայնության կետերը

2018 թ. հեղափոխությունից հետո ձևավորվեց ժամանակավոր կառավարություն, որն իր նոր ծրագիրը ներկայացրեց 2018 թ. հունիսի 1-ին: Նախատեսված էր, որ այն պետք է առաջարկեր քաղաքացիական հասարակության կողմից տարիներ շարունակ բարձրաձայնվող խնդիրների լուծումները: Ստորև ներկայացնում ենք, թե ինչպես են արտացոլվել այդ խնդիրները կառավարության նոր ծրագրում ու պաշտոնական հաղորդագրություններում, ներառյալ՝ հանրային ելույթներում ու հայտարարություններում: Վերլուծությունը դիտարկում է հեղափոխական կարավարության ծրագրերի ու օրակարգի համադրելիությունը քաղաքացիական հասարակության օրակարգի ու ծրագրերի հետ՝ դուրս բերելով ինչպես հնարավոր համագործակցության, այնպես էլ՝ հակադրության ոլորտներն ու հարցերը:

Դիտարկվող հարցերի շրջանակի մեջ են մտել.

- մարդու հիմնարար իրավունքները,
- կանանց իրավունքները, գենդերային հավասարությունը ու ԼԳԲՏԻՔ անձանց իրավունքները,
- բնական միջավայրին ու բնապահպանությանն առնչվող իրավունքները,
- բանակը:

Այս հարցերը դիտարկելու համար ուսումնասիրվել են ժամանակավոր կառավարության 2018 թ. ծրագրի համապատասխան հատվածները, կառավարության անդամների հունիսից-հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում պաշ-

տոնական հայտարարությունները նշված թեմաների վերաբերյալ, ինչպես նաև քաղաքացիական հասարակության անդամների հայտարարություններն ու ելույթներն՝ ի պատասխան կառավարության գործողություններին:

**Մարդու հիմնարար իրավունքներ**

*Կառավարության ծրագիր 5.1. Օրենքի առջև բոլորի հավասարություն, արդարադատություն և մարդու իրավունքների պաշտպանություն*

«Ղ դատարանների կախվածությունը տասնամյակներ շարունակ եղել է երկրի գլխավոր խնդիրներից մեկը, որի պատճառով երկրում մարդու իրավունքների պաշտպանությունը գրեթե անհնարին էր: Նախկին կառավարական ծրագրերի մեջ թեև ընդգծվել է այն փաստը, որ ՀՀ դատարաններն անկախ չեն, սակայն երբեք չի մատնանշվել, թե որոնք են դրա պատճառները: Խնդրին առաջադրված հիմնական լուծումները եղել են «նոր դատական օրենսգիրք ստեղծելու» տրամաբանության շրջանակներում՝ փորձելով մարդկանց հավաստիացնել, որ խնդիրը օրենքներում թերություններն են, այլ ոչ թե կառավարության խնդրահարույց գործողություններն այդ ոլորտում: Ի տարբերություն կառավարության նախորդ ծրագրերի՝ նոր կառավարության ծրագրի մեջ շատ պարզ նկարագրվում է դատարանների անկախ չլինելու պատճառը: Մասնավորապես՝ ասվում է, որ դատավորներին վերևից հրահանգներ են տրվել, և նրանք չեն կրել պատասխանատվություն իրենց վճիռների համար: Թեև որպես այս խնդրի լուծման միակ երաշխիք նոր կառավարության ծրագրում նշվում է կառավարության «քաղաքական կամքը», ինչը նշանակում է ոլորտում խնդրի լուծման ուղղությամբ առաջընթացի ու արդյունքների համար պատասխանատվության ստանձնում, այն շարունակում է մնալ անհստակ ու հնչում է ավելի շատ որպես խոստում, եթե դրա հիմքում չմատնանշվեն կոնկրետ քայլեր, թե դա-

տարանների անկախությանը ինչպես է ապահովվելու:

Քաղաքացիական հասարակության նախկին անդամ, իրավապաշտպան և փաստաբան Արտակ Զեյնալյանի նշանակումը Արդարադատության նախարարի պաշտոնում քաղաքացիական հասարակության շատ անդամներ ողջունել են որպես դրական քայլ:

Օգոստոսի 21-ին Արտակ Զեյնալյանը մամուլի ասուլիսում ամփոփել է նախարարության վերջին 100 օրերի գործունեությունը: Անդրադառնալով բանտերի ծանրաբեռնված լինելու խնդրին՝ Զեյնալյանը նշել է, որ չկա դատապարտյալ, որ չունենա սեփական մահճակալը, իսկ ինչ վերաբերում է քրեակատարողական հիմնարկների գերբեռնվածությանը, ապա այդ խնդիրը դեռ չեն լուծել: Նախարարն իր ելույթում նաև նշել է դրական առաջխաղացման մասին, որ բանտերում և կալանավայրերում տեղադրվել են տեսահեռախոսներ, որոնցով դատապարտյալները և կալանավորները կարող են ամսվա ընթացքում առնվազն երկու անգամ 20 րոպե տևողությամբ կապ հաստատել իրենց հարազատների հետ: Իրավապաշտպանների և փաստաբանների հետ զրուցելիս ամբողջովին այլ պատկեր է ստացվում: Ըստ իրավապաշտպանների՝ քրեակատարո-

«Արդարության զգացումի և օրենքի առջև բոլոր մարդկանց հավասարությունն ապահովելու կարևորագույն նախապայմանն անկախ դատական համակարգի գոյությունն է: Վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանում դատական համակարգի անկախության հիմնական խոչընդոտը եղել են իշխանության օղակներից դատարաններից իջեցվող ապօրինի հրահանգները: Հրահանգավորման այս մեխանիզմը դատավորներին հնարավորություն է տվել պատասխանատվություն չկրել դատական վճիռների համար, որովհետև այդ վճիռներն, ըստ էության, կայացվել են իշխանության ամենավերին օղակներում, իսկ դատավորները փաստացի միայն ստորագրել են դրանք: Կառավարությունը բացառում է իշխանական կամ որևէ այլ օղակներից դատավորների գործունեությանն ապօրինի միջամտելու գործելակերպը: Սրան զուգահեռ, կառավարությունը պետք է կարողանա նաև բացառել դատավորների կողմից անձնական նյութական շահագրգռվածությամբ՝ կաշառքով, առաջնորդվելու հնարավորությունը: Կառավարությունը համոզված է, որ այս երկու հիմնական, ինչպես նաև դատարանների անկախությանը նպաստող այլ պայմանների ապահովումը բնականորեն կհանգեցնեն դատական անկախ համակարգի գոյությանը և իշխանության ճյուղերի իրական տարանջատմանը»:



ղական հիմնարկներում բարելավումները չնչին են, իսկ դատաիրավական համակարգում, կարելի է ասել, բացակայում են: Ըստ այս խիստ քըննադատության՝ անկախ դատաիրավական համակարգին դեռևս չենք հասել, իսկ արդարադատության նախարարությունը հեղափոխությունից հետո ստեղծված նոր կառավարության ամենաքիչ փոփոխությունների ենթարկված նախարարությունն է:

*«Ինդրի լուծումը երաշխավորող միակ գործոնը կառավարության քաղաքական կամքն է: Կառավարությունը, վայելելով Հայաստանի քաղաքացիների ակնհայտ մեծամասնության վստահությունը և հանդես գալով նրանց անունից, հաստատում է օրենքի առաջ բոլոր մարդկանց հավասարությունն ապահովելու գործում իր վճռականությունը և խնդիրը լուծելու իր կարողությունը»:*

Հաշվի առնելով այն փաստը, որ Արտակ Զեյնալյանը տարիներ շարունակ դատական տարբեր ատյաններում պայքարել է Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության համար, նրանից ակնկալիքներն ավելի շատ են եղել, և հետևաբար ներկայիս իրավիճակն՝ առավել մտահոգիչ ու անակնկալ:

Օգոստոսի 17-ին հեղափոխության 100-օրվա կապակցությամբ կազմակերպված հանրահավաքին Փաշինյանը հայտարարեց անցումային արդարադատության գործընթաց մեկնարկելու, դրա մեխանիզմները ստեղծելով՝ դատական իշխանության բարեփոխումներ իրականացնելու իր մտադրության մասին:

Անցումային արդարադատության ինստիտուտը տվյալ պետության գործող օրենսդրությամբ կամ նոր օրենքների միջոցով կիրառվող մեխանիզմների ու գործողությունների համալիր է: Ի թիվս այլ հանգամանքների, երբ կիրառվել է անցումային արդարադատություն, վերջինս կիրառել են ռեպրեսիվ ռեժիմներ ու քաղաքացիական պատերազմներ հաղթահարած պետությունները: Անցումային արդարադատության առաջնային նպատակը զոհերի իրավունքների պաշտպանությունն ու վերականգնումն է: Այս ինստիտուտի հիմքում ընկած են Մարդու իրավունքների համընդհանուր

հռչակագիրը, ինչպես նաև ՄԱԿ-ի հռչակագրային այլ փաստաթղթերը:

Անցումային արդարադատության վերաբերյալ քաղաքացիական հասարակության անդամներից հնչած կարծիքները տարբեր են: Օրինակ՝ ըստ փաստաբան Երվանդ Վարոսյանի. «...այն ծայրահեղ միջոց է, որը կիրառել են այնպիսի պետություններ, որոնք այլ ելք չեն տեսել, քան որոշակի զոհողությունների գնով, մասնավորապես՝ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում, հասնել ինչ-որ հասարակական համերաշխության»<sup>5</sup>: Միևնույն ժամանակ Արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանը դրական է գնահատել վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ «անցումային արդարադատություն» ստեղծելու մասին առաջարկը՝ պնդելով, որ այն չի հակասելու կամ կասեցնելու ՀՀ Սահմանադրության որևէ դրույթ, այլ «լինելու է օրինական և աջակցող, իսկ բուն հարցերը լուծելու է հենց ՀՀ գործող դատական համակարգը: Դատարանները չեն լուծարվելու, դատարանների դատարան չի ստեղծվելու»<sup>6</sup>:

Խոսելով արդարադատության մասին՝ իրավապաշտպան Ավետիք Իշխանյանը նշել է. «Մեր պարագայում անցումային արդարադատությունը չպետք է դիֆարկենք որպես նոր դատարաններ, (...) դա պետք է վերաբերի առանձին հանձնաժողովներ ստեղծելուն, որոնք պետք է վստահելի լինեն, բացահայտեն նախկինում կատարված մութ հարցերը, (...) ոստիկանական բաժանմունքներում խոշտանգումներով ընթացած և մասամբ բացահայտված սպանությունները, (...) հարկապես հրադադարից հետո խաղաղ պայմաններում 95-99 թվականներին ու այսօրվա անհայտ պայմաններում բանակում մահերը և բնականաբար, այսօրվա ամենաաղմկահարույց հարցը՝ 2008 թվականի մարտի 1-ի գործը»: Ըստ

5. <https://168.am/2018/08/18/996966.html>  
6. <http://www.armtimes.com/hy/article/142668>

Իշխանյանի՝ ամենամեծ խնդիրը գործող դատական համակարգն է, որի հանդեպ վստահություն չի եղել ու չի լինի անցումային արդարադատության ժամանակ ևս<sup>7</sup>:

Օգոստոսի 17-ի հանրահավաքի ժամանակ Փաշինյանը դիմել էր ՀՀ դատավորներին՝ ասելով. «*Խելքներդ գլուխներդ հավաքեք և կարակ չանեք ժողովրդի հետ*»: Այս արտահայտությունը կապված էր այն փաստի հետ, որ օգոստոսի 13-ին վերաքննիչ դատարանը վերացրեց առաջին ատյանի դատարանի՝ Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընդունելու մասին որոշումը<sup>8</sup>, և նա ազատ արձակվեց՝ նախագահական անձեռնմխելիության հիմքով: Կարևոր է հասկանալ, որ ինչպես անցումային արդարադատության մարմիններ ստեղծելու միտքը, այնպես էլ Փաշինյանի կոշտ կոչը դատավորներին բացառապես կապված է (նախկին կառավարության անդամների կողմից) պետության դեմ ենթադրաբար կատարված հանցանքների համար քրեական հետապնդումների հետ: Ինչպես նշվեց, դատավորներին ուղղված կոչն ուղիղ կապ ուներ Քոչարյանին կալանքից ազատելու հետ, իսկ անցումային արդարադատությունը ինքնըստինքյան առնչվում է միայն պետության դեմ հանցանք կատարած անձանց՝ նախկին կառավարության անդամներին: Անցումային արդարադատությունը չի փոխարինում գործող դատարանները, ու դատաիրավական համակարգը շարունակում է աշխատել նույն կերպ:

Սեպտեմբերի 11-ին անհայտ անձինք համացանցում տեղադրեցին Ազգային անվտանգության ծառայության պետ Արթուր Վանեցյանի և Հատուկ քննչական ծառայության պետ Սասուն Խաչատրյանի մի հեռախոսազրույցի ձայնագրություն: Գաղտնալսված ձայնագրությունը թեժ քննար-

7. <https://www.youtube.com/watch?v=TNYmjtiBgUI>

8. Ռոբերտ Քոչարյանը 2008 թվականի «Մարտի 1-ի» քրեական գործով մեղադրվում է սահմանադրական կարգը տապալելու մեջ:

կումների արժանացավ հանրային ու քաղաքական շրջանակներում: Ձայնագրության հրապարակումից հետո՝ նույն օրը, տեղի ունեցավ մամուլի ասուլիս, որտեղ Վանեցյանը և Խաչատրյանը հաստատեցին, որ ձայնագրության մեջ խոսացող անձինք իրենք են և որ խոսում էին մարտի 1 քրեական գործի մասին, հատկապես՝ Քոչարյանի ու Յուրի Խաչատուրովի ձերբակալությունների մասին<sup>9</sup>: Խոսակցության ժամանակ Արթուր Վանեցյանը հայտնում է, որ վարչապետը Խաչատուրովի վերաբերյալ ասում է «փակեք», իսկ ավել ուշ Խաչատրյանը նշում է, որ մի քանի օր կալանքի մեջ կպահի Խաչատուրովին, որ «խելքը գլուխը գա ու դրանից հետո ցուցմունք տա», ինչն իրավունքների խախտում է, քանի որ ազատությունից զրկումը չի կարող լինել ցուցմունք կորզելու գործիք<sup>10</sup>:

Գաղտնալսման ժամանակ վերոնշյալ արտահայտությունները խոսում են իրավական կառույցներում իներցիայով շարունակվող կամայականության տարրերի, մարդու հիմնարար իրավունքների խախտումների մասին, որոնք շրջանցվեցին մամուլի ասուլիսի ժամանակ, և դրանց շուրջ չտրվեց որևէ մեկնաբանություն:

### Քանակ

*Կառավարության ծրագիր 3.1. «Առաքելության զգացողություն»*

Ազգ-բանակ հայեցակարգը, որը բազմիցս քննադատվել է քաղաքացիական հասարակության ու իրավապաշտպանների կողմից, դուրս է մնացել նոր կառավարության ծրագրից: Ու թեև նոր կառավարությունը հրաժարվել է Ազգ-բանակ հայեցակարգից, այն փոխարենն առաջադրել է մեկ

9. <https://www.youtube.com/watch?v=g3FaIWMB6e0&t=196s>

10. <https://www.youtube.com/watch?v=AZOc3HxZLLA>

այլ՝ ոչ պակաս խնդրահարույց հայեցակարգ՝ բանակի առաքելության գաղափարը:

Ըստ նոր ընդունված փաստաթղթի տրամաբանության՝ «պարտականության զգացողությունը» փոխարինվում է «առաքելության զգացողությամբ», որի մասին մանրամասները հաղորդել է պաշտպանության նոր նախարար Դավիթ Տոնոյանն իր հետ հարցազրույցներից մեկում<sup>11</sup>:

*«Ամբողջ պետական համակարգում, առավել ևս բանակում, արհեստավարժ անձնակազմի և զորակոչիկների շրջանում անհրաժեշտ է պարտականության զգացողությունը փոխարինել առաքելության զգացողությամբ: Յուրաքանչյուր սպա, ենթասպա և շարքային պետք է առաջնորդվի պետության և ժողովրդի առաջ ունեցած պարմական առաքելության գիտակցումով»:*

Պաշտպանության նախարարի հարցազրույցին անդրադարձել է «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ի նախագահ, իրավապաշտպան Էդգար Խաչատրյանը: Նա մասնավորապես գրել է. «Եթե դեռ չեք կարդացել այս փաստաթուղթը, ապա արժե կարդալ: Ընդհանուր առմամբ այն գրված է նույն՝ սպառազինությունների մրցավազքի տրամաբանության մեջ և բավականին պաթետիկ ոճով: «Ազգ-բանակի» ռազմահայրենասիրական պաթոսն այստեղ փոխարինվել է «հայրենքի պաշտպանի ինքնության» ձևավորման պաթոսով»<sup>12</sup>: Խաչատրյանի մտահոգությունը տեղին է, ու մեզ ևս դրդում է խնդրականացնել այս լրացում-փոփոխությունը: Առաքելության ու ինքնության հասկացությունները կարող են նույնչափ մանիպուլյատիվ լինել, որքան պարտականության գաղափարը: Ավելին, ի տարբերություն վերջինիս, դրանք հղում են ավելի ներքին բնութագրերի ու պակաս անորոշ են, ինչի շնորհիվ կարող են ավելի լավ գործիք լինել ռազմականացումը մտածողության մեջ ներքնայնացնելու համար:

11. <https://mediamax.am/am/news/interviews/29332/>  
12. <https://www.facebook.com/Khachatryanedgar/posts/10212371306060210>

### **Գենդերային հավասարություն, կանանց իրավունքներ, ԼԳԲՏԻՔ իրավունքներ**

Կառավարության նոր ծրագիրն առանձին խոսք չի հատկացնում գենդերային հավասարությանն ու հանդուրժողականության խթանմանը: Չնայած հեղափոխության ժամանակ հնչող հայտարարություններին, որ երկրի կառավարման մեջ կանանց դերը պետք է ավելի զգալի դառնա, կառավարությունը որևէ նկատելի քայլեր չձեռնարկեց այդ ուղղությամբ: Եթե մանրամասներնք, ապա չավելացվեց կանանց համար հաստիքների թիվը կառավարությունում, չառաջարկվեց օրինագիծ կանանց և տղամարդկանց աշխատավարձերի հավասարության վերաբերյալ, իսկ կին նախարարների թիվը չգերազանցեց նույնիսկ 20 տոկոսը:

Գենդերային հավասարություն ենթադրող միակ փոփոխությունը վարչապետին կից «Ընտրական օրենսգրքի» բարեփոխումներ մշակող հանձնաժողովի ընդունած նոր դրույթն էր, համաձայն որի՝ արձանագրվեց մանդատների բաշխման մեկնարկային փուլում կանանց 30% ներկայացվածության երաշխիքը: Թերևս այս առաջարկի մանրամասներին չանդրադառնանք, քանի որ կառավարության հաստատած ընտրական օրենսգրքը չընդունվեց Ազգային ժողովի երկրորդ լսման ժամանակ:

Գենդերային հարցերի հանդեպ ընդհանուր «լռության» ֆոնին տեղի են ունեցել ԼԳԲՏԻՔ անձանց հոլովող մի քանի դիպվածներ, որոնց ստիպված են եղել անդրադառնալ նոր կառավարության անդամները: Դրանցից առաջինը Արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանի ֆեյսբուքյան գրառումներից մեկն է, որտեղ նա հերքել է սոցիալական ցանցերում տարածված այն լուրերը, թե ինքն իբրև ցանկանում է ՀՀ-ում օրինականացնել նույնասեռականությունը: Մասնավորապես նա գրել է. «Մտածում էի չարձագանքել անհիմն գրառումներին, բայց այս պարագայում չարձագանքելը որոշների մոտ իրենց սուտն առավել մեծ մասշտաբով

*տարածելու հնարավորություն է ընձեռում: Հարգելիներս, ես ո՛չ այս շաբաթ, ո՛չ նախորդ ամսին և ո՛չ էլ ընդհանրապես իմ նախարար նշանակվելուց հետո Քրեական օրենսգրքում փոփոխություն անելու որևէ օրենսդրական նախաձեռնությամբ հանդես չեմ եկել: Սոցիալական տիրույթում սկսված այս արշավն անհեթեթ ու անհիմն է»<sup>13</sup>: ԼԳԲՏԻՔ ակտիվիստների և իրավապաշտպանների համար այս մեկնաբանման մեջ խնդիրն այն չէ, որ նա չի պատրաստվում «օրինականացնել նույնասեռականությունը» (վերջինս ինքնին անհասկանալի և նույնիսկ զավեշտալի հերքում է հնչում, քանի որ նույնասեռականությունը Հայաստանում անօրինական չէ), այլ խնդիրը «նույնասեռական» բառը գործածելուց խուսափումն է՝ հատկապես հաշվի առնելով, որ Արտակ Զեյնալյանի՝ նախկինում իրավապաշտպան լինելու հանգամանքը: Մասնավորապես «Փինք Արմենիա» հասարակական կազմակերպության հայտարարության մեջ ասվում է. «Արտակ Զեյնալյանը, նախկինում զբաղվելով իրավապաշտպան գործունեությամբ, ջանքեր է գործադրել երկրում խտրականության բացառման ուղղությամբ և աջակցել է ցանկացած տեսակի խտրականության դեմ օրենսդրության կայացմանը: Ավելին, խտրականությունն արգելող օրենքի ընդունումը եղել է պարոն Զեյնալյանի 2016 թ. ամանորյա ցանկությունն ու մաղթանքը: Շտապելով հայտնել, որ վերոնշյալ լուրերը սուտ են՝ Արտակ Զեյնալյանը չի անդրադարձել գրառման բովանդակության անհեթեթ, վիրավորական և խտրական բնույթին»<sup>14</sup>:*

Հանրային մեծ հնչեղություն ստացավ օգոստոսի 3-ին տեղի ունեցած բռնության դեպքը, երբ երեկոյան ժամը 20:00-ի սահմաններում Շուռնուխ գյուղում 9 երիտասարդներ՝ այդ թվում մի քանի ԼԳԲՏԻՔ ակտիվիստներ, որոնք հավաքվել

13. <http://armtimes.com/hy/article/141423>  
14. <https://bit.ly/2HDrz7W>

էին իրենց ընկերոջ տանը, ենթարկվել էին հարձակման, որի հետևանքով մի քանիսը ստացել էին թեթև առողջական վնասվածքներ, իսկ ընդհանուր առմամբ բոլորը հայտնվել էին ահաբեկվածության ու շփոթմունքի մեջ<sup>15</sup>: Միջադեպի վերաբերյալ կառավարության մի քանի ներկայացուցիչ արձագանքեցին իրենց ֆեյսբուքյան էջերում (Զատա Բաթոյան, Սարգիս Խանդանյան): Օգոստոսի 7-ին «Ազատություն» ռադիոկայանի ֆեյսբուքյան ասուլիսի ժամանակ փոխվարչապետ Տիգրան Ավինյանը, պատասխանելով Facebook-ի օգտատերերից մեկի հարցին, թե արդյո՞ք ժամանակը չէ, որ իշխանությունը ԼԳԲՏԻՔ անձանց իրավունքների պաշտպանության, իրավահավասարության և խտրականության դեմ հստակ ու քաղաքական դիրքորոշում հայտնի՝ փոխվարչապետն ասաց. «Ես չէի ուզենա առանձնացնել որևէ խումբ, որովհետև երբ խոսում ես առանձին որևէ խմբի մասին, ստացվում է, որ այդ խմբի շահերը որոշակիորեն ավելի կարևորվում են մնացածի շահերից: Սա շատ կարևոր է մարդու իրավունքների տրամաբանության շրջանակներում: Բռնությունն անընդունելի է, բռնության որևէ դրսևորում անընդունելի է, լինի դա փոքրամասնության, եկեղեցականների, այլազգիների նկատմամբ: Հետևապես կոնկրետ այս միջադեպի հետքերով պետք է գնան իրավապահ մարմինները, իրավապահ մարմինների իրավասությունների շրջանակներում է գտնվում այս գործը»<sup>16</sup>:

**Բնապահպանություն**

*Նոր կառավարության ծրագիր 5.7. Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների համալիր պահպանությունը, բարելավումը, վերականգնումը և ողջամիտ օգտագործումը նախորդ կառավարության ծրագրում նույնպես եղել են: Այ-*

15. <http://www.pinkarmenia.org/hy/2018/08/violence-shurnukh/>  
16. <https://bit.ly/2stl1HX>

դուհանդերձ, երկրում ահռելի ծավալների ու անպատասխանատու հանքարդյունաբերությունն ու դրա հետևանքները տասնամյակ շարունակ ակտիվիստների կողմից բարձրաձայնվող ամենամեծ խնդիրներից են (Իշխանյան և այլք, 2013): Ամուլսարի հանքի ծրագրին քաղաքացիական ու համայնքային դիմադրությունը բարդ հարց է, որը Փաշինյանի գլխավորած նոր կառավարությունը ժառանգել է նախորդ վարչակազմից: Ժամանակավոր կառավարության ձևավորումից հետո Նիկոլ Փաշինյանը փորձագետների խումբ էր ստեղծել և հանձնարարել պարզել, թե արդյոք հանքի աշխատանքները կանգնեցնելու հիմքեր կան, թե ոչ:

Մայիսի 24-ին փոխվարչապետ Ավինյանը Ֆեյսբուքյան իր էջում գրառում կատարեց, որ հանդիպել է բողոքի ակցիաներ իրականացնող քաղաքացիներ հետ: Ըստ գրառման՝ ակտիվիստները համաձայնել էին դադարեցնել բողոքի գործողությունները, մինչդեռ իրականում այդպես չէր<sup>17</sup>:

Մեկ ամիս անց Ավինյանը հայտնում է, որ Ամուլսարում ստեղծված իրավիճակի լուծման համար ձևավորվելու է աշխատանքային խումբ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավար, նախկին բնապահպան-ակտիվիստ Արթուր Գրիգորյանի գլխավորությամբ<sup>18</sup>: Նույն օրը՝ հունիսի 25-ին, Փաշինյանը ցուցարարներին կոչ է անում

*«Շրջակա միջավայրի քաղաքականության նպատակն է շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների համալիր պահպանությունը, բարելավումը, վերականգնումը և ողջամիտ օգտագործումը՝ հավասարակշռելով այն սոցիալական արդարության և տնտեսական արդյունավետության հետ: Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում հիմնական խնդիրն է նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի՝ օդի, կլիմայի, ջրի, հողի, բուսական և կենդանական աշխարհի վրա վնասակար ազդեցությունները, բացառել բնական ռեսուրսների գերշահագործումը և ապօրինի օգտագործումը, ապահովել կանխարգելման միջոցառումների իրականացումը: Հատուկ ուշադրություն կդարձվի ռիսկային ոլորտների վերահսկողությանը, շրջակա միջավայրի մոնիթորինգի, թույլտվությունների, լիցենզիաների միասնական և ժամանակակից համակարգերի ներդրման աշխատանքներին»:*

17. <https://web.facebook.com/avinyan89/posts/10215539833878901>  
18. <https://web.facebook.com/avinyan89/posts/10215764569897161>

դադարեցնել Վայոց ձորի մարզում անհնազանդության ակցիաներն ու բացել Ամուլսարի հանք տանող ճանապարհներն՝ այդ գործողությունը որակելով նոր կառավարության դեմ սաբոտաժ. «Եթե այդ գործողությունների նպատակը սաբոտաժը չէ և Կառավարության համար փակուղային իրավիճակի ստեղծելը, ես կոչ եմ անում՝ դադարեցրեք քաղաքացիական անհնազանդության այդ գործողությունները: Մի խանգարեք մեզ, որ մենք ուսումնասիրենք և ունենանք փաստեր և դրանց հիման վրա որոշումներ կայացնենք: Որովհետև կարող է՝ իրականությունը այնպիսին չէ, ինչ երևում է, կարող է՝ գործողությունների նպատակը այն չէ, ինչի մասին հայտարարվում է»<sup>19</sup>:

Քաղաքացիական հասարակության տարբեր ներկայացուցիչներ բացասաբար արձագանքեցին Փաշինյանի հայտարարությանը: Մասնավորապես, դեպի Ամուլսար տանող ճանապարհները փակող ցուցարարները տեսանյութ տարածեցին, որում հանդես եկան Փաշինյանին ուղված հետևյալ հայտարարությամբ. «Արդեն որերորդ անգամ խիստ վիրավորված ենք զգում այն պատճառով, որ Ամուլսարի պաշտպանությանն ուղղված մեր գործողությունները որակում եք որպես սաբոտաժ և կառավարության նկատմամբ անվստահություն: Ձեր և փոխվարչապետ Տիգրան Ավինյանի հայտարարություններն արժեզրկում են մեր պայքարը՝ հանուն այնպիսի հիմնարար իրավունքների, ինչպիսիք են կյանքի իրավունքը, ջրի իրավունքը, առողջ բնական միջավայրում ապրելու իրավունքը: Քաղաքացիական անհնազանդությունը, որը նաև Թավշյա հեղափոխության հիմնական մեթոդներից էր, ոչ միայն պայքարի մեթոդ է, այլև հիմնարար իրավունք. մեր իրավունքները ոտնահարող այս հանքարդյունաբերական անարդարության նկատմամբ անհնազանդությունը համարում ենք մեր իրավունքն ու քաղա-

19. <https://bit.ly/2TRzwAX>

*քացիական պատասխանատվությունը: Ավելին, ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածի 2-րդ կետն ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին. ուստի մենք նաև կատարում ենք մեր սահմանադրական պարտավորությունը»<sup>20</sup>:*

Հուլիսի 6-ին ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանը ժամանեց Ամուլսար, Ջերմուկում հանդիպեց Ամուլսարում ոսկու արդյունահանման իրավունք ստացած «Լիդիան Արմենիա» ընկերության ներկայացուցիչների, բնապահպանների ու քերականների հետ: Փաշինյանն ասաց, որ եթե շահագործման թույլ տալու գործողությունները սկսվեին իր կառավարության օրոք, նա չէր ցանկանա, որ այդպիսի հանք լիներ, բայց նա հասկանում է, որ «ահռելի» գումարներ են արդեն ներդրվել: Նա հայտարարեց, որ հանքի հետ կապված որոշումները պետք է հիմնված լինեն փաստերի, այլ ոչ թե էմոցիաների վրա ու առաջարկեց կառավարությանը ժամանակ տրամադրել Ամուլսարի հանքում ստուգումներ անցկացնելու համար: Ցուցարարներն իրենց հերթին պնդեցին, որ այդ ընթացքում հանքը չպետք է շահագործվի: «Լիդիան» ընկերության ներկայացուցիչներն այս տարբերակն անընդունելի համարեցին: Կողմերին այդպես էլ համաձայնության չեկան: Ցուցարարները հայտարարեցին, որ շարունակելու են բողոքի ակցիաները և չեն պատրաստվում բացել հանք տանող ճանապարհները:

Օգոստոսի 10-ին Ն. Փաշինյանը հայտարարեց «Կանաչ Հայաստանի» հայեցակարգի մասին՝ հռչակելով հետևյալը. «Տնտեսական կառուցվածքի մասին մեր պատկերացումներում առանցքային տեղ է զբաղեցնում էկո Հայաստանի՝ Կանաչ Հայաստանի հայեցակարգը, և տեխնոլոգիաները երբեք և որեւէ դեպքում չի կարելի հակադրել բնությանը, բնապահպանությանը, հակառակը, մենք այս ամենը դի-

20. <https://www.facebook.com/armecofront/videos/2253392084700843/>

*տարկում ենք մեկ ընդհանուր հայեցակարգի մեջ»<sup>21</sup>:*

Այսպիսով՝ նոր կառավարության ծրագրի ու պաշտոնական հայտարարությունների և քաղաքացիական հասարակության ակնկալիքների ու արձագանքների համադրված վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել խնդիրների լուծման երեք տիպ կամ մակարդակ.

- խնդիրներ, որոնք նախկինում բարձրաձայնվել են քաղաքացիական հասարակության կողմից և արձագանք են ստացել կառավարությունից,
- խնդիրներ, որոնք բարձրաձայնվել են քաղաքացիական հասարակության կողմից և կառավարության օրակարգում են, սակայն քաղաքացիական հասարակության դիրքորոշումից տարբերվող տեսանկյան ներքո,
- խնդիրներ, որոնք բարձրաձայնվել են քաղաքացիական հասարակության կողմից, բայց չեն մտել կառավարության օրակարգ:

Ընդհանուր առմամբ, որքան փոքր է կառավարության արձագանքի համապատասխանությունը ՔՀ պահանջներին, այնքան ավելի վստահ կարող ենք ենթադրել հարցի շուրջ կան միջազգային ազդեցություն, կան լոկալ զգայունության մասին: Խորհրդարանական վերջին ընտրությունների արդյունքում նոր կառավարության վերջնական ձևավորման հետ կարծես անխուսափելի են դառնալու լուծումներին միտված, հստակ մոտեցումները և կոնկրետ ձևակերպումներն ինչպես քաղաքացիական հասարակության, այնպես էլ նոր կառավարության կողմից:

21. <http://armtimes.com/hy/article/145840>

## 2.4. Հայաստանի շարունակվող հեղափոխության մարտահրավերները. էմբլեմատիկ կոնֆլիկտներ

Հեղափոխությունից հետո Փաշինյանը սկսեց դիտվել որպես անքննելիորեն առաջատար քարիզմատիկ առաջնորդ: Այդ կերպարի հիմքում, որ կերտվեց հենց հեղափոխության գործընթացով ու գործընթացում, ոչ միայն իր քաղաքական նպատակին հետևողականությունն էր ու աննահանջ առաջամարտիկ լինելը, այլև երբեմնի հակառակորդ ընդդիմադիրների հետ գործընկերության վերականգնումը, քաղհասարակության դիմադրող գործիչների հետ ներառական համագործակցությունը, քայլերի թափանցիկությունը, ցանցային մեթոդների՝ ցուցարարների ինքնակազմակերպ կրեատիվ գործողությունների խրախուսումը և ժողովրդական տարասեռ զանգվածներին անվարան հենվելու պատրաստակամությունն ու ժողովրդի առաջ էմոցիոնալ բացությունը:

Նրա պատկերացումները իշխանական կարգի մասին կտրուկ տարբերվում են նախորդ քսան տարիների ղեկավարներ Քոչարյանի (1998-2008) և Սարգսյանի (2008-2018) ուժային հիերարխիկ մտածողությունից, որոնք ըստ հայաստանյան մամուլի ենթադրությունների՝ ժամանակին համագործակցել են խորհրդային ԿԳԲ-ի հետ: Նիկոլ Փաշինյանը իր լիբերալ-դեմոկրատական հավատալիքներով գերազանցում է նույնիսկ Հայաստանի հետխորհրդային առաջին ժողովրդավարական ալիքի առաջնորդ, առաջին նախագահ Տեր-Պետրոսյանին (1991-1998) հատկապես նրանով, որ գործնականում կարևորում է ժողովրդի կարող, գործորդային ուժն ու թափանցիկ կառավարումը: Նրա առավելություններից է նաև «տեղականությունը», սովորական լինելու, մարդկանց հետ հաղորդակցվելու և աշխատելու իր

կարողությունը: Այս հատկանիշները նրան կենտրոնական ֆիգուր դարձրին և հեղափոխության ընթացքում, և դրանից հետո, սակայն դրանք բավարար չեն լինելու ժառանգված տնտեսական խնդիրները (ինչպես օրինակ՝ հանրային վերահսկումից դուրս գտնվող միջազգային՝ և՛ ռուսական, և՛ արևմտյան կապիտալ ներգրաված հանքարդյունաբերությունից կախված լինելը) կամ այլ վիճահարույց սոցիալական հարցերը (սոցիալ-տնտեսական անհավասարություններ, կանանց և գենդերային զգայուն խնդիրների շուրջ լարումներ) հասցեագրելու համար: Փաշինյանն այսօր ժառանգություն է ստացել ավտորիտար ղեկավարի համար կարված սուպեր վարչապետի պաշտոն, որի անմիջական ենթակայության ներքո են գտնվում ԱԱԾ-ն, ՀԲԾ-ն և ոստիկանությունը, մի շարք ստուգող տեսչություններ: Այս կառույցների միջոցով Փաշինյանի ժամանակավոր կառավարությունը հռչակել և արդեն իսկ իրականացնում է զավթված պետությունը կոռուպցիայից և այլասերումից մաքրելու ժողովրդահաճ գործողություններ՝ գրեթե ամեն շաբաթ բացահայտելով նախկին իշխանավորների հետ կապակցված անձանց կողմից իրականացրած շլացուցիչ կոռուպցիոն կամ մեծ թալանի հանցանքներ՝ քողազերծելով նախորդ ռեժիմի կեղծիքները: Սա մեծ արձագանք է գտնում տասնամյակներ շարունակ խաբված և թալանված, պետությունից օտարված մարդկանց սրտերում: Հեղափոխությունից ամիսներ անց հանրային վստահությունը և ենթակա ուժային և տեսչական մարմինների լոյալությունը դեռևս Փաշինյանի միակ էական ռեսուրսներն են: Նրան շարունակում են աջակցել քաղաքացիական այն խմբերը, որոնք նշանակալի դեր են ունեցել հեղափոխության մեջ, սեփականության զգացում ունեն դրա հաղթանակի նկատմամբ և իրենց պատասխանատու են զգում դրա լիարժեք հաստատման համար: Հանրային վստահության ցուցիչը առնվազն մայրաքաղաքում, որտեղ փոքր երկրի բնակիչների մեկ երրորդից ավելին է ապրում, սեպտեմբերի 23-ին կայացած Երևանի քաղաքային

խորհրդի արտահերթ ընտրության տվյալներով 81% է, ինչն արտոնում է Փաշինյանին շարունակել հեղափոխության ինստիտուցիոնալացումը: 2018 թ. դեկտեմբերի 9-ին կայացած ԱԺ ընտրությունների արդյունքում նրա թիմի տարած վստահ հաղթանակը նրան արդեն պաշտոնապես դարձրեց ժողովրդի վարչապետ՝ դրանից բխող մեծ պատասխանատվությամբ: Արդյոք ժողովրդի սերն ու վստահությունը բավարար կլինեն՝ իրականացնելու այն արմատական ռեֆորմները, որ հռչակել է հեղափոխությունը և որոնք ըստ էության կնշանավորեն ավարտն այն ամենի, ինչին հենված էր նախորդ ռեժիմը՝ կոռուպցիայի վերացում, անկախ դատարաններ, ընտրական օրենսգրքի փոփոխություն և այլն: Եվ արդյոք հնարավոր է դրանց հասնել երկրում դեմոկրատիան և հանրային տարասեռ խմբերի համերաշխությունը ամրապնդելով՝ և ոչ միայն ընդհանրացված ժողովրդի պոպուլյարության վրա հենվելով: Հարցազրույցների վերլուծությունը վեր է հանում, որ կան զգայուն թեմաներ, որոնք ժողովրդականությունը դարձնում են երկակի խաղ և հակասական ռեսուրս:

Հետհեղափոխական կամ ընթացող հեղափոխության Հայաստանի կառավարությունը դեմ հանդիման է հայտնվել մոտ երեք տասնամյակ կուտակված հիմնախնդիրների լուծման առաջ: Այս գործում, պատրաստ լինելով համագործակցել հեղափոխությանն աջակից բոլոր ուժերի հետ, իրականում Փաշինյանի կառավարությունը չունի ակնհայտ աջակցություն արտաքին աշխարհից, իսկ ներսում իր հիմնական հենարանը քաղաքացիական ու քաղաքական դաշտի լիբերալ և առաջադիմական հատվածն է: ՔՀ առավել արմատական հատվածը, ներկա լինելով փողոցային պայքարում, դեռևս հապաղում է ամբողջ թափով ինստիտուցիոնալ համագործակցության մեջ մտնել, սակայն բարեկամ պահանջատիրոջ կարգավիճակով մասնագիտական աջակցությունից և ուղղորդող նախաձեռնություններից չի խուսափում:

Այժմ էլ այս խմբերը դրա կարևոր առաջնահերթությունների սահմանման ու իրականացման հիմնական ջատագովներն են մնում: Այդ առաջնահերթություններն առնչվում են երկու հիմնակետի՝ 1) մարդու իրավունքների ու ժողովրդավարական ինստիտուտների կայացման համար նպաստավոր որոշումների, մոտեցումների և մեխանիզմների ամրագրմանը, 2) օլիգարխիկ-կոռումպացված տնտեսական կառուցվածքի և շահագործմանն ու ռեսուրսների չարաշահմանը հակադրմանը, սոցիալական արդարության պահանջին համարժեք տնտեսական կյանքի ապահովմանը:

Թեև շուրջ երեսուն տարվա կուտակված պրոբլեմները բազմաթիվ և բազմազան են, սակայն երկրում առկա են հեղափոխության կարիքը խտացնող էմբլեմատիկ կոնֆլիկտներ, որոնք իրենցում միաժամանակ ներամփոփում են վերոնշյալ երկու ուղղության հարցերը: Սրանք այն կոնֆլիկտներն են, որոնց համարժեք հանգուցալուծումից է կախված սոցիալական կյանքի կառուցվածքային դրամատիկ փոփոխությունների (էմբլեմատիկ կոնֆլիկտների այսպիսի սահմանումը՝ Ulich Brand-ի) հնարավոր ընթացքը: Ստորև կուրվագծենք երկու այդպիսի կոնֆլիկտ, որոնք արտացոլում են վերը նշված երկու առաջնահերթ ուղղությունները:

**Ամուսարի ոսկու հանքի արդյունահանման կանխման հիմնախնդիրը**

Մինչ հեղափոխությունը արդեն տասը տարի հանքարդյունաբերությունը Հայաստանի տնտեսական գերակա ճյուղերից էր համարվում: Այս երկարամյա՝ հանքարդյունաբերության համար նպաստավոր քաղաքականության հետևանքով արտոնյալ պայմաններով (օր.՝ զրո հարկ պոչամբարային թափոնների համար, ձևական հանրային լուսմներ, ձևական պետական վերահսկողություն և այլն) Հայաստանում հանքարդյունաբերական գործունեություն ծավալելը գրա-



վել է օՖշորային ընկերությունների, որոնք կոռուպցիոն ռիսկայնություն պարունակող կասկածելի օրինականությամբ լիցենզիաներ են ստացել Հայաստանում մետաղական հանքեր շահագործելու համար: Դրանց բերած բնապահպանական, առողջապահական և սոցիալական խնդիրների գիտակցումն էր պատճառը, որ դեռևս 2007-ից առաջ եկան ինքնակազմակերպ դիմադրական նախաձեռնություններ (Ishkanian 2016): Հետագայում դրանք վերաձվեցին երկարամյա շարժումների և ըստ էության հանդիսացան այսօրվա դիմադրական քաղաքացիական հասարակության գործողության կայացման և քաղաքականացման ուղիները<sup>22</sup>: Բնապահպանական պայքարի ակունքներում կանգնած այդ մարդկանցից շատերն այսօր Ամուլսարում ոսկու հանքարդյունահանման շահագործման դեմ պայքարի կարևոր մասն են կազմում: Ամուլսարի հանքի դեմ 2012-ից սկսած նրանց պայքարը Հայաստանի ամենաթեժ ճակատներից է, որտեղ հեղափոխությունից հետո տեղացիները նախաձեռնել են հանք տանող ճանապարհների երկարաժամկետ բլոկադա՝ կասեցնելով շինարարական աշխատանքները և կանխելով հանքի բացումը:

Ամուլսարի ոսկու հանքարդյունահանման նախագծի յուրահատկությունն այն է, որ շահագործող Լիդիան Արմենիա ընկերության ֆինանսավորողները ամերիկյան և բրիտանական կապիտալի ներկայացուցիչներ են<sup>23</sup>: Դա թույլ է տալիս ընկերությանն իր կապիտալը օրինականորեն պաշտպանել անգամ դիվանագիտական-քաղաքական մակարդակում,

22. 2007-ից սկսված Թեղուտի հանքի դեմ շարժման անկյունաքարային անդամներից մեկն, օրինակ, այժմ ՔՊ վաչության անդամ, պատգամավոր Լենա Նազարյանն է: Այլ համախոհների հետ միասին նա հետագայում քաղաքացիական դաշտից իր պայքարը ինստիտուցիոնալ քաղաքական հարթակ տեղափոխեց՝ միանալով «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ձևավորմանը՝ փոփոխության առավել արդյունավետ ճանապարհ գտնելու մտադրությամբ: Նրա պայքարի ընկերներից շատերը շարունակեցին պայքարը բնապահպանական ակտիվիզմի մեջ:

23. <http://www.armecofront.net/amulsar/funding-equipping-amulsar/>

ինչպես նաև սպառնալ արևմտյան ֆինանսական ներդրումների կասեցումով և միջազգային դատավարություններով: Սրան զուգահեռ, մեդիադաշտում կազմակերպվում են Լիդիան Արմենիայի լոբբիստական արշավներ, հանքը շրջափակած ակիտվիստներին հեղինակազրկող մեդիա-հարձակումներ, նրանց տարաբաժանելու տեղեկատվական արշավներ, հակացույցեր, տեղացի աշխատակիցների միջոցով ներհամայնքային լարումներ:

Այս կոնֆլիկտում կարծես իր օգուտներն է փորձում կորզել Հայաստանի մեկ այլ հանքարդյունահանող ընկերություն՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը, որի սեփականության հայտնի մասը գերմանական Քրոնիմետին է պատկանում, իսկ անհայտ՝ օՖշորային տերերը, ըստ բնապահպանների, ռուսական կամ ռուս-հայկական սեփականատերեր են: Համարվում է, որ ռուսական կողմի համար արևմտյան կապիտալի այսպիսի ներկայությունն ինքնին խնդրահարույց է, որի պատճառով էլ շահագրգիռ կողմ են հանդիսանում: Սա իր հերթին թույլ է տալիս Լիդիան Արմենիային Ամուլսարի փրկության ողջ շարժումը ներկայացնել որպես իր մրցակցի կողմից ֆաբրիկացված արշավի՝ աննկատ թողնելով տեղացիների հանրային շահն ու կարծիքը, միաժամանակ հող նախապատրաստելով ապագայում միջազգային արբիտրաժային դատարանում ՀՀ-ին պատասխանատվության կանչելու համար:

Նոր կառավարության ծրագրում և վարչապետ Փաշինյանի տարբեր ելույթներում հնչել է «ներառական տնտեսություն» ձևավորելու նպատակը, որով ոչ թե ցուցանիշային տնտեսական աճի, այլ հասարակության լայն շերտերի կենսամակարդակի աճն է կարևորվում (նման BeyondGDP կոնցեպտին): Զուտ հանքառեսուրսների սպառումից հրաժարվելու և էկոտնտեսություն ձևավորելու մասին ևս հստակ հայտարարություններ են հնչել: «Ազատ և երջանիկ Հայաստանի» կերտման փաշինյանական կարգախոսի տրամաբանություն-

նը հնարավոր է դարձնում էկո-սոցիալական արդարության պրոգրեսիվ նպատակի առաջադրումը: Առայժմ անորոշ է մնում, սակայն, թե ինչ քաղաքականություններով և ինչպիսի որոշումներով կարող է կառավարությունը հասնել դրան:

Ամուլսարի խնդիրը իրապես էմբլեմատիկ է, և որոշումներն ունենալու են անդառնալի բնապահպանական, ֆինանսատնտեսական, առողջապահական, սոցիալական (անգամ աշխատակիցների գենդերային ասպեկտով) հետևանքներ ոչ միայն հարակից համայնքների, այլև ողջ երկրի համար: Մի կողմից Ամուլսարի հանքի սպառնալիքները և դրանք դիմադրող քաղաքացիական հանրության (բնապահպանների, տեղացիների և իրավապաշտպանների) կոնսոլիդացիան, մյուս կողմից արևմտյան ներդրումների կասեցման և հնարավոր տույժերի սպառնալիքները դժվարին վիճակում են դրել նոր կառավարությանը: Այցերը, ստուգումները և բազմաշահառու աշխատանքային խմբերը դեռ չեն բերել որոշումների կայացման:

Ամուլսարի բազմաշերտ խնդրի հանգուցալուծումը կնախանջի նոր Հայաստանի հեղափոխականության մակարդակը և հանրային խնդիրների լուծման ապագա սկզբունքները, ինչպես նաև ՔՀ կարողության չափը՝ ազդելու երկրի տնտեսական քաղաքականության վրա: Արդյոք հարյուրավոր սովորական մարդկանց հանրային՝ տնտեսական ու սոցիալական շահի, թե՛ մեծ կապիտալ տնօրինող առանձին միավորների տնտեսական շահերը առաջնահերթություն կգրանցեն, ՀՀ քաղաքացու գործորությունը, թե՛ միջազգային կորպորացիաների շահերը կկարևորվեն, բնական ռեսուրսների անխնա սպառման ու արտահանման, թե՛ բնական միջավայրի խնայման ու էկոլոգիական հիմքով տնտեսության առաջնորդությամբ պետք է ընթանա նոր Հայաստանի ապագան: Արդյոք դեմոկրատիայի և արևմտյան պրոգրեսիվության աջակցությունը կհանգեցվի արևմտյան

կապիտալի պաշտպանության<sup>24</sup>, թե՛ ի վերջո Հայաստանի քաղաքականությունը դուրս կգա Արևմուտք-Ռուսաստան աշխարհաքաղաքական հակասությունների վնասակար ծուղակից:

**«Մնացածների»<sup>25</sup> իրավունքի ճանաչումը և հանրային համերաշխության մեջ ներառումը**

Չնայած ԼԳԲՏԻՔ մարդկանց իրավունքների պաշտպանության գործունեությունը Հայաստանում սկսվել է շուրջ 20 տարի առաջ, սակայն այս հայացքով դիսկուրսները նախորդ ռեժիմի օրոք մնացել են սահմանափակ շրջանակներում, լուսանցքային և մերժված: Հանրային լայն շերտերին, ընդհակառակը, մշտապես մատուցվել են ԼԳԲՏԻՔ անձանց հանդեպ ատելության քարոզներ, նրանց հանդեպ բռնությունը արդարացնող, խրախուսող դիրքորոշումներ<sup>26</sup>:

Հետհեղափոխական շրջանում նույնպես եղան մի քանի դրվագներ, որոնցում նախկին իշխող էլիտայի պաշտպանությանը զինվորագրված անհատները հրահրեցին և նպատակաուղղված կերպով շահարկեցին թեման՝ ԼԳԲՏԻՔ մարդկանց հանդեպ ատելության խոսքի մանիպուլյատիվ արշավներ իրականացնելով: Պատանեկան ամառային ճամբարներից մեկի մանկական կառնավալային հանդեսը այս արշավի շրջանակում ներկայացվեց որպես «գեյ պրոպագանդա», և պատանիների բաց դեմքերով դիմահարդարված կերպարների պատկերները թևածեցին ողջ

24. <https://www.opendemocracy.net/od-russia/peter-liakhov-knar-khudoyan/citizens-battling-a-controversial-gold-mining-project-amulsar-armenia>  
25. Երևանյան մի երգիչ իր օգոստոսյան համերգի ֆեյսբուքյան հայտարարությամբ համերգին հրավիրել էր միայն հետերոսեքսուալներին՝ «մնացածների» մուտքը խստիվ արգելելով:  
26. Ամենից վառ օրինակը 2012-ին DIY փաբի պայթեցման արդարացումն էր իշխող ՀՀԿ և պառլամենտական ՀՅԴ կուսակցության հայտնի խոսակների կողմից:

ինտերնետային տարածքով: Երեխաների իրավունքների ոտնահարումը և նրանց թիրախավորման գոհ դարձնելը հետ չի պահում պահպանողական քարոզիչներին մանկապուլացիաներին դիմելու նկրտումներից՝ իբր հենց հանուն նույն այդ երեխաների: Դա լրացուցիչ հնար է հանրության ներսում միջակա թշնամու հիմքով նոր բաժանարար գծեր առաջ բերելու:

Այս արշավները շարունակությունն են Հայաստանի հարավային մարզերից մեկի սահմանամերձ Շուռնուխ գյուղակում քուիր հավաքի մեկնած 9 երիտասարդների հանդեպ օգոստոսի 3-ին կազմակերպած բռնության միջադեպի: Ինչպես հետագայում պարզ դարձավ միջադեպի տուժողների և իրավապաշտպանների հայտարարություններից, համայնքի ղեկավարը մասնակցել և հնարավոր է՝ նույնիսկ կազմակերպել է այս հարձակումը բոլորովին այլ՝ քաղաքական հաշվեհարդարի թաքուն նպատակով:

Գյուղի ընտանիքներից մեկի տանը այդ օրերին հյուրընկալվել էր ընտանիքի ԼԳԲՏԻՔ ակտիվիստ որդին իր 8 հյուրերի հետ: Ուշ երեկոյան նրանց տան վրա հարձակվել են մերձակա Գորիս քաղաքից անձանոթ տղամարդիկ և համայնքի բնակիչներ (հիմնականում կանայք և անչափահասներ), սեռական կողմնորոշմանը հղող հայհոյանքներ և նվաստացուցիչ կոչեր հնչեցրել, սպառնացել և ծեծելով ու քարերով հետապնդելով երիտասարդներին դուրս են քշել համայնքից՝ միջին և թեթև ֆիզիկական վսասվածքներ հասցնելով նրանց:

Թիրախավորված ընտանիքը համայնքում հայտնի է իր ընդդիմադիր կեցվածքով, իսկ որդու սեռական կողմնորոշումը նորություն չէր համայնքի համար: Փոխվել էր այն, որ վերջին շրջանում՝ հեղափոխությունից հետո, ընտանիքի հայրը կազմակերպել է հարևանների ստորագրահավաք, նոր վարչապետին կոլեկտիվ բողոք-դիմում ներկայացրել համայնքի ղեկավարի գործունեության հնարավոր կոռուպ-

ցիոն ռիսկերի մասին: Այս նամակի էլեկտրոնային հասցեի օգտատերը ընտանիքի ԼԳԲՏԻՔ ակտիվիստ որդին էր, որի դեմ էլ կազմակերպվել էր հարձակումը: Գործի առթիվ քրեական գործի հարուցման հապաղումը (հարուցվեց շուրջ քսան օր անց՝ օգոստոսի 22-ին) լրացուցիչ անհանգստությունների առիթ դարձավ իրավապաշտպանների համար:

ԼԳԲՏԻՔ մարդկանց դեմ քարոզարշավներով հանրային կարծիքի բևեռացում կազմակերպող քաղաքականապես շահագրգիռ ուժերը (Քոչարյանի և ՀՀԿ-ի աջակիցները) անշուշտ հենվում են ակտիվ կամ պասիվ հոմոֆոբիայի հանրային գերակայող դիրքորոշումների վրա: Արդյունքում նոր կառավարությունը, որի հիմնական ռեսուրսը հենց հանրային աջակցությունն է, դժվարին երկրնտրանքների առաջ է հայտնվում, թե ինչպես արձագանքել մարդկանց տուժած իրավունքների վերականգնմանը և կրած վնասների փոխհատուցմանը: ԼԳԲՏԻՔ մարդկանց իրավունքների բարձրաձայն պաշտպանությունը ապատեղեկացված և մանկապուլացված հանրային գիտակցության շահարկման ու նոր կառավարության հանդեպ վստահության խաթարման հնարավորություն կարող է դառնալ: Այս մտահոգությունները հասկանալով՝ ՄԻ պաշտպանները մեծ ակնկալիքներ չունեն և դեռևս ուղիղ բարձրաձայն պահանջներ չեն ներկայացնում նոր վարչապետին՝ ժամանակավորապես բավարարվելով փոխվարչապետի կողմից Շուռնուխի դեպքի առնչությամբ բռնությունը մերժող խոսքերով, իրենց ներկայացրած բողոքներին տրված կեսլուծումներով:

Ճիշտ է, ԼԳԲՏԻՔ մարդկանց իրավունքների պաշտպանությանն աջակցող դիրքորոշումը դեռևս պահպանում է հանրային կարծիքի մանիպուլացման իր ներուժը: Մյուս կողմից, սակայն, վարչապետ Փաշինյանի հանդեպ հանրային լայն աջակցությունն ու վստահությունը սեռական կողմնորոշման հիմքով հետապնդման և խտրականության սովետական տրամաբանությունն իր խոսքով կոտրելու հնարավոր-

րությոն է տալիս: Այս անհրաժեշտ քայլը նոր կառավարության համար հիմք կլինի ինստիտուցիոնալ և օրենսդրական լուծումներ մշակելու համար՝ Հայաստանում անխտրական համերաշխության ձևավորման, հավասարության և սոցիալական արդարության հաստատման հեղափոխական շրջադարձում:

Հեղափոխությունն արդեն իսկ փոխել է Հայաստանի հանրային կյանքի և քաղաքականության տրամաբանությունը, ճեղքել է կեղծիքն ու մանիպուլյացիան: Այն հարցադրել է գերհարստացումը աղքատացող մարդկանց կողքին, ազատ տարածքներ ձևավորել քաղաքական դաշտում: Այս բացված տարածքները, սակայն, խնամքով վերաբերմունքի կարիք ունեն: Դրանք հավասարության ու սոցիալական արդարության առավել հստակ ձևակերպված և հետևողական քաղաքականություններով չլցվելու դեպքում ի զորու են ծնել նախկինից էլ առավել պահպանողական, ավտորիտար ու ծայրահեղական ուժեր:

### 3. Հայկական հեղափոխությունից հետո. քաղաքացիական հասարակության փոփոխվող տարածքը

Հարկ է վերհիշել, որ 2010-ականների շարժումները հողավորում էին ինչպես քաղաքական պահանջներ *հանուն* ավելի շատ ժողովրդավարության, արժանապատվության և սոցիալական արդարության, այնպես էլ ներառում էին բողոքի գործողություններ *ընդդեմ* խստամբերության և անհավասարության (Ishkanian, Glasius 2018): Աշխարհի տարբեր հատվածներում տեղի ունեցող այս շարժումները վերլուծող հեղինակներից շատերը պնդում են, որ այս ընդվզումները զայրոյթի արտահայտություն էին և արտացոլում էին ժողովրդավարության, սոցիալական արդարության և արժանապատվության պակասի շուրջ աճող մտահոգություններ (Kaldor և Selchow 2012, Glasius և Pleyers 2013, Tejerina և այլք 2013, Della Porta 2015)՝ հանդիսանալով բեկումնային պահ դժգոհության (Biekart և Fowler 2013) ու վրդովմունքի (Calhoun 2013) գլոբալացման մեջ:

Այդուհանդերձ, այժմ արդեն ակնհայտ է, որ ակտիվիստների պահանջներն, ինչպես նաև ժողովրդավարության, սոցիալական արդարության և մասնակցության՝ նրանց ըմբռնումներն ու պրակտիկաները, դժվարությամբ են «հոսելու» դեպի դուրս ու վեր՝ փոխակերպելու հասարակությունը և կամ քաղաքական որոշումների կայացումը: Փոխարենը, շատ երկրներում, ինչպես Բրազիլիայում, Հնդկաստանում, Ֆիլիպիններում, Մեծ Բրիտանիայում և ԱՄՆ-ում տեղացիական և աջ թևի պոպուլիստական շարժումները վերելքի գծի վրա են, և մենք ավելի ու ավելի հաճախ ենք լսում ժողովրդավարության ճգնաժամի, մահվան, անկումի կամ դրանից հոգնածության մասին (Keane 2009, Flinders 2016, Plattner 2015, Appadurai 2017), լսում ենք մասնագետ-

ների ու ուսյալների պնդումներն առ այն, որ այժմ ապրում ենք «մեծ ռեգրեսիայի» ժամանակներում (Geiselberger 2017) կամ «գայրույթի ժամանակաշրջանում» (Mishra 2017):

Հայաստանում Թավշյա հեղափոխությունը ի հայտ եկավ այս համաշխարհային իրադարձությունների արանքում: Հայաստանում գործընթացներն, անշուշտ, ձևավորվում են երկրի ուրույն պատմությամբ, սոցիալ-մշակութային գործոններով ու քաղաքական դինամիկայով, սակայն ոչ մի երկիր վակուումում չի գտնվում: Այդ իմաստով օգտակար ենք համարում դիտարկել այլ հետհեղափոխական համատեքստերի փորձը՝ վերլուծելու պետություն-քաղաքացիական հասարակություն հարաբերությունների փոփոխվող դինամիկան ու ժողովրդավարացման, քաղաքացիական ակտիվիզմի և մասնակցության հեռանկարները՝ հեղափոխություններին հաջորդիվ: Այդպիսի համեմատական դիտարկումը մեզ հնարավորություն կընձեռի հաշվի առնել հայաստանյան քաղաքացիական հասարակությանը սպասող ռիսկերը և ապագային ուղղված որոշ առաջարկներ անել:

### **Քաղմակարծության հեռանկարներ**

Տարբեր հետազոտողներ համարում են, որ հետհեղափոխական համատեքստերում քաղաքացիական հասարակությունը միտում ունի թուլանալու: Այսպես, թե՛ 1994 թ. Հարավային Աֆրիկայում ապարտեիդի ռեժիմի անկումը, թե՛ 2000 թ. սերբական հեղափոխությունը, թե՛ Վրաստանում 2003-ի Վարդերի հեղափոխությունը (Broers 2005, Muskhelishvili, Jorjoliani 2009, Grodsky 2012) և կամ Ուկրաինայում 2004 թ. Նարնջագույն հեղափոխությունը (Laverty 2008, Lutsevych 2013) դիտարկելու դեպքում գտնելու ենք զարգացման համանման նմուշներ (Broers 2005, Danković և Pickering 2017, Grodsky 2012, Laverty 2008, Leonard 2014, Lutsevych 2013, Muskhelishvili և Jorjoliani 2009): Մի կողմից հետհեղափոխա-

կան համատեքստերում քաղաքացիական հասարակությունը թուլանում է «կրճատված բազմակարծության» բերումով (Laverty 2008), որոնցում ընդդիմադիր գործիչների շարքն ավելի փոքր է: Մյուս կողմից հետազոտողները մատնանշում են պետության կողմից քաղաքացիական հասարակության «գրավումը» (կամ մեկ այլ ձևակերպմամբ՝ քաղաքացիական հասարակության կողմից պետության «գրավումը»), որի դեպքում «քաղաքացիական և քաղաքական հասարակությունների» միջև դաշնակցության ավելացումը կարող է բերել «այն [քաղաքացիական] ինստիտուտների թուլացմանը, որոնք ունակ են կառավարությանը հաշվետու պահել» (Broers 2005: 347):

Չնայած կառավարությունում ավելի մեծ ընդգրկվածությունը և վերջինիս հասանելի դառնալը պոտենցիալ օգուտներ է պարունակում քաղաքացիական հասարակության ակտիվների համար, մյուս կողմից կա նաև վտանգ՝ դառնալու չափազանց մոտ հարմարավետ լինելու համար: Այսպես, Վարդերի հեղափոխությունից հետո Վրաստանի կառավարություն անցած նախկին քաղաքացիական հասարակության գործիչները հայտնվեցին իրավիճակում, որում ստիպված էին «գործ ունենալ նոր (ընտրա)զանգվածների հետ ու նոր նպատակներ ընդունել» և «առաջնահերթություն տալ ինստիտուցիոնալ նպատակներին», ինչն իր հերթին լարվածություն էր ստեղծում նոր կառավարության այդ ներկայացուցիչների և նրանց նախկին կազմակերպությունների միջև: Կառավարությունում հայտնված նախկին քաղաքացիական ակտիվիստների մի մասը պնդում էին, որ իրենց «դավաճանված» էին զգում նախկին գործընկերների կողմից (Grodsky 2012: 1702):

2018-ի մայիսից ի վեր քաղաքացիական հասարակության շատ ակտիվիստներ պաշտոններ են ստանձնել վարչապետ

Նիկոլ Փաշինյանի նոր կառավարությունում: Շատ ուրիշներն էլ այժմ միացել են քաղաքական կուսակցությունների՝ Փաշինյանի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը կամ «Քաղաքացու որոշում» ՍԴԿ-ին, իսկ 2018 թ. դեկտեմբերի 9-ին կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքում նրանցից շատերն էլ ընտրվել են՝ ծառայելու Ազգային ժողովում: Որոշ տեսակետների համաձայն՝ քաղաքական գործիչներ դարձած այս քաղաքացիական ակտիվիստներն այդպիսով կարող են ներսից ազդել կառավարության քաղաքականության վրա: Ավելի զգուշավոր տեսակետների համաձայն՝ մտավախություն կա, որ քաղաքացիական գործիչների ներհուսքը դեպի պետական հաստատություններ ու կառավարություն կարող է (վերը քննարկված այլ հետհեղափոխական համատեքստերի փորձի համանմանությամբ) իրականում հանգեցնել պետության կողմից քաղաքացիական հասարակության կոռուպցիայի և նվազեցնել վերջինիս շահապաշտպանական և կառավարություն հաշվետու պահելու կարողությունները:

Դեռևս շատ վաղ է ասել, թե ինչպես կզարգանան պետություն-քաղաքացիական հասարակություն հարաբերությունները Հայաստանում, սակայն երկրում ժողովրդավարության առաջխաղացման համար կարևոր է, որ նոր կառավարությունը պաշտպանի և պահպանի քաղաքացիական հասարակության գործունեության տարածքը: Ավելին, քաղաքականությունների գործընթացում (և՛ դրանց ձևակերպման, և՛ իրականացման փուլերում) քաղաքացիական հասարակության մասնակցության առումով կառավարությունը պետք է ունկնդիր լինի և ներգրավի ՔՀ բոլոր հատվածներին՝ ներառյալ արմատական և քննադատական դիրք ունեցող ակտիվիստներին՝ միայն հոժար, «համատեղելի» և զիջող դիրքավորում ունեցողների հետ գործ ունենալու փոխարեն: Արդեն իսկ գրանցվել է միջադեպ, երբ Ամուլսարի հանքի մոտ շուրջօրյա հերթապահություն իրականացնող բնապահպան ցուցարարներին ֆիզիկապես թույլ չեն տվել ներկա գտնվել

Բնապահպանության նախարարության կազմակերպած մամուլի ասուլիսին<sup>1</sup>:

**Արմատական ընդդիմությունից դեպի բարեփոխական կոնսենսուս**

Երկրորդ գործոնն այն է, որ հետհեղափոխական համատեքստերն առաջ են բերում ավելի մեծ սպասելիքներ նոր ղեկավարությունից, որոնք հեշտ չէ իրագործել կարճ ժամանակահատվածում, իսկ երբեմն անգամ երկարաժամկետ կտրվածքով: Հայաստանի դեպքում նոր կառավարությունը 2018-ի մայիսին իշխանությունը ստանձնելուց շատ չանցած սկսեց մեղադրանքներ առաջադրել բարձրաստիճան անձանց, այդ թվում՝ քաղաքական գործիչների և այլոց (օրինակ՝ ՀՀ նախկին նախագահ Սերժ Սարգսյանի եղբոր և եղբորորդիների) նկատմամբ՝ կոռուպցիայի և իշխանության չարաշահման հատկանիշներով: Սա զարմանալի չէ՝ հաշվի առնելով, թե ինչպես էր ներկայիս վարչապետ Փաշինյանը դեռ ԱԺ-ում իր պատգամավորության օրոք հաճախ պախարակում աճող կոռուպցիան և ՀՀԿ-ամերձ օլիգարխների իշխանությունը, որոնք ի հայտ էին եկել ԽՍՀՄ փլուզումից հետո սկսված սեփականաշնորհման գործընթացում:

Հեղափոխության ընթացքում Փաշինյանի՝ Սերժ Սարգսյանի հրաժարականի և օլիգարխիկ իշխանությունը, կոռուպցիան ու անպատժելիությունը վերացնելու վերաբերյալ պահանջները լայնորեն արձագանքվեցին ստատուս քվոյից հոգնած շատ ՀՀ քաղաքացիների շրջանում: Այնուհանդերձ, մի բան է կոռուպցիայի դեմ արտահայտվելը, մեկ այլ բան՝ դրա դեմ պայքարը գլուխ բերելը: Համանմանորեն, թեև Փաշինյանը բազմիցս խոսել է Հայաստանում աղքատությունը հաղթահարելու անհրաժեշտության մասին, սակայն հստակ է, որ

1. <https://bit.ly/2FBw09Z>

հեշտ չի լինելու աղքատությունը նվազեցնել կամ հասցեագրել աճող անհավասարության խնդիրները՝ առանց երկրի տնտեսական ու սոցիալական քաղաքականությունների ներկայիս մոդելները վերանայելու: Ներկայումս նշաններ չկան, որ Փաշինյանը կամ Քաղաքացիական պայմանագիր կուսակցությունը պատրաստվում են հրաժարվել 1991-ից հետո ներթափանցած նորազատական քաղաքականություններից և ընդունել սոցիալ-դեմոկրատական քաղաքականություններ, որոնք կներառեն սոցիալական ապահովությանն ուղղված ծախսերի մեծացում և վերաբաշխական ու պրոգրեսիվ հարկային մոտեցումներ:

Կրկին դիմելով պատմական ու համեմատական գրականությանը՝ հստակ է, որ բացի այն վտանգներից, որ առաջ է քաշում քաղաքացիական հասարակության պետական «գրավումը», հետհեղափոխական համատեքստերում դժգոհության կարող է հանգեցնել նաև նորազատական քաղաքականությունների դիմադրողականությունը: Այսպես, համաձայն Մուսխելիշվիլիի և Ջորջոլիանիի՝ Վրաստանում «ժողովրդավարության անկումը հետհեղափոխական կառավարման մեջ» պայմանավորված չէր հենց միայն պետության կողմից քաղաքացիական հասարակության զավթումով կամ Սահակաշվիլիի կենտրոնացված, պոպուլիստական և կամայական ղեկավարմամբ (այսինքն՝ նվազած բազմակարծությամբ): Փոխարենը նրանք Սահակաշվիլիի տապալմանը հանգեցրած առանցքային գործոն են համարում նրա կառավարության «գաղափարաբանական՝ նորազատական և անգամ լիբերտար դիրքավորումները, որ հենք եղան նոր բարեփոխական ռազմավարություններին» (Muskhelishvili և Jorjoliani 2009: 694):

Նույն կերպ, Հարավային Աֆրիկայում ապարտեիդի անկումից և Նելսոն Մանդելայի ընտրությունից հետո Աֆրիկյան ազգային կոնգրեսը (ԱԱԿ) սուղ հնարավորություններ ուներ՝ երես թեքելու նորազատական քաղաքականություններ

րից, որոնց նպաստում էին ապարտեիդի ավարտից հետո երկիրն առատորեն մուտք գործած երկկողմանի և բազմակողմ օժանդակության զորեղ կառույցները: Մինչդեռ դոնորային օգնության պակաս չկար, «դժվար էր ձևակերպել նոր արմատական տեսլական» և «վիճարկել նորազատական համակարգը» (Leonard 2014: 381): Այս համատեքստում որոշ ՔՀԿ-ներ, որոնք մտերիմ հարաբերություններ ունեին դոնորների և ԱԱԿ կառավարության հետ, բայց որոնք չէին համարվում ներքևի, տեղային քաղաքացիական ուժերին հաշվետու, անկարող (կամ դժկամ) գտնվեցին «մարգինալացվածների մտահոգությունները առաջ տանելու համար քաղաքական հանրության վրա ազդեցություն գործադրել» (Leonard 2014: 385): Սա բերեց Հարավային Աֆրիկայում քաղաքացիական հասարակության ճեղքմանը երկու տիպի՝ առավել հոժար և առավել արմատական կազմակերպությունների: Քաղաքացիական հասարակության այսպիսի տարաբաժանումն ամենևին բնորոշ չէ միայն Հարավային Աֆրիկային: Իսկապես, շատ երկրներում և նաև Հայաստանում (Ishkanian 2015) տեղի է ունեցել ու շարունակում է ունենալ քաղաքացիական հասարակության խմբերի մասնատում և հետզհետե ավելացող քննադատություն այն ՔՀԿ-ների հասցեին, որոնք «չափազանց մոտ» են դառնում դոնորներին և կառավարություններին՝ այդպիսով տանուլ տալով առավել արմատական դիրքեր և քննադատություն առաջ տանելու իրենց ունակությունը (Banks, Hulme և Edwards 2015, Glasius և Ishkanian 2015, Lutsevych 2013, Eikenberry 2009): Իհարկե, կարելի է նաև պնդել, որ կազմակերպությունների բազմազանությունը առողջ քաղաքացիական հասարակության առանցքային բնութագրիչ է:

Մինչև վերջերս Հայաստանի ձախական կողմնորոշման քաղաքացիական հասարակության ակտիվիստները տեսադաշտում են պահել և առաջ մղել երկրում նորազատական քաղաքականությունների քննադատությունը՝ ցուցանելով



դրանց ազդեցությունն աճող աղքատության ու անհավասարության վրա: Այս ակտիվիստները, սակայն, մեծ զանգված չեն կազմում ու մեծ հաշվով շարունակում են մարզինալացված մնալ: Սրա վկայությունն են նաև այն փոքրաթիվ քվեները, որ հավաքեց նոր ձևավորված սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը՝ Քաղաքացու որոշումը, դեկտեմբերի 9-ի խորհրդարանական ընտրություններին: Ամուլսարի ոսկու հանքի դեպքը հաճախ շրջանակվում է որպես առանցքային օրինակը նրա, թե ինչպես են նորազատական քաղաքականությունները և տրամաբանությունը, որոնցում օտարերկրյա ներդրողների և կորպորացիաների շահերը վեր են դասված շրջակա միջավայրի, ինչպես նաև Հայաստանի քաղաքացիների առողջության ու բարեկեցության համեմատ, շարունակում գերիշխել քաղաքական մտածողության մեջ: Որոշները Ամուլսարի ապագայի համար մղվող պայքարը բնութագրում են որպես հետհեղափոխական կառավարության «առաջին խոշոր ճգնաժամը» (Liakhov և Khudoyan 2018): Այս վերլուծությունը գրելու դրությամբ (դեկտեմբեր 2018) հանքի շուրջ իրավիճակը մնում է չհանգուցալուծված: Առաջիկա ամիսներին կարևոր կլինի դիտարկել՝ արդյոք հանքարդյունաբերական ընկերության պահանջներն ու շահերն իրենց կարևորությամբ կգերազանցեն հանքին մոտ ապրող տեղի բնակիչների, ինչպես նաև Հայաստանի և սփյուռքի այլ հատվածների բնապահպանական ակտիվիստների մտահոգություններին, որոնք բարձրաձայնել են Ամուլսարի հանքով առաջ բերվող ռիսկերը բնական միջավայրի և ազդակիր համայնքների առողջության, անվտանգության և բարեկեցության համար: Եթե, այդուհանդերձ, ակտիվիստների ձայներն անտեսվեն, ինչպես վերը նկարագրված՝ նոյեմբերին տեղի ունեցած միջադեպում, ապա դա լավ բան չի գուշակում քաղաքացիական հասարակություն-պետություն հարաբերությունների ապագայի համար:

Նորազատականության՝ ողջ աշխարհում կայունության

կամ դիմադրողականության (resilience) մասին գրող մասնագետները պնդում են, որ քաղաքացիական հասարակության ակտորները և հատկապես սոցիալական շարժումները կարևոր դեր ունեն կատարելու՝ նորազատական գաղափարների և քաղաքականությունների մարտահրավերները հողավորելու առումով: Քրաուչը (Crouch) հղում է քաղաքացիական հասարակությանը՝ որպես «չորրորդ ուժի», որը «պետության, շուկայի և կորպորացիայի փոխառճակատման եռանկյունուց» անդին է, և որը կարող է «քննադատել, գրոհել, և մերկացնել այս հարմարավետ եռանկյունու սխալներն ու չարաշահումները» (Crouch 2011: x): Քրաուչն, իհարկե, այնքան հեռուն չի գնում, որպեսզի պնդի, թե «քաղաքացիական հասարակության զբաղված, բայց ցածր ձայները» կկարողանան ստեղծել «կորպորացիաների գերիշխման վրա հիմնված կապիտալիզմից տարբերվող սոցիալական կարգ», բայց տեսնում է քաղաքացիական հասարակության հնարավորությունը՝ «կյանքը դարձնելու շատ ավելի բարվոք, քան այն կլիներ պետությունների ու կորպորացիաների հույսին թողնվելու դեպքում» (Crouch, 2011: x): Փեկը (Peck) և այլք նույնպես տեսնում են հնարավորություններ սոցիալական շարժումների համար, սակայն ընդունում են, որ դժվար է վերցնել «տեղական և օրգանական նախաձեռնությունները, «ներքևից» սկիզբ առած նորարարությունն ու սոցիալականում ներկառուցված ռազմավարությունները» և տեղափոխել դրանք «այլ տեղեր»՝ նորազատականության դեմ գլոբալացված դիմադրություն ձևավորելու համար (Peck, Theodore, Brenner 2012: 27): Թեոչերն ու Շմիդտը նշում են, որ դեռևս նորազատականության վերելքին դիմագրավող համապարփակ հակա-շարժում չի եղել, սակայն հուսադրում են, որ թերևս «նոր գաղափարներ» ու «շահերի կոալիցիաներ» ի հայտ կգան (Thatcher, Schmidt 2013: 421) և «սոցիալական շարժումները» բնորոշում են որպես «նորազատական գաղափարներից հեռանալու ցուցիչ՝ երբևէ արված ամենախոշոր քայլի՝ առնվազն քաղաքական դիս-

կուրսի մակարդակում» (Thatcher, Schmidt 2013: 426):

Այսպիսով՝ սոցիալական արդարությանն առաջնահերթություն տվող քաղաքականությունները առաջ մղելու հեռանկարի տեսանկյունից կարևոր է լինելու ապահովել Հայաստանում քաղաքացիական հասարակության տարածքը: Շատ քաղաքացիական ակտիվիստներ հարցազրույցներում մեզ հայտնում էին, որ այդ պահին ձեռնպահ են մնում չափազանց քննադատական լինելուց՝ սպասելով մինչև նոր կառավարությունն ավելի կոնսոլիդացված կդառնա: Այդուհանդերձ, նրանք նաև մատնանշում են, որ այսպիսի «լարվածության թուլացումը» հավերժ չէ, և որ նոր կառավարությունը պետք է բաց լինի՝ քաղաքացիական հասարակության կողմից քննադատություն ստանալու և նրա առջև հաշվետու լինելու համար: Սա նշանակելու է, որ կառավարությունն ապահովում է տեղ ու տարածք իրական մասնակցության և խորհրդակցության համար՝ տուրք չտալով ընդամենը ձևական համապատասխանության, որի դեպքում կներգրավվեն միայն չբողոքող, կոնֆորմիստ քաղաքացիական հասարակության խմբեր: Կառավարությունը պետք է նաև երաշխավորի Հայաստանի Հանրապետության **բոլոր** քաղաքացիների մասնակցության ու խոսքի ազատությունը՝ արժևորելով, հարգելով ու առաջ մղելով անհատների իրավունքներն ու արժանապատվությունն՝ անկախ սեռից, սեռական կողմնորոշումից, հաշմանդամությունից, ազգային կամ կրոնական պատկանելությունից: Եվ վերջապես, կարևոր կլինի ազատ ու անկախ մամուլ ունենալը, որն ապացուցել է իր առանցքային դերը ժողովրդավարության և օրենքի գերակայության գործում (Themudo 2013): Բոլոր նշված գործոնները վճռական դեր կունենան նրանում, թե ինչպես հեղափոխությունից հետո Հայաստանում կզարգանան քաղաքացիական հասարակություն-պետություն հարաբերությունները: Քաղաքացիական հասարակությունը կարող է հույսով լի լինել, բայց հարկավոր կլինի նաև զգոն մնալ:

## 4. Ամփոփում. առաջարկներ և հետագա անելիքներ

Դիտարկելով հայկական հեղափոխությունը որպես երկրում ժողովրդավարացման հուսադրող նշան՝ միևնույն ժամանակ կարևոր է հիշել, որ դեռ շատ անելիքներ կան: Եվ չնայած քաղաքական կանխատեսումներ և անգամ իրավիճակի սահմանումներ տալը վերջին ամիսների ծայրահեղ փոփոխական ու դինամիկ քաղաքական իրականության մեջ գրեթե անհնաստ ձեռնարկ է դարձել, այնուամենայնիվ կարելի է ակնկալել, որ շուտով այդ դինամիզմը կնվազի՝ իր տեղը զիջելով ինստիտուցիոնալացման գործընթացներին: Եվ այդ համատեքստում է, որ որոշ առաջարկներ կարող են դառնալ քաղաքացիական հասարակության (չ)անելիքների կարևոր հիշեցումներ: Զեկույցի տարբեր հատվածներ արդեն իսկ պարունակում են հետագա քայլերի վերաբերյալ քննարկում և առաջարկներ: Ստորև հակիրճ կերպով դրանք ի մի ենք բերել:

- *Քաղաքացիական հասարակություն-կառավարություն հարաբերությունների ինստիտուցիոնալացում՝ վստահության ցանցերի վրա հիմնվելու փոխարեն*

Շարունակվող հեղափոխությունը ՔՀ համար նոր քաղաքական մարմնի հետ գործ ունենալու դժվարին փուլ է: Հավասարակշռման նրբին ու բարդ գործողություն է՝ մի կողմից խուսափել կառավարության հետ չափազանց մերձեցումից կամ դրա կողմից կոռուպցիոնացման և միաժամանակ երկրի սոցիալ-քաղաքական վերամտածումի գործընթացից դուրս մնալու չափ չդիստանցվել: Ցանկացած դեպքում կառավարության հետ զգոն և «գոլ» լինելը էական կմնա մոտ ապագայում, ինչպես վկայում է հենց ՔՀ ներկայացուցիչների

կողմից հաճախ մեջբերվող վրացական փորձը: Հարցազրույցների մասնակիցներն իրենք իսկ հակված էին վերհիշել այդ և համանման այլ փորձերը՝ որպես կառավարության հետ վտանգավոր՝ հեղափոխական ձեռքբերումները չեղարկող ճուլման հետևանքների մասին զգուշացնող դաս, որը պետք է հաշվի առնել՝ անկախ այս հեղափոխության առանձնահատկություններից:

Ինչևէ, քաղաքացիական հասարակության վերադիրքավորումը հստակ գծված ու ֆիզիկապես պատկերացնելի գործընթաց չէ: Հավանական է, որ խորհրդարանական ընտրություններին հաջորդի քաղաքացիական հասարակության և գործակցող, և առճակատվող սեզմենտների վերաձևավորումը, և երկուսն էլ մեծ հաշվով կարող են ֆունկցիոնալ ու անհրաժեշտ լինել առանցքային խնդիրների հասցեագրման մեջ: Ուստի սա նաև գործողությունների և հարաբերությունների բազմազանեցման և ոչ անպայմանորեն փակուղու իրավիճակ է: Ի հավելումն, մինչդեռ որոշ ձախականության հարող ՔՀ անդամներ ու ակտիվիստներ կշարժվեն դեպի նոր ձևավորվող ընդդիմադիր կուսակցություններ (ինչպես օրինակ՝ Քաղաքացու որոշում սոցիալ-դեմոկրատական կուսակցության դեպքում), շատ ուրիշների համար կարևոր կմնա ինստիտուցիոնալ քաղաքականությունից դուրս մնալն ու ուժեղ (և ձախ) կողմ պաշտպանելը քաղաքականությունների վրա ազդելիս:

- *Քննադատության լեզվի և հարթակների ձևավորում ու զարգացում*

Քաղաքացիական հասարակություն-պետություն հարաբերությունների՝ վերը նկարագրված հարցում ոսկե միջին դիրք պահպանելու մասին անորոշ խոսակցության փոխարեն կարծես ժամանակն է երկխոսության նոր տարածքներ ստեղծելու ուղղությամբ գործողությունների: Քննադատության՝ այսօր պակասող լեզուն և հարթակները ձևավորելն

անհրաժեշտ կլինի դժվար, այդ թվում՝ տաքուացված թեմաները և հանրային դիսկուրսի, և կառավարության օրակարգի դաշտ բերելու համար: Քննադատության եղած փորձը, որը նախորդ ռեժիմի դեպքում մեծամասամբ եղել է հակազդողական, չխնայող և ընդվզման ոգով, նոր իրավիճակում ավելի հստակ է գիտակցվում որպես անբավարար ու ժամանակավրեպ: Ասվածը ենթադրում է սուր, սակայն կառուցողական քննադատության ավանդույթի ձևավորում հայաստանյան քաղաքացիական, քաղաքական և նաև ակադեմիական դիսկուրսում, որն իր հերթին ենթադրում է այլընտրանքային գիտահետազոտական և կրթական հարթակների ու ցանցերի գործարկում: Սա կարող է ընդլայնել ինչպես քաղաքացիական գործողության, այնպես էլ սոցիալական մտքի տարածությունը, որոնք հետագայում կարող են նաև դառնալ հանրության լայն շրջաններին մատչելի ու հասկանալի գիտելիք՝ քաղաքացիական կրթությանն ի նպաստ:

- *Ֆինանսավորման սխեմաների աղբյուրների բազմազանեցման և ՔՀ-դոնոր հարաբերությունների վերանայման կարիք*

Որպեսզի առաջադեմ ՔՀ գործիչները կարողանան մասնակցել սոցիալ-քաղաքական օրակարգի ձևավորմանը սեփական և առավել պրոակտիվ դիրքերից, կարևոր կլինի հնարավորի սահմաններում վերանայել ՔՀ-ների դոնորական ֆինանսավորման ձևերն ու սկզբունքները, կազմակերպություններին ընձեռել ազատության հնարավորություն՝ առաջնահերթություններն ըստ գնահատված և վերանայվող կարիքների ձևավորելու և անհրաժեշտության դեպքում վերանայելու առանցքային ֆինանսավորման (core funding) շրջանակներում: Դոնորների աջակցության մոտեցումներում այդպիսի փոփոխությունը ՔՀ-ին թույլ կտա առավել արդյունավետորեն արձագանքել նոր ձևավորվող սոցի-

ալական իրողություններին՝ սոցիալ-քաղաքական կյանքի այս դինամիկ փոփոխական փուլում, որը միտում ունի դեռ շարունակվելու: Ի հավելումն, ճիշտ ժամանակն է թվում նաև վերամտածել ՔՀ տարածքում հարաբերություններն ու սուբյեկտ-մասնակիցներին՝ բացելով դաշտը նոր ձևավորված ակտիվ ուսանողական խմբերի, տեղական համայնքային խմբերի, արհեստակցական միությունների համար՝ տարբեր գործընթացներում նրանց ավելի ընդլայնված մասնակցությամբ:

Ի վերջո, եթե ներկայումս տեղի ունեցածի մասին պնդում ենք որպես խոշոր սոցիալական փոփոխություն և ոչ պարզապես իշխանափոխություն, ապա բոլոր կարևոր ինստիտուտներն ու հարաբերությունները ենթադրաբար պետք է փոխակերպում ապրեն՝ բացառություն չանելով հենց քաղաքացիական հասարակության համար: Սա կարող է նշանակել ՔՀ կերպի էական փոփոխություն, որի դեպքում անցնում ենք ՔՀ՝ որպես որոշակի, հատուկ խմբերի մասին առավել նեղ բնորոշումից դեպի դրա առավել լայն ըմբռնումը՝ որպես տեղեկացված/կրթված քաղաքացիություն: Հեղափոխության օրերին համազգային մասնակցությունը այդպիսի հնարավորության վկայությունը եղավ: Այդ մասնակցությունը հետհեղափոխական իրավիճակում քաղաքացու առօրյա գործողություններում ու մտածողությունում ամրապնդվելու կարիք ունի, քանի դեռ այդ քաղաքացին կրկին չի դարձել հարմարավետորեն պասիվ՝ պարզապես ապավինելով կառավարությանը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ժամակոչյան, Աննա. 2016. «Հայաստանը «ազգային միասնության» թակարդում», Փոփոխության որոնումներում, 9-40 էջեր. Երևան: Սոցիոսկոպ. <http://socioscope.am/archives/779>

Իշխանյան, Ա., Գյուլխանդանյան, Է., Մանուսյան, Ա., Մանուսյան, Ս. 2013 Քաղաքացիական հասարակությունը, զարգացումը և բնապահպանական ակտիվիզմը Հայաստանում. Երևան: Սոցիոսկոպ

Պայքարի փորձ[եր]. 2016. Հոդվածների ժողովածու. Երևան: Սոցիոսկոպ

Appadurai, Arjun. 2017. 'Democracy fatigue.' In: *The Great Regression* edited by Heinrich Geiselberger, 1-12. Cambridge: Polity.

Banks, Nicola, David Hulme, and Edwards, Edwards. 2015. 'NGOs, States, and Donors Revisited: Still Too Close for Comfort.' *World Development* 66:717-718. <https://www.palgrave.com/gb/book/9781137355140>

Biekart, Kees, and Alan Fowler. 2013. 'Transforming Activisms 2010+: Exploring Ways and Waves.' *Development and Change* 44 (3):527-546.

Broers, Laurence. 2005. 'After the 'revolution': civil society and the challenges of consolidating democracy in Georgia.' *Central Asian Survey* 24 (3):333-350.

Calhoun, Craig. 2013. 'Occupy Wall Street in perspective.' *British Journal of Sociology* 64 (1):26-38.

Crouch, Colin. 2011. *The Strange Non-Death of Neoliberalism* Cambridge: Polity Press.

Danković, Sladjana, and Paula M Pickering. 2017. 'Public scepticism of internationally supported civil society organisations: norms, citizen priorities, and local groups in post-socialist Serbia.' *East European Politics*, 33 (2):210-232.

Della Porta, Donatella. 2015. *Social Movements in Times of Austerity*. Cambridge: Polity Press.

Eikenberry, Angela. 2009. 'Refusing the Market: A Democratic Discourse for Voluntary and Nonprofit Organizations.' *Nonprofit and Voluntary Sector Quarterly* 38 (4):582-596.

Ferguson, James. 1994. *The Anti-Politics Machine: Development, Depoliticization and Bureaucratic Power in Lesotho*. Minneapolis: University of Minnesota

Flinders, Matthew. 2016. 'The Problem with Democracy.' *Parliamentary Affairs* 69 (2):181-203.

Geiselberger, Heinrich, ed. 2017. *The Great Regression*. Cambridge: Polity.

Glasius, Marlies, and Armine Ishkanian. 2015. 'Surreptitious Symbiosis: Engagement between activists and NGOs.' *Voluntas* 26 (6):2620-2644. <https://link.springer.com/article/10.1007%2Fs11266-014-9531-5>

Glasius, Marlies, and Geoffrey Pleyers. 2013. 'The Global Moment of 2011: Democracy, Social Justice and Dignity.'

*Development and Change* 44 (3):547-567.

Grodsky, Brian. 2012. 'Co-optation or Empowerment? The Fate of Pro-Democracy NGOs after the Rose Revolution.' *Europe-Asia Studies* 64 (9):1684-1708.

Howell, Jude and Pearce, Jenny. 2002. *Civil Society and Development: A Critical Exploration*. Boulder, CO: Lynne Rienner.

Human Rights House Yerevan. Annual Report-2017. Yerevan, 2018. <https://humanrightshouse.org/wp-content/uploads/2018/06/Human-Rights-House-Foundation-Annual-Report-2017.pdf>

Ishkanian, Armine. 2008. *Democracy Building and Civil Society in Post-Soviet Armenia*. London and New York: Routledge.

Ishkanian, A., Gyulkhandanyan, E., Manusyan, A. & Manusyan, S. 2013. *Civil society, development and environmental activism in Armenia*. City Print House, Yerevan, Armenia. <http://eprints.lse.ac.uk/54755/>.

Ishkanian, Armine. 2015. 'Self-Determined Citizens? New Forms of Civic Activism and Citizenship in Armenia.' *Europe-Asia Studies* 67 (8):1203-1227.

Ishkanian, Armine, and Marlies Glasius. 2018. 'Resisting neoliberalism? Movements against austerity and for democracy in Cairo, Athens and London.' *Critical Social Policy* online first 1-20.

Kaldor, Mary, and Sabine Selchow. 2012. *The 'Bubbling Up' of Subterranean Politics in Europe*. Civil Society and Human Security Research Unit, London School of Economics.

Keane, John. 2009. *The Life and Death of Democracy*. New York: Simon & Schuster.

Laverty, Nicklaus. 2008. 'The Problem of Lasting Change: Civil

Society and the Colored Revolutions in Georgia and Ukraine.' *Demokratizatsiya* 16 (2):143-161.

Leonard, Llewellyn. 2014. 'Characterising civil society and the challenges in post-apartheid South Africa.' *Social Dynamics: A journal of African studies* 40 (2):371-391.

Liakhov, Peter, and Knar Khudoyan. 2018. 'How citizens battling a controversial gold mining project are testing Armenia's new democracy.' Last Modified 7 August 2018. <https://www.opendemocracy.net/od-russia/peter-liakhov-knar-khudoyan/citizens-battling-a-controversial-gold-mining-project-amulsar-armenia>.

Lutsevych, Olga. 2013. *How to Finish a Revolution: Civil Society and Democracy in Georgia, Moldova and Ukraine*. London: Chatham House.

Mishra, Pankaj. 2017. *The Age of Anger: A History of the Present*. London: Penguin.

Muskhelishvili, Marina, and Gia Jorjoliani. 2009. 'Georgia's ongoing struggle for a better future continued: democracy promotion through civil society development.' *Democratization* 16 (4):682-708.

Peck, Jamie, Nik Theodore, and Neil Brenner. 2012. 'Neoliberalism, interrupted.' In *Neoliberalism: Beyond the Free Market*, edited by Damien Cahill, Lindy Edwards and Frank Stillwell, 15-30. Cheltenham: Edward Elgar.

Plattner, Marc F. 2015. 'Is Democracy in Decline.' *Journal of Democracy* 26 (1):5-10.

Struggle Experience[s] (in Armenian - "Payqari Pordzer") 2016. *Collection of Papers*. Yerevan: Socioscope.

Tarrow, Sidney. 2011. *Power in Movement: Social Movements*

*and Contentious Politics*. Cambridge: Cambridge University Press.

Tejerina, Benjamin, Ignacia Perugorria, Tova Benski, and Lauren Langman. 2013. 'From indignation to occupation: A new wave of global mobilization.' *Current Sociology* 61 (4):377-392.

Thatcher, Mark, and Vivien A. Schmidt. 2013. 'Conclusion: Explaining the resilience of neo-liberalism and possible pathways out.' In *Resilient Liberalism in Europe's Political Economy*, edited by Vivien A. Schmidt and Mark Thatcher, 403-431. Cheltenham: Edward Elgar.

Themudo, Nuno. 2013. 'Reassessing the impact of civil society: nonprofit sector, press freedom, and corruption.' *Governance* 26 (1):63-81.

Youngs, Richard, and Ana Echague. 2017. 'Shrinking space for civil society: the EU response'. Directorate General for External Policy Department Accessed 20 November 2018. [http://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2017/578039/EXPO\\_STU\(2017\)578039\\_EN.pdf](http://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2017/578039/EXPO_STU(2017)578039_EN.pdf).

Zhamakochyan, Anna. 2016. 'Armenia in the Trap of "National Unity"'. In *Quest for Change (in Armenian - "Popokhutyan Voronumner")*, 9-39. Yerevan: Socioscope.